ՄԵՆՔ ԱՅՍՏԵՂ ԵՆՔ

Հայաստանում փախստականների շրջանում գենդերային հիմքով բռնության որակական արագ գնահատում

UNFPA

Հեղինակ՝ Միա Կիսիչ,
Գենդերային հիմքով բռնության
հաղթահարմանն ուղղված ծրագրերի փորձագետ, ՄԱԲՀ

Հետազոտությունն իրականացվել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի (ՄԱԲՀ) ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում հեղինակը, և այն կարող է չարտահայտել ՄԱԲՀ-ի տեսակետները:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

3 Հապավումների ցանկ

4 Ամփոփագիր

4 Նախապատմություն

4 Գլխավոր եզրահանգումներ

7 Առաջարկություններ

10 Ներածություն

11 Համատեքստ և նախապատմություն

12 Գնահատման նպատակը, արդիականությունը և շրջանակը

13 Մեթոդաբանական ու տեսական շրջանակ

13 Մեթոդաբանությունն ու մեթոդները

15 Ընտրանքը

15 Ինտերսեկցիոնալությունն ու խոցելի խմբերը

17 Եզրահանգումներ

19 Գենդերային հիմքով բռնություն խրախուսող միջավայրը և դրան նպաստող գործոնները

19 Սոցիալական ինտեգրացիա

25 Աշխատաշուկայի հասանելիությունը

31 Կրթության հասանելիությունը

34 Կենսապայմաններն ու միջավայրը

40 ԳՀԲ քարտեզագրված միտումները

41 Գենդերային հիմքով բռնությունը հակամարտությունների ժամանակ

44 Զուգընկերոջ կողմից բռնությունը

48 Ընտանիքում գենդերային հիմքով բռնության այլ տեսակները

52 Ընտանիքից դուրս տեղի ունեցած գենդերային հիմքով բռնությունը՝ փախստականներին ընդունող համայնքներում

55 Հաղորդում ներկայացնել գենդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ

60 Գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունները

61 ԳՀԲ ծառայություններ ստանալու և մատուցելու դժվարությունները

68 ԳՀԲ ծառայությունները և առկա խնդիրները

74 Ամփոփում

75 Առաջարկություններ

85 Հավելվածներ

85 Եզրաբանական բառարան

93 Գրականության ցանկ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

Առողջապահության համաշխարհային կազմակերպություն	**ԱՀԿ**
Գենդերային հիմքով բռնություն	**ԳՀԲ**
Գենդեր, տարիք և հաշմանդամություն	**ԳՏՀ**
Ընտանեկան բռնություն	**ԸԲ**
Զուգընկերոջ կողմից բռնություն	**ԶԲ**
Հոգեկան առողջության և հոգեսոցիալական ծառայություններ	**ՀԱՀԾ**
Հոգեսոցիալական աջակցություն	**ՀՍԱ**
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ	**ՄԱԲՀ**
Կանայք - ՄԱԿ-ի Գենդերային հավասարության և կանանց հզորացման կառույց	**ՄԱԿ**
ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատար	**ՄԱԿ ՓԳՀ**
ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ	**ՅՈՒՆԻՍԵՖ**
Ոչ պարենային ապրանքներ	**ՈՊԱ**
Պարենի համաշխարհային ծրագիր	**ՊՀԾ**
Ջուր և սանիտարահիգիենիկ պայմաններ	**ՋՍՊ (WASH)**
Սեռական շահագործման և չարաշահման (կանխարգելում)	**ՍՇՉ(Կ)**
Սեռական բռնություն կոնֆլիկտային իրավիճակներում	**ՍԲԿԻ**

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Նախապատմություն

Սույն գնահատումը դիտարկում է Հայաստանում փախստականների շրջանում գենդերային հիմքով բռնության (ԳՀԲ) միտումները և ռիսկերը՝ 2023 թվականի սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղից Հայաստան ավելի քան 100,000 մարդկանց ներհոսքից հետո: Այն նպատակ ունի 142 հարցվածներից (ծառայություններ մատուցողներ, փախստական կանայք և փախստական դեռահաս աղջիկներ) ստացված տեղեկությունների հիման վրա քարտեզագրել ԳՀԲ վերապրածների և ԳՀԲ-ի վտանգի տակ գտնվող կանանց և աղջիկների հիմնական կարիքները, ինչպես նաև կարիքները բավարարելուն ուղղված ծառայությունների բացերը: Տվյալների հավաքագրումը տեղի է ունեցել 2023 թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Ներառվել են հարցվողներ Երևանից և Հայաստանի բոլոր մարզերից:

Գլխավոր եզրահանգումներ

Հայաստանում գտնվող փախստական կանայք և աղջիկները բազմաթիվ մարտահրավերների են հանդիպում՝ սկսած նոր միջավայրին հարմարվելուց, կրթությանը և աշխատաշուկային մասնակցությունից, գենդերային բռնության տարբեր ռիսկերից մինչև ԳՀԲ դեպքում՝ համապատասխան ծառայություններից օգտվելու դժվարություններ: Որպես կին և տեղահանված անձ նրանց առանձնահատուկ փորձառությունը, որին որոշ դեպքերում ավելանում է նաև հաշմանդամություն ունենալը, տնային տնտեսություն գլխավորելը, դեռահաս տարիքը կամ տնտեսապես կախված լինելը, գյուղական և հեռավոր վայրերում ապրելը և այլն, հնարավոր է հասկանալ միայն ինտերսեկցիոնալ դիտանկյունից՝ հաշվի առնելով, թե ինչպես են խոցելիության տարբեր մակարդակներն ավելի ու ավելի մեծացնում վերոնշյալ թիրախ խմբերի ռիսկը գենդերային հիմքով բռնության հանդեպ: Գնահատումը ցույց տվեց, թե ինչպես վերոնշյալ գործոնները, որոնց հաճախ ավելանում է նաև մեկուսացվածությունը, կարող են փախստական կանանց և աղջիկներին դնել գենդերային հիմքով բռնության շարունակական ռիսկի տակ:

Հարցվողները սովորաբար ընդգծում էին մեկուսացածության զգացումը, նշում էին սոցիալական ինտեգրմանը խոչընդոտող բազմաթիվ մարտահրավերներ, հատկապես դեռահաս փախստական աղջիկների համար: Համայնքներում նրանց ստացած տարբեր դաստիարակության և գենդերային դերերի պատճառով փախստական դեռահաս աղջիկները դժվարանում են նոր ծանոթություններ ձեռք բերել և հարմարվել նոր միջավայրին: Սա հետագայում ազդում է կրթության ոլոտում նրանց մասնակցության վրա. մի շարք աղջիկներ նախընտրում են չշարունակել կրթությունը, քանի որ ցանկանում են գումար վաստակել և օգնել իրենց ընտանիքներին, իսկ դպրոց հաճախողներից շատերն իրենց հասակակիցների հետ չեն կարողանում հաստատել ներդաշնակ փոխհարաբերություններ և ունենում են միայնու-

թյան ճնշող զգացողություն: Կանայք շատ հազվադեպ են նշել, որ միմյանց աջակցելու ցանց են ստեղծել: Նրանք հաճախ ընդհանրապես չեն շփվել տեղի բնակչության հետ և, հազվադեպ են գնացել այնպիսի վայրեր, որտեղ հավաքվում են այլ փախստական կանայք: Մեկուսացման պատճառներից է եղել նաև աշխատաշուկա մուտք գործելու մի շարք խոչընդոտները: Աշխատանք գտնելու դժվարությունների մասին խոսելիս, հարցվողները բարձրաձայնել են հետևյալ խնդիրները՝ գենդերային նորմերը, ընտանիքի կենցաղը հոգալու, տնային տնտեսություններում խնամքի պարտականությունները, ինչպես նաև աշխատաշուկայում մրցունակ լինելու համար անհրաժեշտ հմտությունների և փորձի բացակայությունը: Այս առումով առավել խոցելի են եղել տնային տնտեսությունները գլխավորող կանայք: Եվ վերջապես, նրանց ամենօրյա խնդիրները պայմանավորված են եղել նաև առկա ոչ բավարար կենսապայմաններով: Փախստական կանանց և աղջիկների ներկայացրած խնդիրներից էին բնակության նոր վայրում, տանը մարդաշատ լինելը և սեփական տարածքի բացակայությունը, ջրամատակարարման և սանիտարահիգիենիկ հարմարությունների (WASH) ոչ պատշաճ վիճակը, ինչը ոչ միայն խանգարել է հիգիենայի պահպանմանը, այլև անվտանգային հարցեր է ստեղծել: Խնդիրների շարքում էին բնակավայրում լուսավորության համակարգի բացակայությունը, ինչպես նաև բնակության վայրի հեռու գտնվելը անհրաժեշտ ենթակառուցվածքներից, ինչը ստեղծել է տեղաշարժման սահմանափակումներ, խոչընդոտներ:

Գնահատման արդյունքում բացահայտված՝ գենդերային բռնությանը նպաստող գործոններից բացի, քարտեզագրվել են նաև գենդերային բռնության որոշ առկա դրսևորումներ և միտումներ: Կանայք և աղջիկները բարձրաձայնել են գենդերային հիմքով բռնության մասին, որը տեղի է ունեցել մինչև Հայաստան գալը՝ իրենց համայնքներում՝ սկսած պատերազմի ժամանակ տեղի ունեցած գենդերային հիմքով բռնության դեպքերից մինչև զուգընկերոջ կողմից իրականացված բռնության դեպքեր, որը նկատելի աճել է շրջափակման ընթացքում: Փաստացի այդ կանանց և աղջիկներից շատերը Հայաստան են եկել արդեն, որպես բռնություն վերապրածներ, որոնք ունեն համապատասխան մասնագիտական աջակցության կարիք: Զուգընկերոջ կողմից իրականացված բռնությունը շարունակել է բացասաբար ազդել կին փախստականների վրա նաև տեղահանվելուց հետո: Ինչպես նշել են հարցվածները, այն դրսևորվել է հոգեբանական և ֆիզիկական բռնությամբ, ծառայությունների, հնարավորությունների և ռեսուրսների տրամադրման մերժումով, և ավելի սակավ դեպքերում՝ սեռական բռնությամբ: Թեև բոլոր կանայք գտնվում են գենդերային բռնության այս տեսակի բարձր ռիսկի տակ, հարցվածների շրջանում բացահայտված ամենից խոցելի խումբը՝ մեկուսացված և տնտեսական կախման մեջ գտնվող հարցվածներն էին: Այս առումով ընդգծվել է նաև հաշմանդամություն ունեցող մարդկանց մայրերի կամ խնամող

ների խոցելիությունը: Բարձրաձայնվել է ընտանիքում գենդերային բռնության այլ ձևերի մասին ևս, հատկապես դեռահաս աղջիկների և հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների նկատմամբ (օրինակ՝ ազատ տեղաշարժի սահմանափակում կամ ռեսուրսների և ծառայությունների տրամադրման մերժում): Ընտանիքից դուրս գենդերային բռնության միտումների և դեպքերի մասին հաղորդումները հազվադեպ բնույթ են կրել. դրանք հիմնականում եղել են ոտնձգության դեպքեր հասարակական վայրերում կամ աշխատավայրում: Չնայած հարցազրույցների ընթացքում փախստական կանանց և ծառայություններ մատուցողների կողմից բարձրաձայնվել է գենդերային բռնության բազմաթիվ տեսակների մասին, սակայն գենդերային բռնության մասին հաղորդում չներկայացնելը շարունակում է մնալ ամենակարևոր մարտահրավերը:

Պատճառների մասին խոսելիս հարցվողները նշել են բռնության ենթարկված անձանց ուղեկցող խարանի ու ամոթի, բռնության մասին հաղորդում ներկայացնելու որոշում կայացնելու անվճռականության մասին, որը բնորոշ է իրենց մշակույթին, ինչպես նաև բարձրաձայնել են գենդերային բռնության մասին գիտելիքի պակասի, տնտեսապես անկախ լինելու խնդիրների, և զուգընկերոջ կողմից իրականացված բռնության համատարած նորմալացման ու դրա արդարացման մասին՝ որպես պատերազմով պայմանավորված տրավմայի հետևանք:

Գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող առկա ծառայությունների մատուցման հարցում ևս արձանագրվել են որոշ մարտահրավերներ և բացթողումներ: Մասնավորապես ծառայություն մատուցողների նկատմամբ վստահության և տրամադրվող ծառայությունների վերաբերյալ տեղեկացվածության պակասը, ինչպես նաև դրանց անհասանելիությունը պատճառ է հանդիսանում, որ բռնության դեպքերի մասին քիչ թվով հաղորդումներ ներկայացվեն: Դա հատկապես ազդում է հեռավոր և գյուղական վայրերում ապրող, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների վրա: Երբ խոսքը վերաբերվում է գործող ծառայությունների տեսակներին, թեև կազմակերպությունների մեծամասնությունը տրամադրում է ԳՀԲ ծառայությունների նվազագույն փաթեթ, որոշ ծառայության տեսակներ լրացուցիչ զարգացնելու, բարելավելու կարիք ունեն: Չնայած ԳՀԲ դեպքի վարում իրականացվում է բոլոր մարզերում, դրանք սովորաբար հասանելի չեն գենդերային բռնության ենթարկված բոլոր անձանց համար, քանի որ ներառում են բացառապես ընտանեկան բռնության ենթարկված անձանց: Հոգեկան առողջության և հոգեսոցիալական ծառայություններ (ՀԱՀԾ) տրամադրելիս նախապատվությունը տրվում է խմբային աշխատանքներին, մինչդեռ խորհուրդ է տրվում հզորացնել ՀԱՀԾ մատուցող մասնագետների կարողությունները՝ տրամադրելով խորացված գիտելիքներ գենդերային հիմքով բռնության վերաբերյալ: Ինչպես նաև դեռահաս աղջիկների հետ աշխատելիս հաշվի առնել տարիքային և գենդերային առանձնահատկությունները, որի բաց կա ներկա մատուցվող

ծառայություններում: Անհրաժեշտ է ընդլայնել կարողությունների զարգացմանը և տնտեսական հզորացմանն ուղղված գործողությունները՝ ներառելով դրանց կարիքն ունեցող շահառուներ՝ բոլոր մարզերից ու համայնքներից՝ այսպիսով ապահովելով նրանց համար անհրաժեշտ լրացուցիչ ֆինանսական կամ նյութական աջակցություն: Գենդերային բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող կառույցների կողմից տրամադրվող ոչ պարենային ապրանքները (ՈՊԱ), որոնցից է, օրինակ, անհատական հիգիենայի փաթեթները, հաճախ չեն տրամադրվում այնպիսի հաճախականությամբ, որպեսզի ամբողջապես ապահովեն կանանց և աղջիկների կարիքները, իսկ որոշ դեպքերում էլ ՈՊԱ-ների բաշխման ժամանակ առաջնահերթություն չի տրվում առավել խոցելի բնակչությանը, օրինակ, կին գլխավորով տնային տնտեսություններին: Ինչպես նաև բոլոր ծառայություններ մատուցողները նշում են ֆինանսավորման էական բացի մասին, որն անհրաժեշտ է լուծել, որպեսզի հնարավոր լինի հաղթահարել գնահատման ժամանակ քարտեզագրված բոլոր մարտահրավերները:

Առաջարկություններ

Հիմնվելով հետազոտության արդյունքների վրա՝ այս գնահատման առանցքային շահագրգիռ կողմերի համար կազմվել է առաջարկությունների ցանկ, որը կարելի է դեռ համալրել: Այդ առաջարկություններն ուղղված են հասցեագրելու հարցվածների կողմից բացահայտված խնդիրներն ու կարիքները և նպատակ ունեն բարելավելու ոչ միայն արտակարգ իրավիճակներում մատուցվող ծառայությունները, այլև փախստական բնակչության համար նախատեսված վաղ վերականգնման ու զարգացման ծրագրերը՝ դրանց մասնակից դարձնելով նաև գենդերային բռնության ենթարկված անձանց և հյուրընկալող համայնքներում գենդերային բռնության ռիսկի տակ գտնվող կանանց և աղջիկներին:

Գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողներին՝

1 Ավելացնել կանանց և աղջիկների համար անվտանգ տարածքների, ներառյալ դրանց շարժական տարբերակների թիվը:

2 Հզորացնել գենդերային հիմքով բռնության դեպքերի վարման համակարգերը և ծառայություն մատուցողների կարողությունները, և ընդլայնել գենդերային բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ծառայությունները ՝ չսահմանափակվելով աջակցության տրամադրումը միայն զուգընկերոջ կողմից իրականացված կամ ընտանեկան բռնության տեսակներով:

3 Ապահովել դեռահաս աղջիկների համար պատշաճ ծառայություններ՝ հաշվի առնելով տարիքային և գենդերային առանձնահատկությունները:

4 Ապահովել, որպեսզի գենդերային բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունները և համապատասխան հաստատությունները լինեն մատչելի ու հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար:

5 Իրականացնել տնտեսական իրավազորման ծրագրեր և տրամադրել ֆինանսական աջակցություն գենդերային բռնության ենթարկված անձանց և այն կանանց ու աղջիկներին, որոնք գտնվում են գենդերային բռնության ռիսկի ներքո:

6 Ընդլայնել գենդերային հիմքով բռնության իրազեկման և տեղեկատվական միջոցառումները:

7 Ապահովել ոչ մասնագիտացված, խմբային հոգեսոցիալական աջակցության միջոցառումների (ֆորմալ ու ոչ ֆորմալ) պարբերական իրականացում՝ դրանք դիտարկելով որպես գենդերային բռնության մասին հաղորդում ներկայացնելու կարևորագույն հնարավորություն:

8 Իրականացնել վարքագծային փոփոխություններ բերող ծրագրեր և համայնքային նախաձեռնություններ, որոնք ուղղված են գենդերային հիմքով բռնության հաղթահարմանը:

9 Աջակցել ու համակարգել փախստական աղջիկների և կանանց սոցիալական ինտեգրմանն ուղղված աշխատանքները:

10 Համակարգել ինչպես ԳՀԲ, այնպես էլ ոչ այդ ոլորտում գործունեություն ծավալող կառույցների կողմից իրականացվող աշխատանքը, որպեսզի գենդերային բռնության ենթարկված անձանց և ԳՀԲ վտանգի տակ գտնվող կանանց ու աղջիկներին տրամադրվի համապարփակ աջակցություն:

ԳՀԲ ոլորտից դուրս փախստականների համար ծառայություններ մատուցողներին՝

1 Իրականացնել գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի և սեռական շահագործման ու չարաշահման բոլոր ձևերը կանխարգելող մեխանիզմների ուղղորդում առկա ծրագրերում և անձնակազմի կարողությունների զարգացման նախաձեռնություններում:

2 Ապահովել զգայուն ու հասանելի ծառայություններ՝ հաշվի առնելով սեռով, տարիքով ու հաշմանդամությամբ պայմանավորված առանձնահատկությունները:

3 Աջակցել աղջիկների կրթության հասանելիությանը և բարձրացնել դպրոցի անձնակազմի իրազեկվածությունը գենդերային բռնության ռիսկերի և ուղղորդման կարգի վերաբերյալ:

4 Աջակցել կանանց և աղջիկների կենսական միջոցների և ֆինանսական կայունության ապահովմանը:

5 Ապահովել, որպեսզի ամենախոցելի խմբերին, օրինակ, կին գլխավորով տնային տնտեսություններին տրամադրվի ոչ ֆինանսական աջակցություն, և օգտագործել ոչ պարենային ապրանքների բաշխումը, նաև որպես միջոց՝ գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայությունների մասին տեղեկատվություն տարածելու համար:

Դրամաշնորհատու կազմակերպություններին՝

1 Փախստականների կարիքների արձագանքմանն ուղղված միջոցառումների շրջանակներում միջոցներ հատկացնել գենդերային հիմքով բռնության այնպիսի ծրագրերի համար, որոնք տրամադրում են գենդերային բռնության ենթարկված անձանց կյանք փրկող ծառայություններ:

2 Աջակցել երկարաժամկետ այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են վարքագծի փոփոխությանը և գենդերային փոխակերպմանը:

3 Ֆինանսավորել փախստական կանանց և աղջիկների սոցիալական և տնտեսական ինտեգրմանն ուղղված երկարաժամկետ ծրագրեր:

4 Առաջնահերթություն տալ այն ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք ներառում են գենդերային հիմքով բռնության հաղթահարման և սեռական շահագործման ու չարաշահման կանխարգելման (ՍՇՉԿ) մեխանիզմներ:

5 Առաջնահերթություն տալ այն ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք հաշվի են առնում գենդերային, տարիքային և հաշմանդամության առանձնահատկությունները:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համատեքստ և նախապատմություն

Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանի շուրջ Ադրբեջանի և Հայաստանի միջև տասնամյակներ տևած հակամարտությունից հետո 2022 թվականի վերջում կրկին իրավիճակը սրվեց: Իրավիճակը սկսեց վատթարանալ 2022 թվականի դեկտեմբերից, երբ Լաչինի միջանցքը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի և արտաքին աշխարհի հետ կապող ողջ մարդասիրական օգնության կարևոր ուղին, արգելափակվեց՝ թողնելով Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությանը լիակատար մեկուսացման մեջ: Արդյունքում շուրջ 120 հազար մարդ 9-ամսյա շրջափակման ընթացքում ենթարկվեց սաստիկ սովի, թերսնման և զրկվեց բոլոր կենսական նշանակության պարենից ու ապրանքներից[1]: 2023 թվականի օգոստոսին տեղում արված գնահատումները ցույց են տվել, որ տնային տնտեսությունները խիստ տուժել են առաջնային օգտագործման պաշարների պակասից, որոնք են վառելիքը, բժշկական օգնությունը և ամենից շատ՝ սննդամթերքը: Ընտանիքները ստիպված են եղել կրճատել օրվա ընթացքում ճաշելու կամ սննդի չափաբաժինների և այլնի քանակը[2]: Հումանիտար ճգնաժամը կտրուկ սրվեց 2023 թվականի սեպտեմբերի 19-ին, երբ ադրբեջանական զինուժը ռազմական հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղում, որի արդյունքում գրեթե ողջ բնակչությունը Լեռնային Ղարաբաղից տեղափոխվեց Հայաստան:

2023 թվականի սեպտեմբերի 24-ից հոկտեմբերի չորսն ընկած ժամանակահատվածում Հայաստան մուտք գործեցին 100632 մարդ՝ օրական միջինը 15000 մարդ[3]: Բնակչության 52%-ը կազմում էին կանայք և աղջիկները, 31%-ը երեխաներ էին, իսկ 16%-ը հաշմանդամություն ունեցող անձինք: Տուժած բնակչության թվում էին նաև այլ խոցելի խմբեր, որոնք են տարեցները, քրոնիկական առողջական խնդիրներ ունեցող մարդիկ, հղի և կրծքով կերակրող կանայք[4]: Թեև Հայաստանի կառավարությունը հրատապ օգնություն է ցուցաբերել՝ տրամադրելով անհապաղ աջակցություն, փախստական բնակչության որոշ կարևորագույն կարիքներ դեռևս մնացել են չլուծված, ինչը լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում պետության սպառվող ռեսուրսների և սոցիալական ծառայությունների համար: Ավելին, փախստականների հոսքը կարող է ազդել սոցիալական համախմբվածության վրա և լարվածություն ստեղծել հյուրընկալող և փախստական համայնքների միջև, հատկապես, եթե ռեսուրսները սուղ են[5]:

[1] Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների Պաշտպան (2023), «Նախնական արտահերթ զեկույց 2023թ/ սեպտեմբերի 24-ից իրականացված փաստահավաք առաքելության արդյունքների վերաբերյալ», հասանելի՝ https://www.ombuds.am/images/files/a35f939de3e1ce0aebb9a4248f7a5868.pdf, 14

[2] WFP (2023), “Context analysis and the possible implications of the refugee influx to Armenia in September 2023”, հասանելի՝ https://reliefweb.int/attachments/e67bb31e-aade-4a5f-b802-6fe5cd8cb20f/Context%20Analysis%20and%20the%20Implications%20of%20the%20influx%20of%20refugees%20to%20Armenia.pdf, 2

[3] UNHCR (2023), Armenia Refugee Response Plan October 2023 – March 2024, հասանելի՝ https://data.unhcr.org/en/documents/details/103868?_gl=1*4uybl6*_rup_ga*NzgxNzAwNTAwLjE3MDMyNDA0ODk.*_rup_ga_EVDQTJ4LMY*MTcwMzI0MDUyNy4xLjEuMTcwMzI0MTM2NS4wLjAuMA, 4

[4] Ibid, 5

[5] WFP (2023), “Context analysis and the possible implications of the refugee influx to Armenia in September 2023”, հասանելի՝ https://reliefweb.int/attachments/e67bb31e-aade-4a5f-b802-6fe5cd8cb20f/Context%20Analysis%20and%20the%20Implications%20of%20the%20influx%20of%20refugees%20to%20Armenia.pdf, 3

2023թ. հոկտեմբերին արված կարիքների միջգերատեսչական հրատապ գնահատումը բացահայտեց տուժած բնակչությանը հանդիպող մի շարք կարևոր մարտահրավերներ՝ սկսած ապաստանի հրատապ կարիքից կամ կացարան ձեռք բերելու միջոցների բացակայությունից, պարենային կարիքներից մինչև հոգեբանական ու առողջությանը վերաբերող խնդիրներ և այլն[6]: Պարզվեց նաև, որ կա զգալի մտահոգություն՝ կապված սեփական անվտանգության առումով, այդ թվում տուժած բնակչության խոցելիությունը գենդերային հիմքով բռնության (ԳՀԲ) նկատմամբ[7]: Եվ թեև ԳՀԲ-ի հետ կապված միտումների, կարիքների և մարտահրավերների խորը վերլուծությունը դեռևս առկա չէ, կա ընդհանուր ընկալում, որ ԳՀԲ-ի ռիսկերը բարձր են, և որ փախստական կանանց և աղջիկների առանձին խմբեր հատկապես խոցելի են գենդերային հիմքով և այլ տեսակի բռնությունների նկատմամբ: Դրանք են՝ կին կամ երեխա գլխավորով տնային տնտեսությունները, տնտեսական կախման մեջ գտնվող կամ մեկուսացված կանայք ու աղջիկները, դեռահաս աղջիկները, հաշմանդամություն ունեցող կանայք ու աղջիկները և այլն[8]:

Գնահատման նպատակը, արդիականությունը և շրջանակը

Սույն գնահատման հիմնական նպատակն է ծածկել Հայաստանում փախստական բնակչության շրջանում գենդերային հիմքով բռնության միտումների և ռիսկերի վերաբերյալ առկա տվյալների բացը և տեղեկացնել տեղահանման ճգնաժամի հետևանքներին արձագանքող շահագրգիռ կողմերին, թե ինչպես տեղայնացնեն իրենց ծառայությունները գենդերային բռնության ենթարկված անձանց և գենդերային հիմքով բռնության վտանգի տակ գտնվող կանանց և աղջիկների կարիքները հասցեագրելու համար: Ավելին, հավատարիմ մնալով հումանիտար իրավիճակներում ԳՀԲ ծրագրերում բռնությունը վերապրած անձանց շահերը կարևորմանը, այս հետազոտությունը ևս նպատակ ունի լսելի դարձնել տուժած կանանց և աղջիկների ձայնը, որ հաճախ լսելի չէ: Զեկույցի հիմքում ներկայացված է նրանց փորձը, մտքերն ու դիտարկումները: Քանի որ գնահատման հիմնական առարկան տեղահանության արդյունքում առաջացած փորձառություններն ու մարտահրավերներն են, հետազոտող թիմը խոսել է միայն փախստական կանանց և աղջիկների հետ (բացառությամբ ծառայություններ մատուցողների), որոնք ապաստանել են Հայաստանի բոլոր մարզերում: Այնուամենայնիվ, թեև զեկույցի կիզակետում փախստական բնակչության շրջանում առկա ԳՀԲ փորձառություններն ու ռիսկերն են, որոշ դեպքերում անհրաժեշտ է համարվել նաև դիտարկել Հայաստանում ԳՀԲ միջավայրն ու մշակույթը:

[6] Տե՛ս՝ UNHCR (2023), "Armenia Rapid Needs Assessment Report", հասանելի՝ https://reliefweb.int/attachments/683d0181-e283-4f07-8ae8-5e65a276b62e/Rapid%20Needs%20Assessment%203%20November%202023.pdf

[7] Ibid, 8

[8] GBV Sub Sector Armenia (2023) GBV Sub-Sector Strategy and Work Plan (October 2023 – March 2024), available at https://drive.google.com/file/d/1ZmWtk33vXXx7BH8xqY7RBncL56FIDTXj/view?usp=sharing, 1-2

Թեև վերլուծության հիմքում ընկած էին հիմնականում դարաբաղյան մշակույթն ու վարքագծերը, շատ միտումներ և մոտեցումներ զուգամիտվում էին նաև բուն հայաստանյան համատեքստի հետ, ինչը կարևոր է հաշվի առնել՝ դիտարկելով վերջինը որպես փախստականների համար նոր միջավայր՝ գենդերային հավասարության վերաբերյալ արդեն պահպանողական վերաբերմունքով[9]:

Եվ վերջում. թեև այս գնահատումը կոչված է քարտեզագրելու գենդերային հիմքով բռնության միտումները և ռիսկերը, այն ոչ մի կերպ չի արտացոլում ԳՀԲ-ի իրական ծավալները տվյալ համատեքստում: Արձանագրված միտումներն ու միջադեպերը պետք է դիտարկել որպես տեղի ունեցող գենդերային բռնության ընդամենը մի մասնիկ՝ ընդունելով, որ Հայաստանում, ինչպես ցանկացած այլ համատեքստում, գենդերային հիմքով բռնության վերաբերյալ հաղորդումները ցածր թիվ է կազմում: Այնուամենայնիվ, ինչպես նշվում է հիմնական միջազգային ուղեցույցներում, անկախ կոնկրետ «ապացույցների» առկայությունից կամ բացակայությունից, մարդասիրական օժանդակության մեջ ներգրավված ողջ անձնակազմը պետք է կարողանա գնահատել գենդերային բռնության բոլոր ռիսկերը և որ տուժած բնակչությունը խոցելի է, քանի որ այդ համատեքստում առավել մեծանում է ԳՀԲ–ի հավանականությունը, հետևապես պետք է ձեռնարկի համապատասխան՝ կանխարգելման, մեղմող և արձագանքման գործողություններ[10]:

Մեթոդաբանական ու տեսական շրջանակ

Մեթոդաբանությունն ու մեթոդները

Սույն գնահատման համար տվյալների հավաքագրումը տեղի է ունեցել վեց շաբաթվա ընթացքում (2023թ. նոյեմբեր-դեկտեմբեր): Տվյալների հավաքագրումն իրականացվել է փուլային մոտեցմամբ՝ մի կողմից տվյալների հավաքագրման և վերլուծության միջև մշտական փոխկապակցությամբ, մյուս կողմից՝ հետազոտությունը կառուցելով կանանց փորձառությունների շուրջ, և այսպիսով, մեթոդաբանությունը հիմնված է ֆեմինիստական տեղայնացված տեսության և արագ որակական վերլուծության համադրման վրա[11]:

Տվյալների հավաքագրման համար օգտագործված մեթոդներն էին կիսակառուցվածքային հարցազրույցները և ֆոկուս խմբերի քննարկումները:

[9] Տե՛ս, UN Women and UNFPA (2022), “Baseline Study on Stereotypes in the Countries of the Eastern Partnership”, հասանելի՝ https://eeca.unfpa.org/sites/default/files/pub-pdf/eu4ge_baseline_study_0.pdf

[10] Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, հասանելի՝ https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf, 2 and 14

[11] Տե՛ս, օրինակ, Wuest, Judy (1995), “Feminist Grounded Theory: An exploration of congruency and tensions between two traditions in knowledge discovery”, Qualitative Health Research, 5(1): 125-137.

Գնահատման նպատակին հասնելու համար մեծ նշանակություն ունեին կիսակառուցվածքային հարցազրույցները, որոնք հիմնված էին հարցված կանանց և աղջիկների փորձառությունների և վկայությունների վրա: Նման մոտեցումը հնարավորություն էր տալիս մասնակիցներից ստանալ այնպիսի տեղեկատվություն, որոնք հետազոտողները չէին կարող նախապես կանխատեսել հարցաշարը կազմելիս, բայց հենց այդ տեղեկատվությունն օգնում էր հասկանալու փախստական կանանց և աղջիկների դիրքորոշումները: Նույն նպատակն ուներ նաև ֆոկուս-խմբային քննարկումը՝ կիսակառուցվածքային հարցազրույցների միջոցով տեղահանված մարդկանցից հավաքագրելով տեղեկատվություն: Հարցազրույցներին մասնակից կանայք և աղջիկները հաճախ իրենք էին ուղղորդում զրույցի, հանդիպման ընթացքը և արդյունքում հնարավորություն ստեղծելով հավաքագրել առավել մեծ թվով տեղեկատվություն, քան հնարավոր է ավանդական հարցազրույցի ընթացքում՝ այսպիսով նաև ամբողջացնելով ու լսելի դարձնելով փախստական, խոցելի կանանց ձայնը[12]:

Ընտրվել է հենց այս որակական մեթոդաբանությունը, քանի որ այն համահունչ է նաև զոհակենտրոն և ֆեմինիստական մոտեցումներին, ինչը դժվար կլիներ ապահովել քանակական մեթոդաբանության դեպքում: Հետազոտության մասնակից կանայք և աղջիկներ դիտարկվել են ոչ թե պասիվ հարցվողներ, այլ՝ որպես այս հետազոտության ակտիվ մասնակից, հեղինակ[13]: Այս եղանակով, հարցվողը գնահատման օբյեկտ դիտարկվելու փոխարեն, ընկալվում է որպես ակտիվ սուբյեկտ, որի մոտեցումներն ու կյանքի փորձառությունները հետազոտության կարևոր մաս են հանդիսանում և ում ձայնն առաջնահերթ է: Արդյունքում հետազոտողի, հարցազրույց վարողի և հարցվողի միջև փոխհարաբերությունը դարձել են ավելի սերտ, ավելի կարեկից և ոչ հիերարխիկ: Ավելին, հարցվողը հաճախ ինքն էր առաջնորդում քննարկման ընթացքը՝ ընտրելով, թե ինչ է ցանկանում պատմել և ինչպես՝ միաժամանակ ամբողջ զրույցի ընթացքում ունենալով հնարավորություն հրաժարվելու կամ դադարեցնելու զրույցը: Եվ վերջապես, հետազոտության ողջ ընթացքում ներգրավված են եղել միայն փորձառու ԳՀԲ մասնագետներ, որն էլ երաշխավորել է, որ գենդերային հիմքով բռնությանը վերաբերող զգայուն տվյալներ հավաքագրելիս՝ պահպանվեն էթիկական և անվտանգության բոլոր պայմանները[14]:

[12]Bryman, Alan (2012), Social Research Methods, Fourth edition, Oxford University Press, 503-504

[13]H Holliday, Adrian (2007), Doing and Writing Qualitative Research, Second Edition, Sage Publications, 65

[14]Տես՝ WHO (2007) "WHO ethical and safety recommendations for researching, documenting and monitoring sexual violence in emergencies", available at https://iris.who.int/bitstream/handle/10665/43709/9789241595681_eng.pdf?sequence=1

Ընտրանքը

Գնահատման մեջ ներգրավվել են Երևանում և Հայաստանի բոլոր մարզերում բնակվող 142 մասնակից: Ընտրանքում ներառվել են արտակարգ/հումանիտար իրավիճակների արձագանքման ոլորտում ծառայություններ մատուցողները, փախստական կանայք և դեռահաս աղջիկները: Արագ որակական վերլուծության ժամանակային սահմանափակության պատճառով մարզերից ոչ բոլորն էին ներկայացված բոլոր երեք խմբերում:

Հարցվածներ	Մասնակիցների թիվը
Փախստական դեռահաս աղջիկներ	43
Փախստական կանայք	74
Ծառայություն մատուցողներ	25

Թեև հարցվողների հասանելիության ապահովման հարցում կարևոր դեր են ունեցել ՄԱԲՀ-ի գործընկերները, ընտրանքը մշակվել է հենց հավաքագրված տվյալների միջոցով: Կանանց և աղջիկների շրջանում առավել խոցելի խմբերի մասին տեղեկատվություն հավաքելիս՝ հարցվողները հատուկ ուշադրություն էին դարձնում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին, դեռահաս աղջիկներին, կին գլխավորով տնային տնտեսություններին, հեռավոր կամ գյուղական վայրերում կամ որևէ այլ կերպ մեկուսացված կանանց և աղջիկներին, ինչպես նաև տնտեսապես կախյալ կանանց և աղջիկներին: Հաշվի առնելով նման դիտարկումները՝ ընտրանքի շարունակական մշակումը նպատակ ուներ հնարավորինս ընդգրկել այդ խմբերի ներկայացուցիչներին՝ մնալով տրված ժամանակային սահմանափակումների շրջանակում: Թեև այս խմբերից յուրաքանչյուրն առանձին գնահատման ու վերլուծության կարիք ունի, գնահատման միջոցով հնարավոր եղավ ընդհանուր պատկերացում կազմել կին փախստականների տարբեր խոցելի խմբերի և դրանց կարիքների մասին՝ փախստական կանանց առավել լայն համատեքստում:

Ինտերսեկցիոնալությունն ու խոցելի խմբերը

Քանի որ գնահատման կարևոր նպատակներից մեկն էր ընդգրկել կանանց և աղջիկների առավել խոցելի խմբերին, և հասկանալ, թե ինչպես են փոխազդում նրանց ինքնությունն ու խոցելիությունը, տվյալները վերլուծվեցին՝ հիմնվելով ինտերսեկցիոնալ ֆեմինիզմի մոտեցումների վրա: Ինչպես նշվեց, հարցվողները հատկապես ընդգծել են դեռահաս աղջիկների, կին գլխավորով տնային տնտեսությունների և հեռավոր կամ

գյուղական վայրերում ապրող կանանց ու աղջիկների խոցելիությունը: Հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները սովորաբար համարվում էին բռնության ամենահավանական թիրախներ, քանի որ, ինչպես բացատրեց Վայոց ձորում ծառայություններ մատուցողներից մեկը, «նրանք ավելի քիչ հնարավորություն ունեն լքելու իրենց տները, և կապեր հաստատելը նրանց համար շատ ավելի դժվար է»: Սոցիալական ցանցերի պակասը և մեկուսացումը բազմիցս ընդգծվել է որպես գենդերային հիմքով բռնության ռիսկը մեծացնող գործոն: Այդ համատեքստում որոշներն առանձնացնում էին դեռահաս աղջիկներին ու միայնակ մայրերին, իսկ այլոք, ինչպես օրինակ Սյունիքում ծառայություն մատուցողներից մեկը՝

> «բազմազավակ մայրերը, կանայք, որոնք տնտեսապես անկախ չեն, [ովքեր] մեկուսացված են, ապրում են փակ միջավայրում, ունեն խիստ պարտականություններ տնային տնտեսությունում. շատերը տանից դուրս չեն էլ գալիս՝ մնալով առանց դպրոցական կրթության ու առանց աշխատանքի»:

Նման բարդ և բազմաշերտ բնակչության ուսումնասիրության ժամանակ ինտերսեկցիոնալ մոտեցումն օգնեց հաղթահարել՝ բոլոր կանանց և աղջիկներին որպես միատարր խումբ դիտարկելու մարտահրավերը, և ընդունել, որ նրանց փորձառությունը կարող է ձևավորվել ինքնության այլ չափումներով, բացի սեռից[15]: Մյուս կողմից կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը դիտարկող ինտերսեկցիոնալ մոտեցումը օգնեց վերլուծել, թե ինչպես է սեռը հատվում այլ անհավասարությունների և խոցելիության դրսևորումների հետ (գենդերային ինքնություն, տարիք, էթնիկ պատկանելություն, ներգաղթյալի կարգավիճակ, հաշմանդամություն և այլն), միաժամանակ ընդունելով, որ բոլոր անհավասարության դրսևորումները գոյություն ունեն միաժամանակ, և դրանց փոխազդեցությունը ստեղծում է կանանց և աղջիկների համար գենդերային հիմքով բռնության եզակի փորձառություններ և ռիսկեր[16]: Ավելին, այս գնահատման համատեքստում ինտերսեկցիոնալ մոտեցումը նույնպես կարևոր է գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողների համար՝ հասկանալու տուժած բնակչության առջև ծառացած մարտահրավերները, որտեղ սեռը և տեղահանումը խոցելիության մեկնարկային կետերն են: Եվ նման ըմբռնումը չափազանց կարևոր է, որպեսզի կարիքահեն, պատշաճ արձագանք տրամադրվի՝ երաշխավորելով, որ ոչ ոք չի անտեսվի:

[15] Crenshaw, Kimberle (1991), “Mapping the margins: Intersectionality, identity politics, and the violence against women of Color”, Stanford Law Review, 43, 1242

[16] Imkaan, UN Women and European Union (2019), “The Value of Intersectionality in understanding Violence Against Women and Girls”, հասանելի՝ https://eca.unwomen.org/sites/default/files/Field%20Office%20ECA/Attachments/Publications/2019/10/The%20value%20of%20intersectionality%20in%20understanding%20violence%20against%20women%20and%20girls.pdf, 3-4

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Այս գնահատման եզրահանգումները խմբավորված են հետևյալ երեք հիմնական գլուխներում. «Գենդերային հիմքով բռնություն խրախուսող միջավայր և նպաստող գործոններ», «Գենդերային հիմքով բռնության քարտեզագրված միտումներ» և «Գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայություններ»: Առաջին գլխում դիտարկվում են փախստական կանանց և աղջիկների կյանքի և ինքնության այնպիսի հարցեր, որոնք կարող են մեծացնել նրանց խոցելիությունը գենդերային հիմքով բռնության հանդեպ: Երկրորդ գլուխը դիտարկում է նման կենսապայմանների հնարավոր հետևանքները բռնության հանգեցնող այլ գործոնների հետ միասին՝ վերլուծելով գենդերային բռնության այն տեսակները, որոնք արդեն իսկ կան, կամ որոնք մտահոգում են հարցվողներին: Երրորդ գլուխն անդրադառնում է քարտեզագրված մարտահրավերներին դիմակայելու՝ ԳՀԲ ծառայությունների նպատակահարմարությանը և արդյունավետությանը՝ հաշվի առնելով ինչպես դրանց կարիքը զգացող բնակչությանը սպասարկելու մարտահրավերները, այնպես էլ խոցելի բնակչությանն անհրաժեշտ ծառայություններում արձանագրված էական բացերը:

Գենդերային հիմքով բռնություն խրախուսող միջավայրը և դրան նպաստող գործոնները

Տեղահանության փորձառությունը էականորեն ազդում է փախստական կանանց և աղջիկների առօրյա կյանքի վրա և սեփական անվտանգության զգացողության վրա: Աջակցության ցանցերի ձևավորման հնարավորություն, հմտությունների և անհրաժեշտ պարագաների ձեռքբերում, եկամուտ ստեղծող գործունեության վերաբերյալ գիտելիքի ընդլայնում կամ նման գործունեության մեջ ներգրավում, անվտանգ միջավայրում ապրելու հնարավորություն. այս բոլոր գործոնները կարևոր են ինչպես գենդերային հիմքով բռնության կանխարգելման, այնպես էլ բռնությունը վերապրածների ինքնավստահությունն ու հզորացումը վերականգնելու համար: Հետևաբար, նրանց առօրյայի և ամենօրյա զբաղմունքների վերլուծությունը, մասնավորապես սոցիալական ինտեգրման, աշխատանքի և կրթության հասանելիության և նրանց կենսապայմանների վերաբերյալ տեղեկատվությունը գնահատման կարևոր մասն են կազմել:

Սոցիալական ինտեգրացիա

2020 թվականի պատերազմի հետևանքով Լեռնային Ղարաբաղից Հայաստան փախստականների ներհոսքի փորձը ցույց է տվել, որ տեղահանված բնակչությունը, առնչվելով տարաբնույթ խոչընդոտների, այնուամենայնիվ չի առերեսվել այն խնդիրների հետ, որոնց կարող էին հանդիպել այլ ծագում ունեցող փախստականները Հայաստանում: Այն պայմանավորված էր լեզվական խոչընդոտների բացակայությամբ, մշակութային և պատմական կապերի առկայությամբ, աշխատանքային կամ ընտանեկան այցելությունների նախապատմությամբ և այլն[17]: Նմանապես, սույն գնահատման ընթացքում ներկայացված փախստական կանանց և աղջիկների ընդհանուր փորձը՝ համայնքում ընդունված լինելու առումով, շատ դրական էր: Հարցվողները նշում էին, որ Լեռնային Ղարաբաղից ժամանող մարդկանց հյուրընկալող համայնքների կողմից տրամադրվել է զգալի օգնություն, իսկ իրենց ներկա հարևաններին բնութագրում էին, որպես մարդիկ, որոնք աջակցել են տեղահանվածներին հաղթահարել առօրյա մարտահրավերները: Բարձրաձայնվել են ընդունող և փախստական համայնքի միջև

[17] Vermishyan, Harutyun, Smbatyan, Hayk, Arakelyan, Mariam, Sahakyan, Julya, Bagiyan, Armine (2023), "Policy Brief: Urban Integration Experiences of the Displaced from Nagorno-Karabakh". At https://rwi.lu.se/wp-content/uploads/2023/04/UrbanIntergrationWeb.pdf, 4

լարվածության միայն մի քանի դեպքեր: Այդպիսի օրինակներից մեկն էլ Կոտայքում փախստական կանանց հետ ունեցած փորձն էր: Նրանք պատմել են համայնքի անդամների և ծառայություններ մատուցողների շրջանում առկա դժգոհության մասին՝ մեջբերելով նրանց խոսքերը, որ իրենք հատուկ վերաբերմունք չեն ստանա: Այնուամենայնիվ, գերակշռում էր հայաստանյան բնակչության հանդեպ երախտագիտության և դրական ընկալման զգացումը, որը լավագույնս դրսևորվեց այժմ Լոռիում բնակվող դեռահաս փախստական աղջկա խոսքում.

> «Երբ մարդիկ, այդ թվում՝ երեխաներ, գալիս էին, սոված էին, իսկ մարդիկ այստեղ մեզ շատ բաներ էին տալիս […] Գորիսում մարդիկ այնքան լավ վարվեցին մեզ հետ: Կամավոր օգնեցին մեզ մեր ունեցածը տեղափոխելու հարցում, օգնեցին, երբ ուտելիք չունեինք, օգնեցին, որ երեխաներն առանց հագուստ չմնան, մեզ շատ օգնեցին…»:

Այնուամենայնիվ, հարցված կանանց և աղջիկների մեծամասնությունը նշել է, որ տեղի համայնքում կամ ընկեր չունի, կամ ունի միայն մեկ ընկեր, որի հետ կանոնավոր շփվում է: Նրանցից շատերը պատմեցին, որ դժվարությամբ են հարմարվում նոր միջավայրին և համայնքի փոփոխությանը: Նրանցից ոմանց համար խոչընդոտները պայմանավորված են եղել բնակության վայրով՝ գյուղական, թե քաղաքային համայնքում են տեղակայվել, կամ փոքր, թե մեծ քաղաքներում: Արագածոտնում ծառայություն մատուցողի դիտարկմամբ.

> *Գյուղերում ավելի հեշտ են ինտեգրվում, քան մեծ քաղաքներում: Համայնքն աջակցում է ըստ կարիքների՝ անհրաժեշտ պարագաներ տրամադրելով: Ճիշտ է աշխատանք գտնելն ավելի մեծ խնդիր է, բայց գյուղերում ինտեգրումն ավելի հեշտ է: Երբ մենք այցելեցինք գյուղաբնակ համայնքում տեղակայված ընտանիքներին, նրանք շատ ավելի լավ էին իրենց զգում, ինտեգրվել էին արդեն, համայնքի բնակիչների հետ արդեն շփվում էին, հարևանություն անում…»:

Սակայն փախստականներից մի քանիսի համար ընկալումն այլ էր. «Ես Ստեփանակերտում էի ապրում, իսկ հիմա գյուղում եմ, գյուղում ապրելն ինձ համար դժվար է, ես ծանոթ չեմ այս կենցաղին…»,- նշեց Արագածոտնում բնակվող փախստական մի աղջիկ: «Տեղը լավ է, մարդիկ լավն են, բայց ես այստեղ մտերիմ ընկերներ չունեմ»:

Ավելին, փախստական կանայք ոչ միայն հայտնում էին, որ չեն շփվում հյուրընկալող համայնքների բնակիչների հետ, այլև շատերը գրեթե չէին հանդիպում այլ փախստական կանանց հետ: Թեև որոշ հարցվածներ նշել են կազմակերպությունների կողմից փախստական կանանց համար իրականացվող միջոցառումների մասին, որտեղ նրանք շփվում են այլ տեղահանվածների հետ, նաև եկեղեցին, որտեղ նրանք

հանդիպում են միմյանց հետ, սակայն հարցվածների մի զգալի մասը հայտնել է, որ չի այցելում կամ տեղյակ չէ այն վայրերի մասին, որտեղ կանայք կարող են հավաքվել: Եթե շփվում են այլ փախստական կանանց հետ, «նրանք հիմնականում շփվում են հեռախոսով, քանի որ գտնվում են Հայաստանի տարբեր մարզերում», ինչպես բացատրեց Վայոց ձորից հարցվողը: Այնուամենայնիվ, հարկ է նշել նաև տարբեր ժամանակներում Հայաստան ժամանած փախստական կանանց ամուր ցանցի առկայության մասին: 2020 թվականին Լոռիում հաստատված փախստականը պատմել է իր համայնքում վերջերս տեղահանված կանանց աջակցելու գործում իր դերի մասին.

> *Մենք կարող ենք կյանքը բաժանել այսպես՝ պատերազմից առաջ, 2020 թվականի պատերազմից հետո և 2023 թվականի պատերազմից հետո: Նրանք, ովքեր եկել են այստեղ 2023 թվականին, ամենադժվարին վիճակում են, քանի որ նրանք նաև անցել են շրջափակման միջով: Ես սովոր եմ այստեղի կյանքին, բայց հիմա եկած կանանց համար դա շատ դժվար է: Նրանց համար դժվար է կողմնորոշվել, պարզել, թե ինչը որտեղ է: [...] Մենք [մարդիկ, ովքեր ժամանել են 2020 թվականին] անմիջական կապի մեջ ենք այստեղ 2023 թվականին եկած կանանց հետ. ես փորձում եմ նրանց օգնել, որքան կարող եմ: Ես այստեղ[կազմակերպությունում] այդ կանանցից շատերին եմ հանդիպել»:*

Մեկուսացվածության ընդհանուր զգացումը հատկապես վառ է դրսևորվել դեռահաս աղջիկների շրջանում, ընդ որում տարբեր դեռահաս հարցվողներ համաձայնեցին Արմավիր տեղափոխված մի աղջկա հետևյալ դիտարկման հետ. «Մենք մեզ այստեղ օտար ենք զգում»: Իրենց առօրյա կյանքը նկարագրելիս՝ շատերն ընդգծեցին այլ աղջիկների հետ շփման բացակայությունը, նշեցին ժամանցի սահմանափակ հնարավորությունների և ժամանակի մեծ մասը տանն անցկացնելու մասին: Գեղարքունիքում բնակվող երկու փախստական քույրեր, որոնք Հայաստանում դպրոց չեն գնում, հազվադեպ են հանդիպում իրենց հասակակիցների հետ.

> *Հիմնականում դուրս չենք գալիս, ընտանիքով մնում ենք տանը [...] Մենք դեռ նոր ենք, ընկերներ չունենք այստեղ, մեր հասակակից աղջիկների չենք հանդիպել, իսկ [Լեռնային Ղարաբաղի] մեր ընկերները ցրված են այլ մարզերում: Երբեմն հեռախոսով ենք խոսում...»:*

Նույնիսկ դպրոց հաճախող աղջիկները ժամանակի մեծ մասն անցկացնում են տանը: Արմավիր տեղափոխված դեռահաս աղջիկը նկարագրեց իր սովորական օրը.

Ես գնում եմ դպրոց, իսկ դասերից հետո սովորում եմ դասերս և մնում եմ տանը: [...] Ես օգնում եմ մայրիկիս տան գործերում, քանի որ շատ խնդիրներ կան, ինչ մենք եկել ենք այստեղ: Օգնում եմ մաքրություն անել, ամաններն եմ լվանում, օգնում եմ ճաշ եփել...»:

Գրեթե բոլոր աղջիկները նշեցին, որ տեղի համայնքում շատ դժվար է նոր ընկերներ ձեռք բերել: Ընկերական շփումներում էլ «միայն արցախցի աղջիկների հետ ենք շփվում», ինչպես Լոռիում ասաց դեռահաս հարցվողներից մեկը: Ինչպես հայտնի դարձավ, այդ աղջիկներից մի քանիսը ճանաչել են միմյանց իրենց ծննդավայր համայնքներում, իսկ մյուսներին դիմավորել են Հայաստան ժամանելուն պես: Լոռիից մեկ այլ աղջիկ կիսվել է իր տեսակետով. «Ես ինձ հարմար չեմ զգում այստեղ, ընկերներ չունեմ: Ես արդեն 17 տարեկան եմ, այնտեղ շատ ընկերներ եմ ունեցել, բայց այստեղ՝ այդպես չէ»:

Ֆոկուս-խմբային քննարկումներում փախստական դեռահաս աղջիկները հաճախ են համեմատություններ անցկացնում հյուրընկալող և ծննդավայր համայնքներում առկա մշակույթների միջև, խոսում տարբերությունների մասին, հատկապես, երբ փորձում էին նկարագրել իրենց նոր միջավայրին հարմարվելու և տեղի համայնքների հասակակիցների հետ շփվելու մարտահրավերները: Շիրակում ծառայություններ մատուցողներից մեկը հետևյալ կերպ ամփոփեց փախստական աղջիկների և տեղի համայնքների աղջիկների միջև եղած հիմնական տարբերությունները.

Հայաստանում աղջիկներն ավելի ակտիվ են, ավելի փորձառու, ավելի շատ առաջնորդելու հմտություններ ունեն: Գիտելիքի և փորձի հարցում արցախցի աղջիկները շատ հետ են մնում. ոչ բոլորն էին ապրում քաղաքում, ոչ բոլորն էին ճանապարհորդելու հնարավորություն ստացել: [..] Դա վերաբերում է և՛ ֆորմալ, և՛ ոչ ֆորմալ կրթությանը: Իսկ 2020 թվականի իրադարձություններն ազդեցին կրթության վրա, այն շատ անհամաչափ դարձավ՝ պատերազմի, իննամսյա շրջափակման պատճառով: Նրանք փորձել են պահպանել կրթական գործընթացը, բայց որակը միևնույն է, տուժել է: Դրան գումարվում է տրավման, դրա համար էլ նրանց համար դժվար է սոցիալականացումը: [...] Նաև հաճախակի տեղափոխություններ են լինում. օրինակ, մի աղջիկ ունենք, որ Արցախից գնացել է Շիրակ, ապա՝ Արարատ, հետո վերադարձել է նորից Շիրակ: Սա մեծ ազդեցություն է ունենում ինտեգրման վրա»:

Դեռահաս փախստական աղջիկները նույնպես նկատել են զգալի տարբերություն իրենց և հյուրընկալող համայնքների իրենց հասակակիցների միջև: Լոռիում ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ մի աղջիկ նշել է, որ «աղջիկներն այստեղ ավելի ժամանակակից են՝ ներկում են իրենց մազերը, ականջօղեր են կրում, համեստ չեն, ավելի ազատ են»: Աղջիկների և տղաների հետ հարաբերությունները նույնպես բազմիցս բարձրաձայնվել են: «Այստեղ աղջիկներն ու տղաները իրար հետ ազատ շփվում են, մենք դրան սովոր չենք, օրինակ՝ գրկախառնվում են, իսկ ես էդպես չեմ կարող»,- պատմում է Վայոց ձորից մի աղջիկ: Նույն մարզից մեկ այլ աղջիկ ավելացրեց ևս մեկ անհարմարության մասին, որ զգում են փախստական աղջիկները՝ ասելով, որ «աղջիկները ամաչում են շփվել, երբ միջավայրը նոր է՝ [իրենց] բարբառի պատճառով»: Սա բարձրաձայնվեց նաև այլ ֆոկուս խմբերում, որտեղ շատ աղջիկներ ասացին, որ նույնիսկ եթե իրենք և հյուրընկալող համայնքի երեխաները կարող են հասկանալ միմյանց, փախստական աղջիկներն ամաչում են խոսել ղարաբաղյան տարբերվող առոգանությամբ, հատկապես, եթե եկել են գյուղական կամ հեռավոր շրջաններից:

Աղջիկների ինտեգրման և սոցիալականացման հետ կապված մարտահրավերների գենդերային ասպեկտներն ակնհայտ դարձան, երբ նրանք սկսեցին քննարկել իրենց և փախստական համայնքի իրենց հասակակիցների միջև եղած տարբերությունները: Պնդելով, որ տղաներն ընդհանուր առմամբ առավել հեշտությամբ են ընկերական հարաբերություններ հաստատում, Արագածոտնից դեռահաս աղջիկը ներկայացրել է փախստական դեռահասների առօրյա կյանքում գենդերային տարբերությունները.

> *Մեծ տարբերություն կա, թե ինչպես են այստեղ ժամանակ անցկացնում արցախցի տղաներն ու աղջիկները: Աղջիկները սովոր են տանը մնալ ու սովորել, պարապել դասերը: Տղաները միշտ դրսում են: [...] Ես շատ գործեր ունեմ անելու, ես պետք է օգնեմ մամայիս տնային գործերում: Ծնողներս չէին արգելի, բայց իմ ժամանակը քիչ է՝ ի տարբերություն եղբորս, նա տանից դուրս է գալիս, ուշ վերադառնում, միշտ դրսում է լինում»:*

Բացի այն, որ տղաներից չի ակնկալվում, որ նրանք օգնեն տնային գործերում, հարցվողներն անդրադարձել են տղաների և աղջիկների վարքագծերի միջև արմատական տարբերություններին՝ տղաների վարքագիծը բնութագրելով, որպես ավելի շփվող, «ազատ» և «բաց»: Նման տարբերությունների բացատրություններից մեկն այն էր, որ փախստական աղջիկները «տեղացի աղջիկներից ավելի համեստ են, տեղացի տղաներից ավելի հասուն են, քանի որ շատ բան են տեսել պատերազմում»՝ ըստ Լոռիում հաստատված մի փախստական աղջկա: Այնուամենայնիվ, աղջիկների մեծամասնությունը հիմնական տարբերությունը համարում է տղաների շրջանում ինքնավստահության առկայությունը, որը բացակայում է աղջիկների մոտ:

Մեր համայնքում աղջիկների համար կան կանոններ. աղջիկը պետք է խոնարհ լինի, չարտահայտվի, ազատ չլինի: Բայց տղաների համար այլ է, նրանք սահմանափակված չեն, չեն մտածում, թե ինչ են մտածում մարդիկ կամ ինչպես կընդունեն իրենց: [...] այստեղ աղջիկների համար ավելի հեշտ է: Արցախում, եթե աղջիկը [կանոններին չենթարկվի], դա մեծ խնդիր կլինի, նրան վատ կվերաբերվեին, բոլորը կսկսեն վատ խոսել այս աղջկա մասին, եթե նա իրեն չպահի այս կանոններով»:

Հաշվի առնելով փախստական աղջիկների, ինչպես նաև կանանց՝ նման ինտեգրման և սոցիալականացման ընկալումները և փորձառությունը՝ պետք է դիտարկել նաև նրանց կյանքի մյուս կողմերը: Գիտակցելով այն հետևանքները, որոնք կարող են ունենալ այս մարտահրավերները, երբ խոսքը վերաբերում է գենդերային հիմքով բռնության ռիսկերին, կրթության և աշխատաշուկայի հասանելիությունը դառնում է ավելի կարևոր ռազմավարություն՝ մեկուսացումը հաղթահարելու և բնակչության այս խմբի ինքնավստահությունն ու ինքնարտահայտումը մեծացնելու համար: Այնուամենայնիվ, հարցվածներից շատերը նշել են, որ բազմաթիվ խոչընդոտներ են եղել դպրոց հաճախելու և աշխատանքի հնարավորություններից օգտվելու հարցերում:

Աշխատաշուկայի հասանելիությունը

Եկամտի բացակայությունը և աշխատաշուկա մուտք գործելու մարտահրավերները հարցվածների ճնշող մեծամասնության բարձրաձայնած ամենամեծ մտահոգություններից էին: Ընդհանուր առմամբ, եկամուտ ստեղծելու հնարավորությունների բացակայությունը բացասաբար է ազդում բոլոր փախստականների վրա, հատկապես այն շրջաններում, որտեղ գործազրկության մակարդակը բարձր էր նույնիսկ փախստականների ներհոսքից առաջ: Լոռու մարզում ծառայություններ մատուցողը ներկայացնում է այդ մարզում գործազրկության խնդիրները, ինչպես նաև մարզերի միջև փախստական բնակչության միգրացիայի որոշ պատճառներ.

> *Լոռին աղքատության բարձր մակարդակ ունի, տեղացիները զբաղվածության և ապրուստի խնդիր ունեն: Գործազրկության մակարդակը շատ բարձր է. [...] Շատ փախստականներ պարզապես ուզում են գնալ Երևան՝ աշխատանք գտնելու համար, բայց Երևանում ապրելը թանկ է, ուստի նրանք լքում են Երևանը և գնում այլ մարզեր: Ոմանք բնակություն են հաստատել Երևանից դուրս՝ այնտեղ, որտեղ հարազատներ ունեն»:*

Այնուամենայնիվ, աշխատանք չունենալը տարբեր կերպ է ազդում տղամարդկանց և կանանց վրա: Մի կողմից, ինչպես եզրակացրեց Շիրակում ծառայություններ մատուցողներից մեկը, «շատ կանայք գործազուրկ են և կախված են իրենց ընտանիքներից, և դա մեծացնում է գենդերային բռնության վտանգը»: Մյուս կողմից, հարցվողները նշել են, որ կանայք ապրուստի միջոցներ հոգալու հարցում անհամաչափորեն հաճախ են բախվում խոչընդոտների: Գեղարքունիքում ծառայություններ մատուցողը նման իրավիճակը կապում է հիմնականում համայնքներում արմատացած, գոյություն ունեցող գենդերային նորմերի հետ.

> *Ընդհանրապես, շատ ընտանիքներում հիմնական ապրուստ վաստակողը տղամարդն է, և տղամարդը բարձր վարձատրվող աշխատանք ստանալու ավելի շատ հնարավորություններ ունի: Տղամարդիկ նաև հիմնական որոշումներ կայացնողներն են: [...] Լայնորեն ընդունված է նաև այն գաղափարը, թե որը պետք է լինի «կնոջ», և որը՝ «տղամարդու» աշխատանքը»:*

Այդ մտքին համաձայնել են նաև փախստական կանայք: Երբ քննարկվում էին տեղահանված տղամարդկանց և կանանց առօրյա կյանքում առկա տարբերությունները, Սյունիքում հարցվողներից մեկը նշեց, որ «ի տարբերություն կանանց, տղամարդիկ իրենց ժամանակը այլ կերպ են անցկացնում. ամուսինները սովորաբար աշխատում են ցերեկը»: Գենդերային դերերի նման տարբերությունը նաև փորձի, գիտելիքի և

կրթության տարբեր մակարդակներ է ստեղծել՝ ազդելով կանանց՝ աշխատանք գտնելու կարողության վրա, ինչպես եզրակացնում է Ծիրակում ծառայություններ մատուցողը.

> *Լեռնային Ղարաբաղի կանայք և աղջիկները մշակութային առումով տարբեր են. սովորաբար նրանք տանն են, շատ երեխաներ ունեն (ոչ թե մեկ կամ երկու), նրանց են խնամում, հիմնական զբաղմունքը տնային տնտեսությունն ու գյուղատնտեսությունն է: Հիմա, եթե գյուղական վայրերում չեն գտնվում, պետք է փող աշխատելու նոր ճանապարհ գտնեն, նոր հմտություններ և մասնագիտություններ ձեռք բերեն. դա կենսական նշանակության հարց է: Նրանք նաև պետք է ձեռք բերեն փափուկ հմտություններ, համակարգչային հմտություններ: Կարևոր է նաև ֆինանսական գրագիտությունը, օրինակ, Արցախում [ոմանց] կոմունալ ծառայությունները վճարվում էին կառավարության կողմից»:*

Ահա մի դեպք Վայոց ձորում բնակվող փախստական կանանց փորձառությունից.

> *Ես գյուղում էի աշխատում, անասուններ ունեի: Իմը դաշտի գործերն էին և ֆերմային նայելը, երկուսն էլ ես էի անում: Բայց այստեղ, այս տանը ինձ թույլ չեն տալիս կենդանիներ պահել. տունը շատ փոքր է, հիմա էլ ձմեռ է ու գյուղատնտեսության համար լավ ժամանակ չէ: Ու հիմա չգիտեմ, թե ինչով կարող եմ զբաղվել»:*

Ընդունելով նկատելի տարբերությունները, որոնք առկա են քաղաքային բնակավայրերում ապրող, մասնագիտական ավելի բարձր որակավորում ունեցող փախստական կնոջ և գյուղաբնակ ու համապատասխան հմտություններ չունեցող կնոջ միջև, Լոռիում ծառայություններ մատուցողը ևս մեկ անգամ շեշտեց, թե ինչպես այն միջավայրը, որտեղ մեծացել է անհատը, կարող է խոչընդոտ դառնալ աշխատաշուկայում ինտեգրվելու առումով, ներառյալ նաև փախստական կանանց համար.

> *Լոռի եկել են հիմնականում գյուղական բնակավայրերի մարդիկ, Ստեփանակերտից շատ չեն: […] Նրանց համար դժվար է, որովհետև նրանք ավելի ցածր կրթական մակարդակ և հմտություններ ունեն: Բայց կան նաև մարդիկ, որոնց հետ աշխատանքը հեռանկարային է. [Արցախի կանայք] մեծ ներուժ են համայնքի զարգացման համար, եթե մենք ճիշտ օգտագործենք այս ռեսուրսը: Իսկ արցախցի շատ կանայք պատրաստ են սկսել զրոյից և վերարտակավորվել, միայն թե ինչ-որ բան սովորեն, որով կարող են գումար աշխատել»:*

Լեռնային Ղարաբաղում հմտություններ ձեռք բերած անձինք և աշխատանքային փորձ ունեցողներն առերեսվեցին ատեստավորման մարտահրավերին: Լոռիում հաստատված փախստական մի կին կիսվեց իր ունեցած խնդրով. «Ես բուժքույր էի, բայց դիպլոմներս մնացին [Ղարաբաղում]. Ես չեմ կարող այստեղ աշխատել առանց իմ դիպլոմի, և այստեղ չկա դիպլոմս վերականգնելու համակարգ»: Թեև կանանց մեծամասնությունը, չնայած նախկինում ունեցած մասնագիտություններին, ուժեղ կամք է դրսևորում վերաորակավորման և նոր հմտություններ ձեռքբերելու համար, ոմանց համար նման փոփոխությունը շատ ավելի դժվար է լինում: Արագածոտնից մի կին կիսվում է հաշմանդամություն ունեցող քրոջ աշխատանքի հետ կապված իր մտահոգությամբ.

> *Իմ [լսողության խնդիրներ ունեցող] քույրը միայն գորգագործություն գիտի, իսկ այստեղ նման գործարան կամ ձեռնարկություն չկա: Նա չի կարող աշխատել սպասարկման ոլորտում կամ մարդկանց հետ՝ իր հաշմանդամության պատճառով, ես իսկապես կասկածում եմ, որ նա երբևէ աշխատանք կգտնի»:*

Հաշմանդամություն ունեցող կանանց զբաղվածության վերաբերյալ հատուկ մտահոգություններ են բարձրացվել նաև ծառայություններ մատուցողների կողմից: «Հաշմանդամություն ունեցող շատ կանայք ցանկանում են աշխատել, բայց վստահություն չունեն, և նրանցից շատերը կրթություն չեն ստացել»,- նշել է Շիրակի մարզում ծառայություն մատուցողը: «Նրանք մրցունակ չեն աշխատաշուկայում. նրանց տնտեսական զորեղացմանն ուղղված աշխատանքը կարևոր է»,- ավելացրեց նա՝ նշելով, որ հաշմանդամություն ունեցող կանանց կարողությունների զարգացման հնարավորությունները սակավ են:

Որպես աշխատանք գտնելու հիմնական խոչընդոտ, ամենից հաճախ նշվում էր կանանց՝ խնամողի դերն իրենց ընտանիքներում: Թեև կանանցից ոմանք նշեցին, որ պետք է իրենց ժամանակը հատկացնեն ընտանիքի տարեցներին խնամելու համար, որոնք տեղահանվելուց հետո, սկսել են համատեղ ապրել (օրինակ՝ ամուսնու ծնողները), մյուսները նշել են, որ ընտանիքում հաշմանդամություն ունեցող անդամներին խնամք տրամադրողի իրենց դերն աշխատանքի շուկա մուտք գործելու հիմնական խոչընդոտն է, ինչպես, օրինակ, Վայոց ձորում հաստատված մի փախստական կնոջ դեպքում.

> *Ես չեմ կարող աշխատել, քանի որ մորս մահից հետո ես խնամում եմ հաշմանդամ քրոջս: Ես պետք է ամեն ինչ անեմ նրա համար, նույնիսկ նրա տակդիրները փոխեմ: Հաշմանդամություն ունեցող անձանց խնամքով օգնող կազմակերպություն չկա: Մենք այստեղ նորեկ ենք, և ես ծանոթ չեմ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող որևէ կազմակերպության: Միայն [մեկ կազմակերպություն] է կազմակերպում մեծահասակների տակդիրների բաշխում, այն էլ վաճառում է դրանք 50%-ով ավելի էժան գնով:*

Արցախում [կազմակերպությունները] աջակցություն էին ցուցաբերում, իսկ այստեղ՝ ոչ»:

Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը նույնպես կարևորում է հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերին հանդիպող մարտահրավերներն այս առումով.

> *Հաշմանդամություն ունեցող երեխաները շատ խնդիրներ ունեն, օրինակ՝ աուտիզմ ունեցող աղջկան դպրոց պետք է ուղեկցեն, նրանք չեն կարող մենակ լինել, ուստի մայրերը չեն կարող աշխատել: Ավելին, բացի հաշմանդամ երեխայից, մայրերի մեծ մասն ունի 5-6 և ավելի երեխա, և հնարավոր չէ աշխատել»:*

Երեխայի խնամքը, որպես կանանց աշխատաշուկա մուտք գործելու խոչընդոտ, նշվել է ոչ միայն հաշմանդամ երեխա ունեցող փախստական կանանց կողմից, այլև եղել է ամենաշատ քննարկվող խոչընդոտը մյուս փախստական կանանց կողմից: «Ես չեմ կարող աշխատել, պետք է որդուս խնամեմ»,- բացատրում է Վայոց ձորում բնակվող փախստական կինը: «Տանն աշխատելն ավելի հեշտ էր, քանի որ իմ հողն էի մշակում, անասուններին պահում, դաշտում աշխատում, և կարող էի միաժամանակ խնամել երեխայիս»: Լոռու մարզից մեկ այլ կնոջ համար հիմնական տարբերությունն իր երեխաների դպրոցական պայմաններն էր.

> *Այստեղ ես պետք է խնամեմ երեխաներին. այնտեղ [Լեռնային Ղարաբաղում] կարող էի նրանց տանը թողնել, նրանք մենակ կգնային դպրոց: Այստեղ ինձ օգնող չունեմ: Էնտեղ ունեի հարևաններ, որ օգնում էին երեխաներին, հիմա այստեղ մարդ չկա: Ես պետք է նրանց դպրոց տանեմ, հետ բերեմ, քանի որ դպրոցը հեռու է: Մոտակա դպրոցում նրանց համար տեղ չկա, երեխաներն էլ ծանոթ չեն միջավայրին: Եթե երեխաներին խնամեին, ես կարող էի վարսահարդարի աշխատանք գտնել»:*

Փախստական կանանց հետ զրույցներում հստակորեն վեր էր հանվում երեխաների խնամքի ծառայությունների կարևորությունն աշխատաշուկա հեշտ մուտք գործելու համար, ինչպես նաև մարզերում, հատկապես մայրաքաղաքից դուրս, նման ծառայությունների բացակայությամբ առաջացող խնդիրները: «Շատ ընտանիքներ կան, որոնք տեղափոխվում են Երևան, քանի որ այնտեղ ավելի շատ հնարավորություններ կան, ավելի շատ աշխատատեղեր և երեխայի խնամքի կազմակերպման ավելի շատ տարբերակներ»,- նշում է Արագածոտնում ծառայություն մատուցողը: Մանկապարտեզի տարբերակները նույնպես դժվար հասանելի էին, ըստ Կոտայքից հարցվողների, «քանի որ ընդունվելու համար նախապես պետք է գրանցվես ու սպասես, մինչև քո հերթը հասնի, կարող է անգամ երկու-երեք տարի տևել, իսկ [տեղահանված ընտանիքները] չէին կարող նախապես գրանցվել, քանի որ նոր էին եկել այստեղ»:

Այնուամենայնիվ, երեխաների խնամքի հարցում աջակցություն չունենալուց և եկամուտ ստանալու հարցում գենդերային խոչընդոտներից տուժած ամենախոցելի խմբերից մեկը կին գլխավորով ընտանիքներն էին: Լինելով ընտանիքի միակ կերակրողը՝ Արագածոտնից փախստական մի կին նկարագրում է, թե ինչպես է իր վրա ազդում երեխաների խնամքի ծառայությունների բացակայությունը.

> *Երեխայի խնամքն ինձ համար մեծ խոչընդոտ է: Երեխաների խնամքի տարբերակ կա, որն առաջարկում է մի կազմակերպություն, և իմ երեխան գնում է այնտեղ, բայց այն հասանելի է միայն վեց ամսով: Դրանից հետո ես չգիտեմ, թե ինչ եմ անելու. եթե ես աշխատանք գտնեմ, ո՞վ կպահի իմ երեխային: Ես կարող եմ մտածել միայն երեխաների մասնավոր խնամքի մասին, բայց սա չափազանց թանկ է, ես չեմ կարող դրա համար վճարել»:*

Երեխայի խնամքի պատշաճ ծառայությունների բացակայությունից հատկապես տուժում են կին գլխավորով այն ընտանիքները, որոնք ունեն նաև ընտանիքի հաշմանդամ անդամ, քանի որ այդ անձն անհրաժեշտ մասնագիտացված աջակցության կարիք ունի: Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը ընդգծեց, թե այս իրավիճակը որքան ծանր կարող է անդրադառնալ նման ընտանիքների վրա.

> *[Կին գլխավորով տնային տնտեսությունը] վեց ամսվա ընթացքում կառավարությունից աջակցություն է ստանում՝ 100.000 դրամ մեկ անձի համար, բայց վարձավճարը կարող է լինել 200-300.000 դրամ, և նրանք խուճապի մեջ են, թե ինչ կլինի հետո: Հետո շատերը գնում են գյուղեր, բայց գյուղերում իրենց [հաշմանդամություն ունեցող] երեխաների համար պայմաններ չկան: Գյուղ տեղափոխվելն ավելի էժան է, բայց ոչ աշխատանքի հնարավորություն կա, ոչ էլ ծառայություններ երեխաների համար, իսկ եթե գնում են Երևան, որտեղ ծառայություններ կան, դժվար է հոգալ ապրելու ծախսերը»:*

Նույնիսկ եթե նրանք փորձում են եկամուտ ստանալու այլընտրանքային ուղիներ գտնել, օրինակ, մասնավոր բիզնես հիմնել, կին գլխավորով ընտանիքներում, որտեղ կանայք ընտանիքի հիմնական կերակրողներն են, չունեն նախնական ներդրում անելու ֆինանսական միջոցներ: Շիրակում ութ հոգանոց ընտանիքը գլխավորող փախստական կինը պատմում է իր ընտանիքի համար գումար վաստակելու տարատեսակ ջանքերի մասին.

> *Մեր ընտանիքում ոչ ոք չի աշխատում, ես դիմահարդարման դասընթացի եմ հաճախում, բայց շատ թանկ է՝ 70 հազար դրամ: Աշխատել սկսելու համար ինձ անհրաժեշտ է առնվազն 200.000 դրամ՝ սարքավորումներ գնելու համար, որպեսզի կարողանամ սկսել աշխատել, և ես դա ինձ ֆինանսապես թույլ չեմ կարող տալ»:*

Նման պայմաններում կին գլխավորով տնային տնտեսություններն ամենից հաճախ կախված են պետական աջակցությունից՝ ապրելով անորոշության մեջ, թե ինչպես են նրանք բավարարելու իրենց ընտանիքի հիմնական կարիքներն աջակցության դադարից հետո: Արագածոտնում բնակվող փախստական մի կին կիսվել է նման օրինակով.

> *Մենք կառավարությունից աջակցություն ունենք՝ 100 հազար դրամի չափով միանվագ աջակցություն և վեց ամսով վարձակալության համար՝ ամսական 50 հազար դրամ: Եթե ես աշխատանք չգտնեմ, ես չեմ կարողանա վճարել վարձակալության համար աջակցության դադարից հետո: Մոտենում է ձմեռը, և ես մտահոգված եմ, որ չեմ կարողանա տաքացնել տունը և նույնիսկ տուն վարձել: [...] Ես աշխատել եմ իմ ամբողջ կյանքում՝ նույնիսկ առանց արձակուրդի: Ես ինձ վատ եմ զգում, որ նստում եմ տանը և ոչինչ չեմ անում: Ես ուրիշ մարդ եմ դարձել: Շատ եմ ուզում աշխատել»:*

Այս հարցվողը միակ կինը չէր, ով ընտանիքի միակ կերակրողն է, որ մտահոգություն հայտնեց գալիք ձմռան հետ կապված. փաստացի կին գլխավորով բոլոր ընտանիքները զրույցներում նույն մտահոգությունն էին հայտնել: Ճիրակում բնակվող մի կին թվարկեց այն իրերի և սարքավորումների շարքը, որոնց կարիքն ունի իր ընտանիքը ձմռանը գոյատևելու համար, որոնք նա չի կարող գնել, քանի որ չի աշխատում, իսկ մարզը հայտնի իր խստաշունչ ձմեռով.

> *Մեզ անհրաժեշտ են անկողնային պարագաներ, բաճկոններ, տաք հագուստ, հատկապես երեխաների համար. գազը թանկ է, մենք օգտագործում ենք այն միայն երեկոյան մեկ-երկու ժամ, բայց Ճիրակում շատ ցուրտ ձմեռ է սպասվում, սա տարբերակ չի կարող լինել. պատերն անցքերով են, սենյակները ցուրտ են»:*

Թեև որոշ կազմակերպություններ բաժանել էին ձմեռման համար անհրաժեշտ պարագաներ, հարցվածների մեծ մասը դեռ պնդում էր, որ կենսական խնդիրները մնում են չլուծված: Լուծումը, ըստ նրանց, այն էր, որ կարողանան մուտք գործել աշխատաշուկա, որպեսզի կարողանան բավարարել իրենց ընտանիքների կարիքները՝ պետական սոցիալական պաշտպանության համակարգից կախված լինելու փոխարեն: Արագածոտնի մարզից հարցվողներից մեկի խոսքն ամփոփել է՝ այս հետազոտության մաս կազմող բազմաթիվ կարծիքներ. «Արցախցիներն աշխատասեր են, և եթե նրանց հաջողվի աշխատանք գտնել այստեղ, ապա դա կլինի ի շահ ողջ Հայաստանի, նրանք բոլորն ուզում են այստեղ աշխատել»:

Կրթության հասանելիությունը

Կրթությունը կենսական նշանակություն ունի դեռահաս աղջիկների կյանքում՝ որպես հիմնական պաշտպանիչ գործոն՝ ոչ միայն ապահովելով անվտանգ միջավայր, այլև խթանելով աղջիկների դիմակայունությունը, ինքնավստահությունը և որոշումներ կայացնելու կարողությունները, որոնք բոլորն էլ նվազեցնում են գենդերային հիմքով բռնության նկատմամբ խոցելիությունը:[18] Ավելին, հասակակիցների հետ շփումները և սոցալիզացիան, որը տեղի է ունենում դպրոցներում, կարող է որոշիչ լինել ինչպես սոցիալական մեկուսացումը, այնպես էլ օժանդակ ծառայությունների անհասանելիությունը չեզոքացնելու համար: Միևնույն ժամանակ, արտակարգ իրավիճակներում աղջիկները հաճախ են դադարում հաճախել դպրոց, քան տղաները, մինչդեռ ուսումը կիսատ թողնելը կարող է անհամաչափորեն մեծացնել՝ գենդերային հիմքով բռնության թիրախ դառնալու հավանականությունը:[19]

Ըստ ՅՈՒՆԻՍԵՖ-ի զեկույցների՝ հայ փախստական երեխաների երկու երրորդը ներկայումս դպրոց է հաճախում:[20] Սույն զեկույցի տվյալների հավաքագրման մեջ ներգրավված դեռահաս հարցվողների մեծամասնությունը դպրոց էր հաճախում, սակայն դեռահասների մի մասը կրթությունից դուրս էր մնացել: Քննարկվել են բազմաթիվ պատճառներ, թե ինչու իրենք կամ իրենց հասակակիցները չեն ցանկանում ուսումը շարունակել, և ամենատարածված բացատրություններից մեկը՝ աղջիկների ցանկությունն էր ֆինանսապես ապահովել իրենց ընտանիքը: Արագածոտնում ծառայություններ մատուցողներից մեկը, խոսելով իր կազմակերպության շահառուներից մեկի մասին, ներկայացրեց հետևյալ իրավիճակը.

> *Այս աղջկա երազանքը պատմություն սովորելն էր, բայց հետո տեղի ունեցավ պատերազմը, և նա չկարողացավ իրականացնել իր երազանքը: Նա թողեց դպրոցը և սկսեց ծաղկի խանութում դիզայներ աշխատել: Լավ է, որ նա տանը չի մնացել, բայց նա նաև չի օգտագործել իր պոտենցիալը: Նա չշարունակեց կրթությունը, քանի որ ընտանիքը ֆինանսական մեծ խնդիրներ ուներ, ու աղջիկը ցանկանում էր օգնել, բայց իհարկե պատերազմական տրավմայի գործոնը ևս առկա է: Նրա մեծ երազանքը սովորելն է, բայց այս պայմաններում նա նախընտրում է գումար վաստակել ծաղկի խանութում»:*

Հարցված փախստական աղջիկներից մի քանիսը՝ 15 տարեկան և ավելի մեծ, նմանատիպ ձգտումներ ունեին: «Ես այլևս չեմ ուզում կրթություն ստանալ, ավելի լավ է վարսահարդարման կամ մատնահարդարման դասընթացների մասնակցեմ, որպեսզի օգնեմ իմ ընտանիքին»,- ասաց նաև Գեղարքունիքում հաստատված փախստական մի աղջիկ:

[18] Inter-Agency Network for Education in Emergencies (2021), “Mind the Gap: The state of Girl’s education in Crisis and Conflict”, հասանելի՝ https://inee.org/sites/default/files/resources/INEE%20Mind%20the%20Gap%20Report%20v2.0%20LowRes.pdf, 28-29

[19] Inter-Agency Network for Education in Emergencies (2021), “Mind the Gap: The state of Girl’s education in Crisis and Conflict”, հասանելի՝ https://inee.org/sites/default/files/resources/INEE%20Mind%20the%20Gap%20Report%20v2.0%20LowRes.pdf, 31-33

[20] UNICEF (2023), “Two-thirds of refugee children in Armenia enrolled in school, efforts must now focus on expanding access to education for all children”, հասանելի՝ https://www.unicef.org/press-releases/two-thirds-refugee-children-armenia-enrolled-school-efforts-must-now-focus-expanding

Մի քանի այլ աղջիկներ պատմեցին, որ չնայած նրանք ցանկանում են շարունակել կրթությունը, իրենց ապաստանած համայնքներում համապատասխան հնարավորություններ չկան: Արագածոտնից մի դեռահաս աղջիկ օրինակ է բերել.

> *Ես ապրում եմ մոտակա գյուղում: Ես քոլեջ էի հաճախում [Լեռնային Ղարաբաղ] և սովորում այնտեղ ռուսաց լեզու: Այստեղ ռուսերենի դասեր չկան, ուստի ես քոլեջ չեմ գնում: Ես շատ եմ ձանձրանում տանը մնալուց, և ինձ շատ վատ եմ զգում, որ չեմ կարողանում ավարտել կրթությունը: Երևանում նման պարապմունքներ կան, բայց դրա համար ինձ վկայական է պետք, իսկ Արցախից գնալիս չհասցրեցինք այն մեզ հետ վերցնել»:*

Դպրոցը լքելու մեկ այլ պատճառի հիմքում Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կրթական համակարգերի տարբերություններն են: Ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ որոշ աղջիկներ նույնպես հաստատեցին, որ իրենք կամ իրենց քույրը ծրագրում են լքել դպրոցը իններորդ դասարանն ավարտելուց հետո:

«Միջավայրի կտրուկ փոփոխությունը», Վայոց ձորում բնակվող դեռահաս աղջկա ձևակերպմամբ, աղջիկների դպրոց հաճախելու վարանման ևս մեկ տարածված պատճառ է: Աղջիկների՝ վերը նշված սոցիալականացման բազմաթիվ մարտահրավերները, և Հայաստանում ուսումնական ծրագրերի տարբերությունը (հաճախ բնութագրվում է, որպես շատ ավելի դժվար, քան Լեռնային Ղարաբաղում) զգալիորեն նվազեցնում են կրթությանը մասնակցելու նրանց մոտիվացիան: Վայոց ձորում ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ մեկ այլ դեռահաս փախստական աղջիկ կիսվեց իր ընկերոջ փորձով, որը ցանկանում էր թողնել դպրոցը.

> *Մի ընկեր ունեմ, նույն դպրոցում ենք սովորում, Արցախում էլ միասին էինք սովորում: [...] Բայց այստեղ գալուց հետո նա կորցրել է սովորելու ոգևորությունը և սովորելու հետ կապված շատ խնդիրներ ունի: Այստեղ սովորելը շատ դժվար է, դասերն ավելի դժվար են, և նա ամաչում է շփվել, նրա հարաբերությունները [հասակակիցների հետ] լավ չեն»:*

Այնուհետև նույն աղջիկը խոսեց նաև իր օտարված լինելու զգացումի մասին. «Դպրոցում մենք մենակ ենք մնում, քանի որ շատ ամաչում ենք որևէ մեկին մոտենալուց: Դասընկերները խմբերով են շփվում, և ես չեմ զգում, որ այդ խմբերից որևէ մեկի մասն եմ»: Որևէ խմբի մաս չլինելու զգացողությունն առավել սրվում է նաև հյուրընկալող համայնքի որոշ դպրոցականների վարքագծի պատճառով: Ինչպես Արմավիրում բնակվող մի փախստական աղջիկ նկարագրեց. «Կան երեխաներ, որոնց շնորհիվ մեզ լավ ենք զգում, կան երեխաներ, որոնք ստիպում են մեզ օտար զգալ»: Փախստական աղջիկները նկարագրեցին իրենց հասակակիցների հնչեցրած մի քանի արտահայտություններ, որոնք իրենց դրել են անհարմար և անցանկալի դրության մեջ,

օրինակ. «Դու փախստական ես, հայրենիք չունես»,- ասել են Վայոց ձորից փախստական մի աղջկա. «Դուք արդեն ստացե՞լ եք ձեր միլիոնները»,- հարցրել են Արմավիրից մի դեռահաս փախստական աղջկա: Լոռիից մի դեռահաս աղջիկ կիսվել է մեկ այլ օրինակով, որը նրան հատկապես վիրավորական է թվացել և որի արդյունքում նա չի ցանկանում ընկերություն հաստատել տեղի համայնքի երեխաների հետ.

> *Դասարանում երեխաներն ասում են, որ եթե մնայինք Արցախում, կփրկվեր Արցախը: Դրանից հետո էլ չեմ ուզում շփվել նրանց հետ: Արցախում ընկերասեր էի, բայց այստեղ տեղի աղջիկների հետ չեմ կարող ընկերություն անել, քանի որ մեզ մեղադրում են: Արցախի տղաները մասնակցել են պատերազմին, զոհվել են, իսկ մեզ մեղադրում են…»:*

Ի վերջո, արձանագրվեցին նաև ուսուցիչների անկարեկից մեկնաբանությունների օրինակներ՝ սկսած փախստականներին Ղարաբաղը լքելու համար մեղադրելուց և նրանց բարբառը անհարկի մեկնաբանելուց («Արցախում թուրքերե՞ն եք խոսել» ըստ Լոռու մարզից մի հարցվողի պատմածի) վերջացրած այլ օրինակներով:

Վերոնշյալ խնդիրների պատճառով շատ աղջիկներ դպրոցը չեն ընկալում, որպես ապահով միջավայր, ինչպիսին այն պետք է լիներ իրենց համար: Փոխարենը, մի շարք դեռահաս հարցվողների համար դա միայն սրում է օտարված լինելու խորացող զգացումը և հասակակիցներից մեկուսացված լինելը:

Կենսապայմաններն ու միջավայրը

Հայաստանում տեղահանված ողջ բնակչությունը բախվել է բնակարան գտնելու հետ կապված խնդիրներին: Բարձր գները, վարձակալած բնակարանների պայմանները, տարրական կահույքի կամ պայմանների բացակայությունը փախստական հարցվողների բարձրաձայնած դժվարություններից ընդամենը մի քանիսն են, որոնց ավելանում է նաև վարձակալության և կոմունալ ծառայությունների համար անհրաժեշտ վճարները: Լոռիում բնակվող դեռահաս աղջիկը բացատրեց, թե ինչ դժվարությունների միջով է անցնում իր ընտանիքն այս հարցում.

> *Պետությունն աջակցում է Արցախի ժողովրդին, շատ է օգնում, առանց դրա մենք չէինք կարող գոյատևել: Մարդիկ, ովքեր տներ են վարձակալության տալիս, վարձն այնքան շատ են բարձրացնում, հատկապես, եթե ընտանիքի անդամները շատ են: Սեփականատերը գիտի, որ որքան շատ անդամներ կան ընտանիքում, այնքան նրանք ավելի մեծ աջակցություն են ստանում կառավարությունից, ուստի բարձրացնում են վարձավճարը»:*

Թեև հայ փախստականների համար պատշաճ կացարանների բացակայության և գենդերային հիմքով բռնության վտանգի միջև հնարավոր կապերն արդեն իսկ քարտեզագրված են[21], հարցվածներից շատերը նշել են նմանօրինակ խնդիրների մասին: Ինչպես նշվեց վերևում, կին գլխավորով տնային տնտեսությունները հատկապես խոցելի են, երբ խոսքը գնում է եկամուտ ստեղծելու մասին, քանի որ և՛ ընտանիքի միակ կերակրողն են, և՛ աշխատաշուկա մուտք գործելիս հանդիպում են գենդերային խտրականության: Ըստ Երևանում ծառայություններ մատուցողի՝ բնակարան վարձելը ևս մեկ խոչընդոտ է, որին առերեսվում են կին գլխավորով ընտանիքները՝ հաշվի առնելով և՛ ընտանիքի համար կացարան գտնելու հրատապ անհրաժեշտությունը, և՛ դրա համար առկա սահմանափակ ռեսուրսները.

> *Մենք ունենք կին գլխավորով ընտանիքի պատմություն: Կինն աշխատել է Ստեփանակերտում, բայց այստեղ նրա համար աշխատանքի տարբերակներ չկան: Բնակարան չի գտնում: Բոլոր լուծումները, որ տալիս են, երկու-երեք ամիս տևողությամբ են, ոչ ավելին: Երևանցիները չեն ուզում տուն վարձով տալ փախստականներին: Ես տեսել եմ, թե ինչպես են այս ընտանիքին երեք, չորս անգամ մերժել: Երբ հարցրինք, թե ինչու, ասում էին՝ մենք Արցախից ընտանիք չենք ուզում: Որովհետև ընտանիքում կարող է լինել յոթ, ութ կամ տասը հոգի, որ փորձում են տեղավորվել փոքրիկ բնակարանում, ուստի սեփականատերերը կարծում են, որ բնակարանը կավերեն»:*

[21] UNHCR (2023), "Armenia Rapid Needs Assessment Report", available at https://reliefweb.int/attachments/683d0181-e283-4f07-8ae8-5e65a276b62e/Rapid%20Needs%20Assessment% 203%20November%202023.pdf, 9

Ավելին, որոշ ծառայություններ մատուցողներ վարձակալության որոշ գովազդների ականատես լինելուց հետո մտահոգություններ են հայտնել միայնակ կանանց և կին գլխավորով ընտանիքների համար: Ինչպես նշեց Կոտայքում ծառայություններ մատուցողներից մեկը.

> *Մեր սոցիալական աշխատողը սոցիալական ցանցերում բաժանորդագրվել է խմբի, որտեղ գովազդում են վարձով տներ, և տղամարդկանց կողմից շատ հայտարարություններ են եղել՝ «Տունս կտամ արցախցի միայնակ կնոջը, որ մենք միասին ապրենք» բովանդակությամբ: Սոցիալական աշխատողը դա համարում է մտահոգիչ երևույթ և գենդերային հիմքով բռնության վտանգ, քանի որ միայնակ կանայք խոցելի են, նրանք չունեն աջակցություն կամ ապրելու տեղ»:*

Նույնիսկ այն դեպքում, երբ ընտանիքը կացարան է գտնում, տան տեղադիրքը, սենյակների տեղաբաշխվածությունը, առկա պայմանները, անգամ բնակիչների թիվը կարող է խիստ խնդրահարույց լինել և իր բացասական ազդեցությունն ունենալ հատկապես կանանց և աղջիկների վրա: Նախ և առաջ, հարցվածների ճնշող մեծամասնությունը հայտնել է կացարանների գերբնակեցվածության մասին: Հայաստան տեղափոխվելուց հետո շատ ընտանիքներ՝ ներառյալ ազգականները, սկսել են միասին ապրել՝ հոգալու համար կացարանի, խոցելի անձանց խնամքի ծախսերը և այլն: Հարցման մասնակիցները նշեցին, որ մեծ թվով ընտանիքներ են ապրում մեկ սենյականոց տներում կամ բնակարաններում: Տավուշից փախստական մի կին նշում է իր ընտանիքի բոլոր անդամներին. «Տասներկու հոգի, այդ թվում՝ յոթ երեխաներ՝ տղաներ ու աղջիկներ, ապրում են այս շատ փոքր սենյակում՝ մոտ 10 մ^2, իսկ տարիքը՝ սկսած երեք տարեկանից մինչև քառասուն»: Նրա ընտանիքում նաև կա երկու ամուսնական զույգ: Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը ներկայացնում է, թե որքան մտահոգիչ կարող է լինել նման միջավայրը, հատկապես, երբ անդամներից մեկը ունի հաշմանդամություն. «Խնդիրը բարդանում է, երբ [փախստականները] ապրում են մեծ ընտանիքներում, և նրանք պետք է ապրեն մեկ սենյակում՝ հաշմանդամ երեխայի, տարեցների, մահճակալներն անգամ չեն բավականացնում, մարդիկ հատակին են քնում, հաշմանդամություն ունեցող երեխան հաճախ գիշերները լաց է լինում, և ոչ ոք չի կարող քնել, և դա խնդիրներ է առաջացնում»:

Խոսելով հատկապես կանանց վրա նման գերբնակեցված բնակարաններում ապրելու ազդեցության մասին՝ հարցվողները լարվածության աճող զգացումը կապել են ընտանիքի կին անդամների, մասնավորապես՝ կանանց նկատմամբ բռնության հետ: Լոռիում բնակվող փախստական մի կին թեև տեղեկացրեց, որ տեղյակ չէ իր համայնքում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի մասին, նա ընդգծեց, որ ենթադրում է, որ դա տեղի կունենա վատ կենսապայմանների պատճառով. «Միանշանակ [կացարանի հետ կապված] խնդիր կա:

Իսկ եթե բռնության հետ կապված դեռ խնդիր չկա, կարող է և լինել հետո, քանի որ տասը, տասներկու հոգի ապրում են մի փոքրիկ տանը կամ սենյակում»: Նման փոխկապակցվածության մասին նշում են նաև ծառայություններ մատուցողները, օրինակներից մեկը Արագածոտնից մի հարցվողի նկարագրած փորձառությունն է.

> Կան երիտասարդ զույգեր, որոնք միայնակ են ապրել Լեռնային Ղարաբաղում: Մենք ունենք մի երիտասարդ կին, ով կորցրել է իր ամուսնուն, և նրանք մինչև այստեղ գալը մենակ էին ապրում: Երբ նա եկել է Հայաստան, ստիպված է եղել ապրել իր մեծ ընտանիքի հետ, և բռնության է ենթարկվել ամուսնու ծնողների կողմից: Նրա համար մենք աշխատանք ապահովեցինք և օգնեցինք նրան հեռանալ մարզից: Բայց կան շատ ընտանիքներ, որոնք նախկինում առանձին էին ապրում, իսկ հիմա ապրում են ընդլայնված ընտանիքի կամ մեկ այլ ընտանիքի հետ փոքրիկ տանը, և դա մեծացնում է լարվածությունը տան ներսում, և մեծացնում կանանց նկատմամբ բռնության վտանգը»:

Թեև արտակարգ իրավիճակների համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ գերբնակեցման հետ կապված լարվածությունը կարող է հանգեցնել զուգընկերոջ կողմից բռնության և ընտանեկան բռնության այլ ձևերի դրսևորման, ինչպես նշել են գնահատման մասնակիցները, հատկապես երբ համակեցությունը մի բնակարանում է կամ տանը, որտեղ բացակայում են համապատասխան առանձնացված սենյակներ և դռներ, հատկապես քնելու և հագուստ փոխելու համար: Այս հանգամանքը կարող է մեծացնել սեռական ոտնձգությունների և բռնությունների ենթարկվելու վտանգը:[22] Անձնական տարածքի բացակայության նման խնդիրներ արձանագրվել է հայ փախստականների շրջանում և բազմիցս բարձրաձայնվել հարցվողների կողմից: Շիրակում ծառայություն մատուցողն իր մտահոգությունները հայտնեց փախստականների ներկայիս կենսապայմանների վերաբերյալ.

> Ես վստահաբար կարող եմ ասել, եթե դուք ապրում եք մեկ սենյակում՝ տասներկու հոգով, առանց առանձնացված ննջասենյակի, առանց որևէ անձնական տարածքի, ինչպե՞ս կարող եք ձեզ հարմարավետ զգալ: Սա վերաբերվում է ոչ միայն աղջիկներին, սակայն դրանից հատկապես տուժում են աղջիկները: Պատկերացրեք, ձեր տանը երկու ընտանիք կա՝ երիտասարդներ, դեռահասներ, ծնողներ, հիվանդ պապիկ, և բոլորը մեկ սենյակում, բավարար թվով մահճակալներ չկան. ոչ ոք իրեն լավ չի զգա»:

[22] Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, հասանելի է՝ https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf , 52

Հենց դեռահաս հարցվողներն են նշել, որ աղջիկները դառնում են առանձնահատուկ խոցելի անձնական տարածքի բացակայության հետևանքով: Ինչպես պատմում է Լոռիից մի աղջիկ. «Դեռահաս աղջիկների համար փոքր տունը, տարածքը խնդրային է: Օրինակ, դժվար է դասերը պատրաստել, քանի որ աղմուկ է, ընտանիքի անդամները շատ են, կամ երբ ուզում ես հագուստ փոխել, դա հարմար չէ: Մենք սովորաբար գնում ենք զուգարան և փակում դուռը»: Տավուշից մի փախստական կին ընդգծեց, որ որոշ տնային տնտեսություններում, ինչպես իրենց դեպքում է, անձնական տարածքի հարցեր է նաև, երբ չկան բավարար թվով մահճակալներ. ընտանիքի անդամները միասին են քնում, ոչ բոլորն ունեն առանձին մահճակալներ»:

Բնակարանների գերբնակեցումը լուրջ խնդիրներ է առաջացնում նաև հիգիենայի և սանիտարական տարրական կարիքների բավարարման հարցերում: Ինչպես նշեց Լոռիում ծառայություններ մատուցողը, «չորս ընտանիք կարող է ապրել նույն տեղում, և նույնիսկ լողանալը մեծ խնդիր է»: Այս խնդրին հաճախ ավելանում է նաև բնակարանային վատ պայմանները: Որոշ կանայք նշում էին, որ տաք ջուր չկա, և «այնքան ցուրտ է, որ չես կարող լվացվել», ինչպես նշեց Շիրակից հարցվողը՝ հավելելով, որ դա հատկապես վերաբերում է կանանց և աղջիկներին: «Մեր սանհանգույցն առանց ջրանցքի է: Ամեն անգամ, երբ լողանում էինք, մեր տակի հարևանը բողոքում էր»,- պատմում է Կոտայքից փախստական մի կին և ավելացնում. «Տասը հոգով ենք տանը, ինչպե՞ս չլողանանք»: Վայոց ձորից մի դեռահաս աղջկա համար տան անհարմարությունները հանգեցրել են մեծ խնդիրների՝ անձնական տարածքի համար «որտեղ ապրում ենք, պայմանները վատ են, տունը՝ քանդված. լոգարանը դուռ չունի»:

Խիստ մտահոգիչ է, որ ըստ հարցվածների մի զգալի մասի՝ իրենց տնային տնտեսություններում ընդհանրապես լոգարան, անգամ զուգարան չունեն: Եթե ոմանք գնում էին հարևանի տուն՝ լոգանք ընդունելու, դադարում էին այցելել, քանի որ «շատ մարդիկ կան, որ իրենց հարմարավետ չեն զգում»,- ինչպես նշեց Տավուշում հաստատված մի փախստական կին: Մյուսները, որոնք լոգարան չունեն, «լողանալու միջոց կգտնեն», ինչպես նկարագրեց Լոռիում ծառայություն մատուցողը: «Ջուրը տաքացնում են վառարանի վրա և մի դույլ ջրով լողանում են. նրանք կարող են օգտագործել առանձին մեկ այլ սենյակ դա անելու համար»:

Կարևոր է գիտակցել, որ լոգանք ընդունելու հնարավորությունների հետ կապված խնդիրները տարբեր կերպ են ազդում փախստական տղամարդկանց և կանանց վրա: Կանայք և աղջիկները սանիտարահիգիենիկ պայմանների տեսանկյունից ավելի շատ անձնական տարածքի և առանձնանալու կարիք ունեն, հատկապես դաշտանային ցիկլի հետ կապված, քան տղամարդիկ և տղաները: Արտակարգ իրավիճակներում անձնական տարածքի բացակայության, սոցիալական արգելքների և դաշտանային ցիկլի հետ կապված հիգիենան ապահովելու հետ կապված անհարմարության պատճառով գերբնակեցված տներում կամ կիսակառույց շինություններում ապրելը կարող է խորացնել դեռահաս աղջիկների և կանանց առջև

ծառացած մարտահրավերները:[23] Ավելին, տնային տնտեսություններում պատշաճ կամ մատչելի զուգարանների բացակայությունը կարող է նաև մեծացնել ոտնձգությունների և գենդերային հիմքով բռնության այլ դրսևորումների ռիսկը: Հաշվի առնելով դեֆեկացիայի, դաշտանի հանգամանքը և անձնական տարածքի հաճախակի բացակայությունը, կանայք և աղջիկները կարող են նախընտրել գնալ զուգարան կամ օգտագործել լոգասենյակները մութ ժամանակ, ինչը կանանց, աղջիկներին և այլ խոցելի խմբերին դնում է ոտնձգությունների և սեռական բնույթի հարձակումների վտանգի տակ:[24] Նման զգացողություններն ու մտահոգությունները հաճախ են արձանագրվել նաև հարցվողների շրջանում: Տներում զուգարաններ չունեցող մարդկանց մեծամասնության համար այլընտրանքը տանից դուրս գտնվող լոգարանների և զուգարանների օգտագործումն էր: «Ես մի ընտանիք գիտեմ, որ տանից դուրս զուգարան ունի, դրսում լոգանք ընդունելու հարմարություն կա, բայց այնտեղ շատ ցուրտ է և ոչ հարմարավետ»,- բացատրում է Լոռիից դեռահաս աղջիկը: Լոռիում ծառայություններ մատուցողներից մեկը նաև անդրադարձել է այն կանանց և աղջիկների մտահոգություններին, որոնք ստիպված են եղել օգտվել նման պայմաններից.

> *Կանանց և աղջիկների համար կարող է անհարմար լինել զիշերը դրսի զուգարանից օգտվելը, թեև տեղացիներն օգտագործում են այն, քանի որ սովոր են դրան: Արցախցիներից շատերի համար սա նորություն է, ուստի նրանց համար դժվար է ընտելանալ այս պայմաններին: Տեղացիների ու արցախցիների միջև լարվածության պատճառներից մեկն այն է, որ երբ արցախցիները եկել են, տեղացիներն առաջարկել են նրանց ապրել իրենց տներում, սակայն արցախցիները ասել են. «ես չեմ կարող նման տանը ապրել», և տեղի բնակիչները վիրավորվել են»:*

Ի վերջո, տների աշխարհագրական տեղակայումը և հարակից ենթակառուցվածքների բացակայությունը նույնպես անվտանգային հարցեր կարող են ստեղծել կանանց և աղջիկների համար: Թեև շատերը նշում էին, որ տնից դուրս գալու վախը կապում են պատերազմի ժամանակ իրենց ունեցած անապահովության զգացողության հետ, մյուսները որպես անհանգստության պատճառ մատնանշեցին այն կոնկրետ գործոնները, որոնք խանգարում են նրանց ապահով զգալ իրենց համայնքում: Տավուշում հարցվողներից մեկը նկարագրել է, որ իր թաղամասում լուսավորությունը «առկա է միայն գլխավոր ճանապարհին, և մոտ տասը րոպե է տևում տանից հիմնական ճանապարհին հասնելը, որտեղ շուկա և այլ հարմարություններ կան»: Լոռիից դեռահաս մի աղջիկ, պատմում էր, թե որքան է վախենում երեկոյան վեցից հետո տանից դուրս գալիս. «Մեր տան շուրջը լույս չկա: Մենք ապրում ենք առանձնացված մի տանը, քաղաքի կենտրոնից դուրս:

[23] See e.g. Columbia University and International Rescue Committee (2017), A toolkit for Integrating Menstrual Hygiene Management (MHM) into Humanitarian Response: Full Guide, հասանելի է՝ https://www.publichealth.columbia.edu/file/2477/download?token=lRG16zzR

[24] Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, հասանելի է՝ https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf, 282

Դա քաղաքի ծայրամասն է, ուր հասնելու համար բավականին պետք է քայլել, հեռու է, հետն էլ լուսավորություն չկա, իսկ երեկոյան դրսում մութ է»:

Բարձր գները, գերբնակեցվածությունը, անձնական տարածքի, զուգարանների և լոգարանների բացակայությունը կանանց և աղջիկների համար կացարանների հետ կապված մարտահրավերներից ընդամենը մի քանիսն են: Կանայք և աղջիկներ խոսում են բազմաթիվ այլ խնդիրների մասին, որոնք են՝ լվացքի մեքենայի բացակայությունը, տանտերերի կողմից տան սպասքը կամ խորդանոցն օգտագործելու արգելքը կամ տաք ջրի բացակայությունը: Այս հանգամանքներն առավելապես ազդում են կանանց վրա, քանի որ նրանցից է ակնկալվում հոգալ կենցաղային հարցերը, լվացքի հարցը, սնունդի պատրաստում և այլն: Ընտանիքները, որոնք ունենք հաշմանդամություն ունեցող անձ, լուրջ խնդիր է, երբ բնակարանը երրորդ կամ չորրորդ հարկում է գտնվում: Սա հատկապես խնդիր է խնամողների համար, որոնք սովորաբար մայրերն են: Ինչպես նշում է Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը՝ ավելացնելով, որ «պետք է գրկած տանեն երեխաներին, և դա ֆիզիկական մեծ դժվարություն է մայրերի համար. կա՛մ անում ես դա, կա՛մ երեխային թողնում ես տանը՝ մեկուսացված»: Այնուամենայնիվ, չնայած նկարագրված բոլոր դժվարություններին, մի շարք փախստական հարցվողներ ունեին մեկ կարևորագույն առաջնահերթություն՝ հույս, որ նրանք կկարողանան իրենց թույլ տալ ձմռանն ունենալ տանիք, անկախ նրանից, թե ինչպիսի կենցաղային պայմաններ կարող են լինել իրենց ընտանիքում:

ԳՀԲ քարտեզագրված միտումները

Թեև Հայաստանում գենդերային բռնության մասին ներկայացված հաղորդումների սակավությանը, որը նաև համաշխարհային մասշտաբով առկա խնդիր է, որը խոչընդոտում է հասկանալ ԳՀԲ-ի իրական շրջանակն ու չափը, գնահատմանը մասնակցած հարցվողները կիսվել են իրենց համայնքներում բռնության միտումների վերաբերյալ բազմաթիվ պատկերացումներով: ԳՀԲ-ի դեպքերն ու սպառնալիքները հասկանալու համար, որոնց ենթարկվել են փախստական կանայք և աղջիկները, գնահատումը պետք է արտացոլի նրանց փորձը՝ սկսած պատերազմից տուժած հայրենի համայնքներից մինչև տեղահանվելուց հետո ապաստանած համայնքները: Հաշվի առնելով բռնության տարբեր ձևերը, որոնց անդրադարձ է կատարվել հետազոտության սկզբում, ինչպես նաև առանձնացնելով բռնության առավել տարածված տեսակները, այս գլուխը կվերլուծի ԳՀԲ միտումները չորս տարբեր դիտանկյուններից՝ գենդերային հիմքով բռնություն կոնֆլիկտային իրավիճակներում, զուգընկերոջ կողմից բռնություն, ընտանիքում գենդերային հիմքով բռնության այլ ձևեր և հյուրընկալող համայնքներում ոչ ընտանեկան գենդերային հիմքով բռնությունը, և այնուհետև կդիտարկի որոշ գործոններ, որոնց պատճառով փախստական կանայք և աղջիկները չեն հայտնում իրենց հանդեպ իրականացված բռնության մասին:

Գենդերային հիմքով բռնությունը հակամարտությունների ժամանակ

Ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ փախստական կանանց ու աղջիկների հետ զրույցներում հաճախ էր բարձրաձայնվում շրջափակման և պատերազմի հետևանքով առաջացած տրավմայի, ինչպես նաև սթրեսի և վախի մասին, որ հատկապես զգացել են կանայք և աղջիկները: Հարցվածներից շատերը, խոսելով Լեռնային Ղարաբաղում իրենց ապրած դժվարությունների մասին, ուշադրություն են հրավիրել հայ կանանց և աղջիկների նկատմամբ իրականացվող բռնությունների վրա: Գենդերային և հատկապես սեռական բռնությունը, որն ըստ նրանց նկարագրության՝ օգտագործվում է որպես հայերի դեմ պատերազմի զենք, և նման բռնության ազդեցությունը նրանց վրա, ովքեր դա զգացել են, ինչպես նաև այն աղջիկների և կանանց վրա, որոնք ապրել են դրա սպառնալիքի տակ, պետք է ճանաչվեն և փաստաթղթավորվեն՝ թե՛ Հայաստանում փախստականների աջակցության մեջ ԳՀԲ բաղադրիչը ներառելու և թե՛ հանրային օրակարգում բռնության նման դեպքերի մասին իրազեկվածությունը բարձրացնելու համար:

2023 թվականի սեպտեմբերին արդեն իսկ փաստագրվեցին տարբեր հաղորդումներ հայ փախստական կանանց նկատմամբ սեռական բռնության կազմակերպված հրահրման մասին (ներառյալ սոցցանցերում տարածված կոչերը՝ «գտնել, սպանել, խոշտանգել և բռնաբարել Լեռնային Ղարաբաղի անհայտ կորածներին, ներառյալ երեխաներին»[25]), ինչպես նաև սեռական բռնության ենթարկվելու վախի մասին՝ որպես Լեռնային Ղարաբաղը լքելու հիմնարար պատճառներից մեկը:[26]

Հակամարտություններին առնչվող սեռական բռնության[27] դեպքերը, որոնք բարձրաձայնվել են հարցվողների կողմից, նույնպես հիմնված են նման հաղորդումների վրա: «Դա շատ սովորական էր,- նշում է Ճիրակում վերաբնակված մի փախստական կին,- առևանգումներ, բռնաբարություններ, հարձակումներ կանանց վրա, սպանություններ և շատ բանավոր բռնություններ՝ մեզ նվաստացնելու նպատակով»: Երբ հայ կանանց և աղջիկների նկատմամբ սեռական բռնության կոչ անող առցանց արշավների մասին հարց բարձրացվեց: Շատ հարցվածներ նշեցին, որ ականատես են եղել նման արշավների և ենթարկվել դրանց ազդեցությանը: Ճիրակից փախստական մի կին հիշում է.

---

[25] Human Rights Defender of Republic of Armenia (2023), "Preliminary ad hoc Report on Results of the Fact-Finding Mission from Sept 24 to Sept 2023", հասանելի է՝ https://www.ombuds.am/images/files/a35f939de3e1ce0aebb9a4248f7a5868.pdf, 39

[26] Ibid, 31

[27] Սույն զեկույցում օգտագործված «Սեռական բռնություն հակամարտությունների ժամանակ» եզրույթը (ՍԲԿԻ) վերցված է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի՝ ՍԲԿԻ-ի մասին զեկույցից, որտեղ այն սահմանվում է որպես «բռնաբարություն, սեռական ստրկություն, հարկադիր մարմնավաճառություն, հարկադիր հղիություն, հղիության հարկադիր ընդհատում, հարկադիր ստերջացում, հարկադիր ամուսնություն և կանանց, տղամարդկանց, աղջիկների կամ տղաների նկատմամբ իրականացված համ ծանրության սեռական բռնություն ցանկացած այլ ձև, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է հակամարտության հետ: Այս կապը կարող է ակնհայտորեն դրսևորվել հանցագործի բնութագրում, որը հաճախ կապված է որևէ պետության կամ ոչ պետական զինված խմբավորման հետ, ներառյալ՝ ՄԱԿ-ի կողմից որպես ահաբեկչական խմբավորումներ ճանաչվածները. զոհի բնութագրում, որը հաճախ հանդիսանում է հալածվող քաղաքական, էթնիկ կամ կրոնական փոքրամասնության իրական կամ ենթադրյալ անդամ, կամ թիրախավորված է իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման կամ սեռի հիման վրա»: Տե՛ս Կոնֆլիկտների ժամանակ սեռական բռնության հարցերով Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցչի գրասենյակը (2023), «Սեռական բռնություն կոնֆլիկտային իրավիճակներում. Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարի զեկույցը», https://www.un.org/sexualviolenceinconflict/wp-content/uploads/2023/07/SG-REPORT-2023SPREAD-1.pdf, 3-4

Մենք այս մասին լսել ենք սոցիալական ցանցերից, ֆեյսբուքում տեսել ենք այս նկարները [...] Ազերիները տեղադրում էին կնոջ նկարը և ասում «մենք բռնաբարել ենք այս կնոջը», իսկ այդ կանանցից որոշների մասին մենք լսում էինք, որ նրանք փախել են և արդեն գտնվում էին Երևանում՝ անվտանգ: Մենք տեսանք նաև բազմաթիվ կանանց տեսանյութեր, որոնք տեղադրում էին ադրբեջանցի զինվորականները: Օրինակ, մի տեսանյութ կար, որտեղ ստիպում էին հայ կանանց նկարել, թե ինչպես է նա հագնվում, հետո տարածում էին դա սոցցանցերով»:

Այլ կանայք պատմեցին իրենց համայնքներում կամ հարևան գյուղերում սեռական բռնության դեպքերի մասին՝ ընդգծելով, որ գյուղական վայրերում ապրողները հաճախ են տուժել նման հարձակումներից: Բռնաբարությունների և առևանգումների դեպքերը հիշատակվել են բազմաթիվ կանանց կողմից՝ երբեմն ներառելով նվաստացուցիչ պահվածքի և խոշտանգումների մասին մանրամասներ: Վայոց ձոր տեղափոխված փախստական կինը հիշել է «բռնաբարված և գլխատված հաշմանդամ տարեց կնոջ մասին», Սյունիք տեղափոխված հարցվողը պատմել է մի դեպք, որտեղ «երիտասարդ ամուսինները [ում ճանաչում է], առևանգվել են, իսկ հետո կնոջը բռնաբարել և սպանել են», իսկ Շիրակ տեղափոխված մի կին պատմել է «յոթանասունամյա գյուղացի կնոջ մասին, որին առևանգել են և յոթ օր պահել, բռնության ենթարկել ու խոշտանգել»: Բազմաթիվ կանայք Ստեփանակերտի մերձակա անտառները նկարագրել են, որպես սեռական բռնության բազմաթիվ դեպքերի վայր: Վայոց ձորում հարցված փախստական մի կին պատմել է անտառում պատահած մի դեպքի մասին, որտեղ «տասը տարեկան երեխային սպանել են մոր աչքի առաջ. նրանք կտրեցին [երեխայի] ականջները նրա աչքի առաջ, իսկ հետո բռնաբարեցին նրան»: Շիրակի մարզի մի հարցվող ամփոփեց իր հիշողությունները սեռական բռնության դեպքերի վերաբերյալ, որոնց զոհ էին դարձել թե՛ կանայք, թե՛ աղջիկները.

Շատերը գյուղերից փախչում էին Ստեփանակերտ, քանի որ այնտեղ ավելի ապահով էր. նրանք պետք է անցնեին անտառներով, և կանայք շատ լավ գիտեին այս ճանապարհը: Բայց ազերի զինվորները սպասում էին անտառում և այնտեղ բազմաթիվ կանանց բռնաբարեցին: [...] Կան բազմաթիվ այլ դեպքեր, որոնց մասին մենք լսել ենք. հիմնականում գյուղական վայրերում, այդ թվում նաև աղջիկների թիրախավորմամբ: Տեսանյութ է եղել, թե ինչպես են զինվորները բռնաբարում դեռահաս աղջկան: Երբ ծնողներն աշխատում էին, երեխաներին թողնում էին տանը. երբ հարձակումները տեղի ունեցան, շատ երեխաներ մտածեցին, որ անտառն անվտանգ է, և նրանք միայնակ վազեցին այնտեղ: Բազմաթիվ դեպքեր են եղել, երբ տասնմեկ և տասներկու տարեկան երեխաներ են բռնաբարվել, և նաև հաշմանդամություն ունեցող մարդ [է եղել], ստիպել են մեկ ոտքի վրա պարել: Հոգեբանական բռնությունների ու նվաստացումների բազմաթիվ դեպքեր են եղել»:

Վերջապես, շատ կանայք նկարագրում էին ոչ միայն հղի կանանց վերապրած դժվարությունները, որոնք ծննդաբերեցին իրենց երեխաներին առանց անհրաժեշտ բժշկական օգնության կամ վիժեցին ճանապարհին նման օգնության բացակայության պատճառով, այլ նաև ադրբեջանցի զինվորների կողմից հղի հայ կանանց նկատմամբ կիրառվող բռնությունները: Կոտայքում և Սյունիքում հարցվածները պատմում էին, որ իրենք անձամբ ճանաչում են սպանված մի քանի հղի կանանց, իսկ Վայոց ձոր տեղափոխված փախստական կինը պատմել է մի դեպք, երբ ադրբեջանցի զինվորները «բացել են [հղի կնոջ] ստամոքսը և դուրս հանել երեխային», իսկ Սյունիքում հարցված մեկ այլ կին պատմել է դեպք «հղի կնոջը բռնաբարելու, իսկ հետո երեխային փորից հանելու» մասին:

Միևնույն ժամանակ կոնֆլիկտի հետ կապված ԳՀԲ-ն վերապրածները հազվադեպ էին այդ մասին հաղորդում կամ դիմում համապատասխան աջակցության համար, քանի որ, ինչպես նշեց Վայոց ձորում ծառայություններ մատուցողներից մեկը, «կանայք դեռ «անզգայացած» փուլում են, և դեռ չեն կարողանում ընկալել՝ ինչ է պատահել իրենց հետ»: Որոշ կազմակերպություններ հայտնել են, որ կանայք կամաց-կամաց դուրս են գալիս այդ դրությունից՝ բացահայտելով ադրբեջանցի զինվորների կողմից իրենց հանդեպ կատարած սեռական բռնությունները: Թեև կարելի է ակնկալել, որ երկար ժամանակ կանցնի, մինչև վերապրածներից շատերը կբարձրաձայնեն նման բռնության՝ սեփական փորձառության մասին, կարևոր է գիտակցել, որ դրա վերաբերյալ տեղեկացվածությունը սահմանափակ է ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ հանրության շրջանում:

Զուգընկերոջ կողմից բռնությունը

Տվյալների հավաքագրման գործընթացում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերը ամենաշատն են բարձրաձայնվել ինչպես ծառայություններ մատուցողների, այնպես էլ փախստական կանանց հետ զրույցներում: Այդ մասին են փաստում նաև միջազգային հետազոտությունները, որոնց գնահատմամբ արտակարգ իրավիճակներում զուգընկերոջ կողմից բռնությունը գենդերային հիմքով բռնության ամենատարածված ձևն է: Այն ավելի տարածված է, քան հակամարտությունների ժամանակ տեղի ունեցող՝ ոչ զուգընկերոջ կողմից բռնությունը՝ ներառյալ սեռական բռնությունը[28]: Ըստ առկա հետազոտությունների՝ բռնության այդ տեսակին նպաստող հիմնական գործոններից են արագ փոփոխվող գենդերային նորմերը, որոնք առաջանում են տեղահանության, ընտանիքից բաժանվելու, համայնքային կառույցների քայքայման, աղքատության, թմրամիջոցների չարաշահման և այլ գործոնների հետևանքով, որի արդյունքում հատկապես մեծանում է սոցիալապես և ֆիզիկապես մեկուսացված կանանց և աղջիկներ խոցելիությունը[29]:

Ըստ հարցվողների՝ հայաստանյան համատեքստում զուգընկերոջ կողմից բռնության երևույթներն առկա են ինչպես փախստական անձանց ընդունող համայնքներում, այնպես էլ փախստական անձանց շրջանում: «Ինտիմ զուգընկերոջ կողմից բռնությունը գենդերային հիմքով բռնության ամենատարածված ձևն է մեր մարզում, և մենք նաև տեսանք անմիջական կապ զուգընկերոջ կողմից գրանցված բռնության դեպքերի ավելացման և սահմանային բախումների աճի հետ, որը պայմանավորված էր փախստականների հոսքի հետ»,– նշում է Գեղարքունիքում ծառայություններ մատուցողը և հավելում, որ բռնության ամենատարածված ձևերը, որոնց վերաբերյալ իրենք ստանում են ահազանգեր, վերաբերում է ֆիզիկական, հոգեբանական և տնտեսական բռնության տեսակներին, և շատ հազվադեպ՝ սեռական բռնության դեպքերով ահազանգերն են: Ծառայություններ մատուցողների մեծամասնությունը նշում է, որ բռնության բոլոր դեպքերը ինտիմ զուգընկերոջ կողմից են իրականացվել:

Հարցվածների մեծամասնությունը փախստական ընտանիքներում զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի համար հիմնական նպաստող գործոններ է համարել պատերազմով պայմանավորված սթրեսը և տրավման, ինչպես նաև որոշ այլ նպաստող հանգամանքներ: Լոռիում ընտանեկան բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագետը զրույցի ժամանակ նշեց.

[28] GBV AoR Helpdesk (2019), “Research, Evidence and Learning Digest – Intimate Partner Violence (IPV) in Emergencies”, հասանելի է՝ https://gbvaor.net/node/546, 1

[29] International Rescue Committee (2015), “Private Violence, Public Concern: Intimate Partner Violence In Humanitarian Settings”, հասանելի է՝ https://www.rescue.org/sites/default/files/document/564/ircpvpcfinalen.pdf, 3-5

Հիմա՝ պատերազմից ու այս իրավիճակից հետո, ընտանիքում բռնությունները շատացել են՝ պայմանավորված հոգեբանական գործոններով: Տղամարդիկ ընկճված են և դա հաճախ դրսևորվում է իրենց կանանց կամ ընտանիքի այլ անդամների նկատմամբ բռնության միջոցով: Տղամարդկանց մեծ մասը մասնակցել է պատերազմին, սա ծանր փորձառություն է: Գրեթե մեկ տարի նրանք շրջափակման մեջ էին, սոված, այս ամենը հանգեցրել է հոգեբանական ծանր վիճակի: Մենք գրանցել ենք կանանց նկատմամբ և՛ ֆիզիկական, և՛ հոգեբանական բռնության դեպքեր, և հիմնականում՝ պատերազմին մասնակցած տղամարդկանց կողմից: Լինում են դեպքեր, երբ ամուսինները սկսել են չարաշահել ալկոհոլը, ինչը ևս կարող է բռնությունը խթանող գործոն հանդիսանալ»:

Ընտանիքներում լարվածության աճը նաև պայմանավորված է այն հանգամանքով, որ տղամարդիկ «տնտեսապես կայուն չեն, ինչը մեծացնում է սթրեսը, [որը հանգեցնում է] զուգընկերոջ կողմից բռնության, ինչպես նաև երեխաների հանդեպ բռնությունների»,– նշում է Ճիրակում բնակվող փախստական կին: Այնուամենայնիվ, հարցված կանանցից ոմանք ընդգծել են, որ զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի աճ նկատվել է 2022 թվականի վերջից Լեռնային Ղարաբաղում՝ շրջափակման ժամանակ, և տնտեսական դժվարությունների և ավանդական գենդերային նորմերի խախտման պատճառով: Ճիրակում բնակվող մեկ այլ փախստական հարցվողի վկայությամբ.

Արցախի շրջափակման ժամանակ մարդիկ մշտապես զայրանում, սթրեսի էին ենթարկվում, ու մենք իմանում էինք բազմաթիվ [ԻԶԲ] դեպքերի մասին: Ամեն ինչ այնքան թանկացավ, օրինակ, միայն մեկ հատիկ ծիսախոտի համար պետք է վճարեիր հազար դրամ. մարդիկ հերթ էին կանգնում հաց գնելու համար. ձեթը վեց հազար դրամ էր, երբ Երևանում՝ վեց հարյուր, տասը հոգանոց ընտանիքներն օրական երկու հացով էին ապրում: Տղամարդիկ, ովքեր նախկինում կարողանում էին հոգ տանել իրենց ընտանիքի մասին, այլևս չէին կարող դա անել, և դա մեծ սթրես էր նրանց համար, լարվածություն էր առաջանում ընտանիքում, ամուսինների միջև: Տղամարդկանց շրջանում եղել են ինքնասպանության որոշ դեպքեր, գրանցվել են նաև ամուսինների միջև բռնության բազմաթիվ դեպքեր: Օրինակ, մի անգամ տղամարդը դանակով հարձակվել է կնոջ վրա…»:

Փախստական կանայք խոսել են բռնության այլ տեսակների մասին ևս, որոնք տեղի են ունեցել շրջափակման ժամանակ և շարունակվել Հայաստանում: Լոռիում երկու փախստական կանայք պատմել են, որ երբ ընտանիքում նկատվել է առաջնային ռեսուրսների պակաս, կանանց կարիքները հաճախ անտեսվել են. «Եթե պետք է ընտրել ամուսնու և կնոջ միջև, իհարկե, ընտանիքում առաջնահերթությունը՝ տղամարդունն է,

որովհետև նա գնում է աշխատանքի, փող է աշխատում, օրինակ, դրա պատճառով նաև նրա համար հագուստի գնումն ավելի առաջնահերթ կլինի»,- ասաց առաջին հարցվողը: Երկրորդը հավելեց.

> *Ես նրանց եմ առաջնահերթություն տալիս [ամուսնուն և երեխաներին], երբ խոսքը սննդի մասին է: Միրգ չեմ ուտում. սկզբում իհարկե տալիս եմ երեխաներիս, հետո՝ ամուսնուս: Շրջափակման ժամանակ շատ ծանր էր. այդպես էր և այնտեղ ու մինչև օրս էլ շարունակվում է»:*

Ներկայացվեցին նաև այլ օրինակներ, որտեղ բարձրաձայնվում էր կանանց և աղջիկների համար առկա ոչ բավարար ռեսուրսների, հնարավորությունների և մատուցվող ծառայությունների պակասի մասին: Այնուհետև հարցվողներից մեկը պատմեց նույն մարզում բնակվող մի հղի փախստական կնոջ մասին, որն ունեցել է բարդ ծննդաբերություն և երեխայի ծնվելուց հետո լուրջ առողջական խնդիրներ են առաջացել: «Նա բժշկի կարիքը շատ ուներ, բայց համայնքի բժիշկը տղամարդ էր, և ամուսինը թույլ չէր տալիս, որ բժիշկը մոտենա իր կնոջը, քանի որ [բժիշկը] տղամարդ էր… ու քանի որ միայն դեղահաբերով հնարավոր չէր լավացնել վիճակը, արդյունքում կինը հայտնվեց հիվանդանոցում»,- պատմում է նա: Մեկ այլ օրինակ ներկայացրեց Լոռիում ծառայություն մատուցողը. «Արցախից մի մարդ կար, որ եկել էր առանց կնոջ, որ վերցնի մեր կողմից տրամադրվող աջակցությունը, և երբ հարցրեցինք, թե որտեղ է նրա կինը, քանի որ պետք է ստորագրություն տրամադրի, ասաց՝ տարբերություն չկա, ստորագրությունը կդնեմ. նույնիսկ Շուշիում կինս մենակ չէր կարողանում դրսում քայլել, որովհետև կկորեր…»:

Հարցվածները, բազմաթիվ նմանատիպ օրինակներ բերելով, նշել են, որ մեկուսացումը, բացի գենդերային հիմքով բռնության հիմնական գործոնից, ինքնին՝ գենդերային հիմքով բռնության տեսակ է: Մեկուսացումը կարող է կրկնակի խոցելի դարձնել փախստական կանանց և աղջիկներին նոր միջավայրում: Հարցվողները բարձրաձայնել են դեպքեր, երբ կանանց թույլ չի տրվել մասնակցել տնային տնտեսությունների վարման որոշ գործերին. «Կանայք շատ երկչոտ ու լռակյաց են, և դա գալիս է տղամարդկանցից. եթե [ընտանիքում] խնջույք է կազմակերպվում, կանանց արգելվում է նստել և ուտել ընտանիքի այլ անդամների և հյուրերի հետ»,– իր խոսքում նշել է Լոռիում ծառայություններ մատուցողը:

Զուգընկերոջ կողմից բռնության դեպքերի ուսումնասիրության համատեքստում հատուկ ուշադրություն է դարձվել նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամողներին՝ հիմնականում մայրերին ու խնամակալներին՝ հաշվի առնելով փախստականների շրջանում հաշմանդամություն ունեցող անձանց մեծ թիվը: Ծառայություններ մատուցողները ներկայացնում էին իրենց մտահոգությունը, որ մասնագիտական գործունեության ընթացքում արձանագրել են հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերի նկատմամբ բռնության դեպքեր, որոնք կարող են ազդել նաև փախստական բնակչության վրա և նման մոտեցումը,

դիտարկվելով «ընդունելի» միջավայրի համար, հնարավոր դեպքերը կարող են չբարձրաձայնվել արդեն փախստական անձանց կողմից: «Ունեցել ենք դեպքեր, երբ ամուսինը (տեղացի) ծեծում է և մեղադրում կնոջը, թե՝ «…այս կինն ինձ հիվանդ երեխա է բերել…»,- նշում է Երևանում ծառայություն մատուցողը: Մյուս կողմից, Շիրակում ծառայություն մատուցողը նշեց, որ «տարածված երևույթ է, որ հաշմանդամություն ունեցող երեխաների մայրերին ոչ միայն մեղադրում են, այլև՝ լքում, հատկապես երբ երեխան ունենում է մտավոր կամ որևէ ծանր հաշմանդամության տեսակ»: Հետևապես մասնագետները նշում են, որ փախստական ընտանիքները, հատկապես կանայք, որոնք խնամում են հաշմանդամություն ունեցող անձանց առավել խոցելի են ու հաշվի առնելով աճող տնտեսական բեռը, ընդհանուր սթրեսն ու մարտահրավերները, պետք է հատուկ ուշադրություն դարձնել այդ ընտանիքներին, քանի որ կա գենդերային հիմքով բռնության մեծ ռիսկ:

Ֆոկուս-խմբային քննարկումների ընթացքում փախստական դեռահաս աղջիկների նկատմամբ զուգընկերոջ կողմից բռնության ոչ մի դեպք չի նկարագրվել Հայաստան ժամանելուց ի վեր: Սակայն բռնության որոշ օրինակներ են մատնացույց արվել, որոնք հիմք են տալիս երիտասարդ աղջիկներին նույնպես դիտարկել, որպես խոցելի խումբ՝ գենդերային հիմքով բռնության համատեքստում: Խոսելով հյուրընկալող համայնքում աղջիկների նկատմամբ բռնության միտումների մասին՝ Սյունիքում ծառայություն մատուցողը կիսվել է հետևյալ օրինակով (մինչև փախստականների ժամանումն ունեցած օրինակ).

> *Մենք ունեինք դեպք մեզ մոտ, երբ աղջկան բռնաբարել էր իր ընկերը: Ընտանիքը բռնաբարությունից հետո ստիպել էր աղջկան ամուսնանալ բռնարարի հետ, քանի որ կարծում էին, որ այդպիսով կխուսափեն նման «ամոթից»: Սա ցավոք տարածված երևույթ է համայնքում՝ որպեսզի խուսափեն ամոթից, աղջիկները հաճախ ամուսնանում են իրենց նկատմամբ բռնություն իրականացնողի հետ»:*

Մյուս կողմից, երբ քննարկում էինք գենդերային հիմքով բռնության հետևանքներն աղջիկների վրա, Արմավիրից մի դեռահաս աղջիկ ֆոկուս-խմբային քննարկման ժամանակ խոսեց սեռական բռնության մասին, «եթե [բռնություն գործադրած անձ] չափահաս է, ծնողները ակնկալում էին, որ աղջիկն ամուսնանա նրա հետ»: Ձեկույցի առաջիկա բաժիններում առավել մանրամասն անդրադարձ կկատարվի այս խնդրին, սակայն հարկ է նշել, որ նման գործելակերպը ոչ միայն բացասաբար է անդրադառնում բռնության ենթարկված կանանց և աղջիկների վրա, նրանց դարձնելով խոցելի, հաճախ նաև թիրախ զուգընկերոջ կողմից բռնության, ներառյալ սեռական բռնության դեպքերի համար, այլև նպաստում է համատարած լռության, բռնության դեպքերի մասին հաղորդում չտալու և անհրաժեշտ աջակցություն փնտրելուց խուսափելու մշակույթի արմատավորմանը:

Ընտանիքում գենդերային հիմքով բռնության այլ տեսակները

Բոլոր հարցվածները, հատկապես դեռահաս աղջիկները պատմել են ընտանիքում գենդերային բռնության տարաբնույթ ձևերի մասին: Ներկայացվել են խտրական մոտեցումների օրինակներ ընտանիքի աղջիկների և կանանց նկատմամբ, որը դրսևորվել է տղամարդկանց կամ ընտանիքում որոշում կայացնողների կողմից: Այն արտահայտվել է ռեսուրսների անհավասար բաշխմամբ կամ դրանց առհասարակ՝ բացակայությամբ, տեղաշարժի սահմանափակմամբ և այլն:

Հետազոտության նախորդ՝ ինտեգրմանը վերաբերող բաժնում փախստական դեռահաս աղջիկները ներկայացրել էին որդիների և դուստրերի դաստիարակության տարբերությունները: Ընտանիքում սեռով պայմանավորված անհավասար մոտեցումները կարող են գենդերային հիմքով բռնության դրսևորումների հիմք հանդիսանալ: Հարցվողները հիմնականում համաձայնել են, որ տղաների նկատմամբ գործում է արտոնյալ վերաբերմունք և պատճառներից մեկն էլ այն է, ինչպես ասաց Արագածոտնում հաստատված մի դեռահաս աղջիկ, «որ նրանք են լինելու իրենց ծնողների մասին հիմնական հոգ տանողը»: Նա նաև նշեց, որ սա լայնորեն ընդունված մոտեցում է. «Մենք վատ չենք զգում դրա համար. երբ մայրիկիս հարցնում եմ՝ դու ինձ ավելի շատ ես սիրում, թե եղբորս, նա ասում է՝ եղբորդ, և ոչ ոք չի վիրավորվում դրանից»: Այնուամենայնիվ, Լեռնային Ղարաբաղում հակամարտության հետևանքներն ավելի բևեռացրին նման վերաբերմունքն ընտանիքներում, և շատ աղջիկներ նշում էին, որ տղաներին անհամեմատ ավելի մեծ ուշադրություն է դարձվում հատկապես բանակում ծառայելու ընթացքում: Նման ուշադրությունը գալիս է ոչ միայն ծնողներից, այլ նաև նրանց քույրերից. ինչպես Արագածոտնից մի աղջիկ նշեց. «Ես էլ եմ ավելի շատ ուշադրություն դարձնում եղբորս, քանի որ նա շատ բանի միջով է անցել…»: Այնուամենայնիվ, աղջիկներից ոմանք սա անարդար են համարել, ինչպես, օրինակ, նշել է Արմավիրից դեռահաս մի աղջիկ.

> *Մեզ մոտ անհավասար վերաբերմունքն այսպես է նաև երևում, որ ծնողներն ասում են՝ «տղաները ծառայում են բանակում. նրանք պետք է վայելեն իրենց կյանքը», այնպես որ նրանց ամեն ինչ թույլ է տրվում: Երբ մայրիկիս հարցնում եմ, թե ինչու եղբայրս կարող է ամեն ինչ անել, իսկ ես՝ ոչ, նա պարզապես ասում է՝ «որովհետև նա ծառայության մեջ է», և սա միակ պատասխանն է»:*

Նման անհամաչափ վերաբերմունքը կարող է բացասաբար ազդել նաև աղջիկների տեղաշարժի վրա՝ հետագայում նպաստելով նրանց մեկուսացմանը: Խոսելով փախստական աղջիկների՝ Հայաստանում ինտեգրվելու խնդիրների մասին՝ հարցված աղջիկները կարևորեցին տղաների և աղջիկների դաստիարակության հարցում հայրերի տարբեր մոտեցումները: «Մեր հայրերն ավելի խիստ են աղջիկների, քան տղաների հետ»,-

նշում է Լոռիից մի աղջիկ: «Մեզ ասում են՝ դա մի հագեք, դուրս մի եկեք, գիշերն ուշ մի մնացեք…: Այդ պատճառով տղաներն ավելի հեշտ են ընկերներ գտնում»: Տեղաշարժի սահմանափակումը նույնպես արմատավորված է եղել տարիներ շարունակ առկա հակամարտությամբ, քանի որ «ծնողները վախենում էին, որ համայնքում թուրքեր կլինեն, ուստի աղջիկներին թույլ չէին տալիս գիշերը դուրս գալ տանից», ինչպես նշել է Արմավիրից դեռահաս հարցվողը:

Աղջիկների ազատ տեղաշարժի բացակայությունը հատկապես մտահոգիչ է, երբ այն անդրադառնում է ծառայությունների հասանելիությանը: Այդ մասին են փաստում նաև մի շարք ծառայություններ մատուցողներ.

> *Ես հիմա ունեմ տասնվեցամյա մի փախստական աղջիկ, որն ուզում է սովորել վարսահարդարություն: Նա ինձ անձամբ է ասել այդ մասին, որ իսկապես ուզում է միանալ [վարսահարդարի] դասընթացներին: Բազմիցս փորձել եմ կապվել նրա հետ, զանգահարել եմ հորը, բայց նա հեռախոսը չի վերցնում: Քանի որ նա անչափահաս է, մենք ծնողի միջոցով ենք կապ հաստատում դեռահասների հետ: Նա [հայրը] գիտի, որ սա մեր հեռախոսահամարն է, և ինչու ենք մենք զանգում, բայց չի պատասխանում զանգին: […] Ես ենթադրում եմ, որ նա չի ուզում թույլ տալ, որ իր աղջիկը գա դասերին»:*

Տղաներին նախապատվություն տալը արձանագրվել է նաև ընտանիքում ռեսուրսների բաշխման հարցում: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ արտակարգ իրավիճակներում, երբ առկա է ռեսուրսների սակավություն տղաների հանդեպ ընդգծված նախապատվություն ունեցող հասարակությունում առավել հավանական է, որ ընտանիքներում առաջնահերթություն տան տղաներին՝ սննդի և այլ ռեսուրսների բաշխման հարցում:[30] Թեև հետազոտության վերոնշյալ բաժիններում արդեն իսկ անդրադարձ է կատարվել, թե սահմանափակ ռեսուրսներն ինչպիսի ազդեցություն կարող են ունենալ հատկապես մայրերի շրջանում սննդից ինքնազրկման կամ թերսնման վրա, արձանագրվել են նաև դեպքեր, երբ դուստրերը ևս կարող են տուժել նման իրավիճակներում: Տվյալների հավաքագրման ընթացքում բարձրաձայնվել է այն մասին, երբ ձմեռային պարագաների և առաջին անհրաժեշտության հագուստ ձեռք բերելիս ընտանիքում նկատվել է տղաների նախապատվություն: Հինգ երեխա՝ երեք տղա և երկու դեռահաս աղջիկ ունեցող փախստական ընտանիքը, որը բնակվում է Շիրակի մարզում (մարզը աչքի է ընկնում իր խստաշունչ ձմեռներով և ցածր ջերմաստիճանով) ձմեռային հագուստ է գնել միայն որդիների համար: «…չենք ծրագրել որևէ հագուստ գնել դուստրերի համար, ոչ էլ նման հագուստ կտան մեզ [մարդասիրական աջակցություն]», ասում է Շիրակում

[30] World Bank Gender Global Team (2023), "Gendered Impacts form Climate Change: Evidence from Weather Shocks", հասանելի է՝ https://documents1.worldbank.org/curated/en/ 099342305102324997/pdf/IDU0ba259bd2039ca04fa20b87a0893bb487e014.pdf, 2

ապրող փախստական մի կին: Ընտանիքը նշում է. «դեռահաս աղջիկների համար հագուստ չկա, միայն փոքր տարիքի երեխաների հագուստ են տալիս», և թեև նրանք ակնկալում էին հետագա աջակցություն ստանալ տղաների համար, այնուամենայնիվ ընտանեկան բյուջեն օգտագործելու դեպքում առաջնահերթություն էր տվելու որդիներին:

Հետազոտության հարցվողներից մի քանիսը բարձրաձայնեցին ընտանիքում հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների նկատմամբ բռնության խնդրի մասին: Շիրակում ծառայություններ մատուցողներից մեկը բացատրեց, թե ինչպես կարող է հաշմանդամություն ունեցող անձը փոխել առանց այն էլ ծանր կյանքով ապրող ընտանիքների ներքին դինամիկան, և ինչպես համայնքում առկա կարծրատիպային համոզմունքները կարող են վտանգել հաշմանդամություն ունեցող ընտանիքի կին անդամին.

> *Մեր դիտարկումները ցույց են տալիս, որ ընտանիքի անդամներն ավելի ագրեսիվ են դառնում, երբ ընտանիքում կան հաշմանդամություն ունեցող մարդիկ, իսկ սթրեսը հաճախ նպաստում է ընտանեկան բռնության դեպքերի ավելացմանը: Մեր հասարակությունը շատ նահապետական է. օրինակ, հաշմանդամություն ունեցող տղամարդկանց մեծ մասն ամուսնանում է, բայց աղջիկների դեպքում դա այդպես չէ, նրանք մնում են կախված [ընտանիքից]: Ավելին, եթե ընտանիքում հաշմանդամություն ունեցող մարդ կա, հատկապես՝ հաշմանդամություն ունեցող աղջիկ, ոչ ոք չի ամուսնանա նույնիսկ ընտանիքի մյուս՝ հաշմանդամություն չունեցող կին անդամների հետ, քանի որ կարծում են, որ իրենց ապագա երեխան նույնպես հաշմանդամություն կունենա»:*

Շիրակում ծառայություն մատուցողն արձանագրել է նաև, որ փախստական բնակչության շրջանում ևս տարածված են տնտեսական բռնության դեպքեր, որոնցից տուժում են հաշմանդամություն ունեցող կանայք. «Հաշմանդամություն ունեցող անձինք և նրանց ծնողները պետական աջակցություն են ստանում, որը նախատեսված է հենց հաշմանդամություն ունեցող անձանց համար, և հաշմանդամություն ունեցող կանանցից շատերը չեն կարողանում օգտվել [գումարից], քանի որ այն վերցնում են ընտանիքի անդամները»: Նա եզրակացնում է, որ գենդերային հիմքով բռնության ևս մեկ այլ կարևոր խնդրի մասին է բարձրաձայնում մասնագետը, որին առնչվում են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, այն է՝ տեղաշարժման սահմանափակվածության պատճառով նրանք միշտ չէ, որ կարողանում են փախչել, պաշտպանվել ֆիզիկական և հոգեբանական բռնության դեպքերում:

Հաշմանդամություն ունեցող աղջիկները հատկապես խոցելի են ընտանիքում, երբ խոսքը վերաբերում է բռնությանը, սակայն խոցելիությունը պահպանվում է նաև խնամքի և անհրաժեշտ ծառայությունների

հասանելիության հարցում: Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը կիսվում է հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեցող փախստական ընտանիքների հետ աշխատանքի իր փորձառությամբ և առանձնացնում որոշ օրինաչափություններ.

> *Երբ մայրը հաշմանդամ որդի ունի, ամբողջ ընտանիքն ամեն ինչ անում է նրա համար, իսկ երբ դուստրը հաշմանդամություն ունի, դա նրանց համար նորմալ է, նրան այլ կերպ են վերաբերվում, և դա երկրորդական նշանակություն ունի ընտանիքի համար: Երբ խոսում ենք տղաներ ունեցող մայրերի հետ, նրանք ցանկանում են առավել մոտ բնակվել, որպեսզի տղան մշտապես հաճախի մեր կենտրոն. աղջիկների դեպքում ավելի հավանական է, որ նրանց լքեն և ոչինչ չանեն նրանց համար: Աղջկա համար նորմալ է տանից դուրս գալը. նրանք գալիս են մեր կենտրոն, բայց ոչ այնքան հաճախ, որքան տղաները»:*

Ճիրակում ծառայություններ մատուցողը նաև հաստատել է առկա միտումը, որ «հաշմանդամություն ունեցող աղջիկներն ավելի շատ են տեղավորվում խնամքի հաստատություններում, օրինակ, մանկատներում, քան հաշմանդամություն ունեցող տղաները, և հաշմանդամություն ունեցող աղջիկներն ավելի հաճախ են դուրս մնում տարրական և միջնակարգ դպրոցից, քան հաշմանդամություն ունեցող տղաները»: Հաշմանդամություն ունեցող աղջիկների նկատմամբ գործող նման խտրական գործելակերպերը էապես մեծացնում են հաշմանդամություն ունեցող տեղահանված աղջիկների խոցելիությունը, խոչընդոտում ծառայությունների մասին տեղեկատվություն ստանալու նրանց արդեն իսկ սահմանափակ հասանելիությունը, իսկ փախստական ընտանիքներում առկա սուղ ռեսուրսների պայմաններում աղջիկներն ու կանայք կարող են հաճախ դուրս մնալ առաջնահերթությունների ցանկից:

Ընտանիքից դուրս տեղի ունեցած գենդերային հիմքով բռնությունը՝ փախստականներին ընդունող համայնքներում

Փախստական հարցվողների և ծառայություններ մատուցողների հետ զրույցներում ընտանիքից դուրս կանանց և աղջիկների նկատմամբ գենդերային հիմքով բռնությունների շատ դեպքեր չեն արձանագրվել: Ինչպես նշվեց փախստականների սոցիալական ինտեգրմանը վերաբերող բաժնում, հարցվածների մեծամասնությունը կարևորում էր հյուրընկալող համայնքների աջակցությունն ու սատարող վերաբերմունքը, և թեև բարձրաձայնվեցին տարբեր խնդիրներ, դրանց միայն մի փոքր մասն էր վերաբերում գենդերային հիմքով բռնությանը: Այնուամենայնիվ, նման պատկերը դեռևս չի կարող երաշխավորել, որ չկան գենդերային հիմքով բռնություններ: Հարցազրույցների ժամանակ ծառայություններ մատուցողները բարձրաձայնում էին նման վիճակագրության հնարավոր պատճառների մասին, որոնք են այլ առաջնահերթությունների առկայություն, օրինակ սոցիալական առաջնային կարիքները, ինչպես նաև գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների մասին իրազեկվածության պակասը, ծառայություններ մատուցողների նկատմամբ վստահության պակասը և մի շարք այլ պատճառներ, որոնք կներկայացվեն հետազոտության «Գնահատման» բաժնում:

Գենդերային հիմքով բռնության մեկ դեպքի մասին է պատմել հարցված փախստական մի կին, որը տեղի է ունեցել ոչ ընտանիքի անդամի կողմից և վերաբերել է աշխատաշուկա մուտք գործելուն: Ինչպես նշում են փախստական կանայք, աշխատանք գտնելիս նրանք տարբեր խոչընդոտների են հանդիպել, դրանցից մեկը վերաբերել է անձը հաստատող փաստաթղթերի բացակայությանը և նրանցից շատերը ստիպված անցել են ոչ ֆորմալ աշխատանքի, որպես չգրանցված աշխատող, ինչը կարող է ավելացնել գենդերային հիմքով ռիսկերը: Սյունիքից մի կին նշեց.

> *Շատ կանայք գործում են այսպես ասած «սև շուկայում», քանի որ դա չի պահանջում [անձը հաստատող փաստաթղթեր]: Երբեմն այնտեղ խնդիրներ են ունենում, քանի որ գործատուն վատ է վերաբերվում կանանց կամ ոտնձգություններ է իրականացնում նրանց հանդեպ: Չեմ ուզում մանրամասների մասին խոսել, բայց դրա պատճառով նրանք վատ են զգում և հոգեբանական աջակցության կարիք ունեն»:*

Թեև ոչ ֆորմալ աշխատաշուկայում կանանց նկատմամբ բռնության տեսակների վերաբերյալ այլ մանրամասներ չեն հաղորդվում, համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ փախստական և բռնի տեղահանված կանայք և աղջիկները, հատկապես նրանք, որոնք չունեն անձը հաստատող փաստաթղթեր, խոցելի խումբ են

հանդիսանում գենդերային հիմքով բռնության, ներառյալ սեռական բռնության նկատմամբ[31]: Գործատուները կարող են չարաշահել իրենց լիազորությունները հաշվի առնելով փախստական կանանց կախվածությունն այդ աշխատանքից, քանի որ չկան այլընտրանքային եկամուտ ստեղծելու հնարավորություններ և այդ աշխատանքը հանդիսանում է միակ ապրուստի միջոցը: Առկա է՝ փախստական կանանց աշխատանքային իրավունքների խախտման, շահագործման, ինչպես նաև սեռական ոտնձգությունների ենթարկման մեծ ռիսկ:

Մեկ այլ խնդիր, որի մասին չբարձրձայնեցին հերազոտության մասնակիցները, վերաբերում է կանանց և աղջիկների կողմից սեռական ծառայություններ մատուցելուն, որպես գումար վաստակելու միակ միջոց, քանի որ բացակայում են շահույթ ստանալու այլ միջոցները: Այս միտումը բնորոշ է հատկապես կոնֆլիկտային և հետ կոնֆլիկտային իրավիճակներում:[32] Վարքագծի նման ձևերը և և գենդերային հիմքով բռնության հնարավոր բոլոր ռիսկերը պետք է խստորեն մշտադիտարկվեն բոլոր այն կառույցների կողմից, որոնք աշխատում են հումանիտար իրավիճակներում:

Բազմաթիվ հարցվածներ բարձրաձայնել են փախստականներին հյուրընկալող համայնքներում դեռահաս աղջիկներին սպառնացող մտահոգությունների և գենդերային հիմքով բռնության ռիսկերի մասին: Իրենց մտահոգություններն են ներկայացրել դեռահաս աղջիկների մայրերը, որոնք լսել են ընդունող համայնքում արձանագրված սեռական բռնության՝ ներառյալ սեռական ոտնձգության և բռնաբարության դեպքերի մասին: Սյունիքից մի կնոջ նկարագրած դեպքի համաձայն «տեղացի աղջկան ոտնձգության են ենթարկել հասարակական վայրում. տղաները մոտեցել են նրան և ասել, որ հանի հագուստը», և դրա հետևանքով իր մոտ վախ է առաջացել իր երկու դեռահաս դստերի համար, իսկ Լոռիից մի կին կիսվել է մեկ այլ դեպքով, որը տեղի է ունեցել նրան հյուրընկալող համայնքում.

> *Այս դեպքը դպրոցից գիտեմ: [...] Մի աղջիկ է հղիացել, և մենք լսեցինք, որ սեռական բռնության է նա ենթարկվել վարձով բնակարանում, և որ նրան բռնաբարել են: Ահա թե ինչու ենք մենք մտահոգված մեր աղջիկների համար: Եվ դրա համար էլ մտածում եմ, որ դեռահաս աղջիկները ամենախոցելին են»:*

[31] Տե՛ս օրինակ UN Women (2020), “Sexual Harassment in the Informal Economy: Farmworkers and Domestic Workers”, հասանելի՝ https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2020/Discussion-paper-Sexual-harassment-in-the-informal-economy-en.pdf

[32] Տե՛ս օրինակ Westendorf, Jasmine-Kim and Louise Searle (2017), “Sexual exploitation and abuse in peace operations: trends, policy responses and future directions”, International Affairs, vol. 93, no. 2, հասանելի՝ https://doi.org/10.1093/ia/iix001, 371-373

Իսկ ահա փախստական դեռահաս աղջիկները խոսեցին իրենց նկատմամբ հյուրընկալող համայնքի տղաների վերաբերմունքի մասին, ինչը նրանց ստիպում էր անհարմար զգալ: «Տղաները ծիծաղում են, ծաղրում են աղջիկներին, իսկ ես շատ ամաչկոտ եմ, անհարմար եմ զգում»,- ասում է Արմավիրում բնակվող մի դեռահաս աղջիկ: Լոռուց մի աղջիկ նշում է, որ «[տղան] կարող է սկսել քեզ ուղեկցել, և դա ինձ դուր չի գալիս, ես նրան չեմ ճանաչում, նա էլ ինձ չի ճանաչում.... ինձ դուր չի գալիս, թե ինչպես են նրանք իրենց պահում»: Մյուս աղջիկները կիսվել են փողոցում իրենց պատահած դեպքերով, որոնք ստիպել են իրենց անապահով զգալ և կրճատել տանից դուրս գտնվելու ժամանակը: Լոռիից մի դեռահաս աղջիկ կիսվել է նման օրինակներով.

> *Գիշերը վախենում ենք մենակ քայլել [քաղաքում], շատ անօթևաններ կան, ծեր հարբած տղամարդիկ, կողքով անցնելիս՝ ձեռքիցդ կբռնեն: [...] Երբեմն, երբ մենք քայլում ենք, տղամարդ է սկսում հետևել մեզ և սկսում է ականջ դնել՝ ինչի մասին ենք խոսում»:*

Միևնույն մարզում բնակվող մեկ այլ աղջիկ էլ ավելացրեց.

> *Մի մարդ կար, ով խոսում էր ինքն իր հետ: Հետո նա սկսեց քայլել մեզ հետ և խոսել մեզ հետ, որը մեզ տհաճ էր: Այդպիսի մարդիկ հաճախ են լինում այս քաղաքում, իսկ Արցախում այդպես չէր»:*

Նման իրավիճակում, դեռահաս աղջիկները ոչ միայն մտահոգված են իրենց անվտանգության համար, այլև նրանց տեղաշարժն էլ ավելի է սահմանափակվում՝ մեծացնելով իրենց տարիքին և սեռին հատուկ խոցելիությունը:

Հաղորդում ներկայացնել գենդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ

Ինչպես աշխարհում[33], այնպես էլ Հայաստանում գենդերային հիմքով բռնության դեպքերի վերաբերյալ հիմնականում հաղորդում չի ներկայացվում: Կոնֆլիկտից տուժած, տեղահանված բնակչությունը կարող է առավել մեծ խոչընդոտների հանդիպել՝ նույնականացնելու, բացահայտելու և հայտնելու գենդերային հիմքով բռնության մասին, ինչը հաճախ է պատահում արտակարգ իրավիճակներում և հետկոնֆլիկտային ժամանակահատվածում, քանի որ կա անապահովություն զգացում, բավարար չափով առկա չեն գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց համար ծառայություններ, ապահով տարածք, ներառյալ մեկուսացման հնարավորություն: Տվյալների հավաքագրման գործընթացում հարցված կանայք և աղջիկները մատնանշել են բազմաթիվ պատճառներ, թե ինչու բռնության ենթարկված կանայք և աղջիկները հաճախ չեն բարձրաձայնում իրենց հետ տեղի ունեցածին մասին: Լեռնային Ղարաբաղից տեղահանված բնակչության շրջանում բռնության դեպքերի մասին չբարձրաձայնելու պատճառները հասկանալու համար պետք է ուսումնասիրել համայնքի վերաբերմունքը և պատրաստակամությունն անդրադառնալու գենդերային հիմքով բռնությանը: Ահա այսպես ներկայացրեց Սյունիքից մի փախստական կին.

> *Այստեղ գործում է լռության մշակույթը: Շատ կանայք չեն խոսի դրա [ԳՀԲ-ի] մասին, դա տաբու է, և ամոթ է ոստիկանություն դիմելը: Բռնության դեպքերը շատ են, բայց [կանայք] ոչ մեկի հետ չեն խոսում, չեն ասում այդ մասին, դա համարվում է անձնական խնդիր»:*

Նման իրավիճակում, երբ կանանց և աղջիկների մոտ կա վախ համայնքի արձագանքի հանդեպ, այն հաճախ դառնում է գենդերային հիմքով բռնության դեպքում անհրաժեշտ ծառայությունների դիմելուն խանգարող հիմնական գործոններից մեկն է: Խարանն ու ամոթն այն հաճախ նշվող գործոններն էին, որոնք խանգարում էին վերապրածներին խոսելու իրենց փորձառությունների մասին: «Դու տուժել ես, բայց հենց քեզ էլ մեղադրում են, ու կանանց շատ ավելի վատ են վերաբերվում, երբ դու բարձրաձայնում ես [զուգընկերոջ կողմից] բռնության մասին», ինչպես նշեց Սյունիքում հարցվողներից մեկը: Թե ինչպես է համայնքն աչք փակում գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց և նրանց աջակցություն տրամադրելու վրա, երևում է Արմավիր տեղափոխված մի աղջկա օրինակով. դեպքը պատահել է նրա ծննդավայրում. «Սեռական բռնության ենթարկված մի կին ի վերջո այրեց իրեն, և համայնքի համար ընդունելի էր, որ նա այրվեց և

[33] Տե՛ս օրինակ Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, հասանելի՝ https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf, 2

մահացավ»: Անգամ ամուսնալուծությունն ինքնին դժվար ընդունելի է համայնքում, ինչպես նշում է Արմավիրում հարցվածներից մեկը.

> *Ամուսնալուծությունը լավագույն լուծումը չէ: [Կնոջ] կյանքը երբեք ավելի լավ չի լինի, եթե նա դա անի: Կնոջ համար դժվար է երկրորդ անգամ ամուսնանալը, դա անհնար է: Համայնքը կարծում է, որ եթե նա ամուսնալուծվի, նրա վերջը կգա»:*

Ամուսնալուծության դեպքում կանայք ոչ միայն մտահոգվում են իրենց համայնքների պարսավանքով, այլ նաև անհանգստանում են, թե «ինչպես են դա բացատրելու իրենց երեխաներին և ինչպես են միայնակ հոգ տանելու նրանց մասին»՝ ըստ Սյունիքի փախստական կնոջ: Այնուամենայնիվ, կարևոր է շեշտել, որ գենդերային հիմքով բռնության դեպքերի մասին հաղորդելու մշակութային խոչընդոտները կարող են ավելի շատ ազդել Լեռնային Ղարաբաղի գյուղական շրջաններից եկած կանանց և աղջիկների վրա, քան մայրաքաղաքից եկածների վրա: Ինչպես պարզաբանեց Արագածոտնում ծառայություններ մատուցողներից մեկը, «Գյուղական բնակավայրերից եկած [փախստական] կանանց շրջանում առավել շատ է զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելու վտանգը, քան Ստեփանակերտից եկածների մոտ, քանի որ համայնքներում ավելի պահպանողական է մշակույթը ու շատ քիչ է հավանականությունը, որ նրանք հաղորդում կներկայացնեն: Ստեփանակերտից եկող կանայք շատ ավելի ինքնավստահ են»:

Անչափահաս աղջիկների համար ծնողների արձագանքի հանդեպ վախը լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում գենդերային հիմքով բռնության դեպքերի մասին խոսելու համար: Դեռահաս հարցվողներն ընդգծեցին տարբեր սերունդների վերաբերմունքի տարբերությունը խնդիր վերաբերյալ: Արմավիրից մի աղջիկ հայտնում է.

> *Երիտասարդներին ավելի բաց են այդ մասին [ԳՀԲ-ի] խոսել, սկսել են մտածել գենդերային հավասարության մասին: Մեծերն ավելի պահպանողական են և չեն խոսում այդ մասին: Մեր ծնողների ու տարեցների համար այս թեման ընդհանրապես փակ է»:*

Աղջիկների մեծամասնությունը հայտնել է, որ իրենք չափազանց ամաչկոտ են և կվախենան նման փորձով կիսվել իրենց ծնողների հետ, իսկ Արմավիրից մի աղջիկ նշել է.

«Ես երբեք չեմ ասի բռնության մասին, քանի որ ինձ չեն հասկանա, դե վատագույն դեպքում, [ծնողներս] տանից կհանեն, երևի ….»: Դեռահաս աղջիկները նշում էին, որ կա նաև ակնկալիք, որ աղջիկը, որը ենթարկվել է բռնության, պետք է ամուսնանա բռնարարի հետ. «ու գիտեք, աղջիկը գուցե ավելի շատ

մեղադրվի, քան տղամարդը [բռնություն գործադրած անձը], չնայած հենց ինքն է արել այդ …» (դեռահաս աղջիկ, Արմավիր):

Մյուս մտահոգությունը, որ բարձրացրել են աղջիկները՝ որպես գենդերային հիմքով բռնության դեպքերի մասին հաղորդման հետևանք, համայնքից մեկուսացման վախն էր: Արմավիրից մի աղջիկ կիսվում է Լեռնային Ղարաբաղում պատահած մի դեպքով՝ «սեռական բռնության էր մի աղջիկ ենթարկվել, նա էլ դպրոց չէր գնում ու ոչ մեկի հետ չէր շփվում….»: Նման իրավիճակի վերաբերյալ իրենց դիտարկումները ներկայացնելով՝ միևնույն ֆոկուս-խմբային քննարկման մասնակից աղջիկները, եզրակացրեցին, որ աղջկա համար լավագույն տարբերակը համայնքը փոխելն է, քան թե հաղորդում ներկայացնելը բռնության դեպքի մասին, քանի որ «դա ավելի հեշտ կլինի, որովհետև մարդիկ ինչ ասես՝ կասեն»: Նույնիսկ մտերիմ մարդկանց հետ շփվելու պարագայում, որոնց կարող էին վստահել, Արմավիրից մի աղջիկ կարծում էր, որ «լավ չէ այդ մասին խոսել ընկերներիդ հետ, քանի որ նույնիսկ նրանք կարող են դա օգտագործել քո դեմ»: Հետևաբար, զարմանալի չէ, թե ինչու են աղջիկները վարանում որևէ մեկի հետ կիսվել իրենց փորձով: Նման դեպքին արձագանքել է Լոռու մարզ տեղափոխված դեռահաս փախստական մի աղջիկ. «Եթե ինձ հետ նման բան պատահի, ես չէի ասի անգամ քույրիկներիս, ոչ էլ մամայիս…. պետք է գաղտնիք լինի. ավելի լավ է դա գաղտնի մնա»:

Լռության մշակույթը, որտեղ գենդերային հիմքով բռնության դեպքերը մնում են չհասցեագրված, հանգեցնում է ևս մեկ մարտահրավերի, որը թույլ չի տալիս կանանց և աղջիկներին խոսել բռնության մասին՝ կանանց իրավունքների մասին գիտելիքների և ԳՀԲ վերաբերյալ իրազեկվածության պակասն է: Այս մասին է նշել նաև Սյունիքում կանանց աջակցություն տրամադրող կառույցի ներկայացուցիչը.

> *Կանանց կրթության պակաս կա և [ԻԶԲ-ի վերաբերյալ] իրազեկվածության մեծ բաց: Նրանք չգիտեն, թե ինչ է գենդերային հիմքով բռնությունը, դա նորմալացված է, դրա համար էլ ասում են՝ չունենք: […] Կանայք, ընդհանուր առմամբ, չեն հասկանում, որ բռնարարի պահվածքը նորմալ չէ, և նրանք պարտավոր չեն դա ընդունել»:*

Արդյունքում, ինչպես նշեց Կոտայքում ծառայություններ մատուցողը, կանայք «նույնիսկ չեն գիտակցում [այն, ինչի միջով անցնում են] բռնություն է, ուստի չեն հաղորդում դրա մասին»: Խոսելով գենդերային հիմքով բռնության վերաբերյալ իրազեկվածության պակասի մասին՝ ծառայություններ մատուցողները, որպես փախստական կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը նույնականացնելու, չհայտնելու ևս մեկ պատճառ են դիտարկում նաև կոնֆլիկտի արդյունքում առաջացած տրավման և նոր իրավիճակում, միջա-

վայրում հայտնվելը: Ըստ Լոռիում ծառայություն մատուցողի՝ «Արցախի կանայք այժմ այնպիսի վիճակում են, որ չեն կարողանում գիտակցել և ընդունել, որ իրենց հետ կատարվածը [ԳՀԲ] է»:

Այնուամենայնիվ, նույնիսկ այն կանայք, որոնք հասկանում են, որ գենդերային հիմքով բռնության են ենթարկվել, դրա մասին հաղորդումն առաջնահերթություն չի լինի ևս մեկ պատճառով. հավատարիմ մնալով արդեն իսկ վերլուծված ներընտանեկան դինամիկային և վճռորոշ առաջնահերթություն տալով ընտանիքի՝ բանակում ծառայող արական սեռի անդամներին՝ այս կանայք նույնպես լռում են, հատկապես բռնության դեպքում, քանի որ կարծում են, որ այդ կերպ իրենք «պաշտպանում են իրենց ընտանիքները»,- ինչպես նշել է Սյունիքում ծառայություն մատուցողը.

> *Հակամարտությունը բացասաբար է անդրադարձել գենդերային հիմքով բռնության միտումների վրա, և ընտանիքում հոգեբանական բռնության մասին հաղորդումների աճ է նկատվում: Բայց [փախստական] կանայք կարծում են, որ պետք է պաշտպանեն իրենց տղամարդկանց, որ «դա նորմալ է», և նրանք պետք է լռեն [ամուսնու] տրավմայի պատճառով»:*

«Նրանք արդարացնում են իրենց ամուսնու վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղում և Հայաստան գալուց հետո ապրած սթրեսներով»,- ավելացնում է Կոտայքում ծառայություն մատուցողը:

Անգամ եթե կանայք բռնարար հարաբերությունները լքելու կամային որոշում են կայացնում, նրանք կարող են հանդիպել մի շարք խոչընդոտների, որոնք հետ կպահեն նրանց նման բռնության մասին հաղորդելուց: Հիմնական խոչընդոտներից են տնտեսական մարտահրավերները և արդեն իսկ վերը դիտարկված դժվարությունները կանանց աշխատաշուկա մուտք գործելու հարցում: «Տնտեսական կախվածության պատճառով կանայք չեն հայտնում բռնության մասին: […] Եթե նրանք թողնեն իրենց ամուսիններին, չեն իմանա՝ ինչպես են պահելու իրենց խնամքի ներքո գտնվողներին»,- բացատրում է Գեղարքունիքում ծառայություն մատուցողը: Բարձրաձայնված խնդիրներից էին հատկապես կեցությանը վերաբերող հարցերը, որոնք առնչվում էին ինչպես տնտեսական դժվարություններին, այնպես էլ տեղահանման փորձառությանը: Սյունիքում ծառայություններ մատուցողներից մեկը պատմում է.

> *Մենք ունենք մի շահառու, ով բռնության է ենթարկվել, բազմազավակ մայր է, հինգ երեխա ունի: Նա ցանկանում է բաժանվել, բայց շատ անհանգիստ է, քանի որ աշխատանք չունի, չի աշխատում և չունի միջոցներ՝ ամուսնուց առանձին ապրելու համար: Մենք փորձում ենք նրան օգնել, նոր գիտելիքներ, հմտություններ փոխանցել, որ աշխատանք կարողանա գտնել: Իսկ Արցախից տեղահանված կնոջ համար նման քայլ անելը շատ ավելի դժվար է՝ ոչ տուն ունի, ոչինչ չունի, ո՞ւր*

գնա»,– նշեց նա և հավելեց, որ տեղացի կանայք նույնպես բախվում են նմանատիպ խնդիրների, քանի որ «ըստ ավանդույթի բնակարանի, սեփականություն ունենալու դեպքում առաջնահերթությունը տրվում է տղամարդկանց և ժառանգությունն ու ունեցվածքը հաճախ հենց տան տղամարդկանց էլ անցնում է»:

Հարցմանը մասնակցած անձիք բարձրաձայնել են խնդիրներ, որոնք վերաբերում են բռնության ենթարկված անձանց աջակցության տրամադրմանը՝ ծառայությունների հասանելիություն, մատչելիություն, դրանց մասին տեղեկացվածություն և այլն: Այդ հարցերն առավել մանրամասն ներկայացված են հետազոտության հաջորդ գլխում:

Գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունները

Հայաստանում գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողները մեծ ներգրավվածություն են ունեցել փախստականների կարիքների արձագանքման գործում: Այդ կառույցների մի մասը նոր թիրախային ծրագրեր մեկնարկեց, որոնք հատուկ ուղղված էին արտակարգ իրավիճակների արձագանքմանը, մյուսները վերափոխեցին ծրագրերը, որպեսզի կին փախստականները ևս մասնակիցը դառնան ծրագրին: Այնուամենայնիվ, հաշվի առնելով փախստականների կարիքների արձագանքման աննախադեպ ծավալները, ինչպես նաև զարգացման ծրագրերից արտակարգ իրավիճակների արձագանքմանն ուղղված ծրագրերի կտրուկ անցումը, ի հայտ եկան որոշ մարտահրավերներ: Հետազոտության այս հատվածը կանդրադառնա գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայություններին երկու տեսանկյունից. նախ այն կներկայացնի բռնություն վերապրածների հետ կապ հաստատելուն և առավել խոցելի կանանց ու աղջիկներին պատշաճ աջակցություն մատուցելու հիմնական մարտահրավերներին, ինչպես նաև՝ գենդերային բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունների հասանելիությանը՝ քարտեզագրելով հնարավոր բացերն ու հետագա զարգացման հնարավորությունները:

ԳՀԲ ծառայություններ ստանալու և մատուցելու դժվարությունները

Ծառայություններ մատուցողներից շատերի կողմից բարձրաձայնված հիմնական խոչընդոտներից մեկը այն է, որ բռնության ենթարկված անձինք վարանում են դիմել աջակցության համար, ինչպես նաև խուսափում են պարբերական, համապարփակ աջակցությունից: Ի լրումն հետազոտության նախորդ բաժնում ներկայացված վերլուծության, որն անդրադառնում էր՝ փախստական կանանց և աղջիկների կողմից բռնության մասին հաղորդում չներկայացնելու հանգամանքներին, ծառայություններ մատուցողները և փախստական կանայք բարձրաձայնել են նաև հասանելի ծառայությունների հանդեպ վստահության և դրանց վերաբերյալ իրազեկվածության բացերի մասին՝ կին փախստականների շրջանում:

Ըստ փախստական կանանց և աղջիկների, վստահության խնդիրը սերտորեն կապված է գաղտնիության սկզբունքի խախտման հետ: «Երբ կինը դիմում է օգնության, գաղտնիությունը հաճախ չի պահպանվում»,- իր մտահոգությունը հայտնեց Լոռիում ապաստան գտած փախստական մի կին,- «Ծառայություններ մատուցողները կպատմեն դեպքի մասին, կտարածեն տեղեկատվությունը, հետո էլ համայնքը կմեղադրի մեզ (կանանց), դրա համար էլ կանայք պարզապես ձեռնպահ են մնում դիմելուց և դադարում է օգնություն փնտրել»: Ծառայություններ մատուցողներն էլ իրենց հերթին նշում են, որ կանայք և աղջիկները վարանում են իրենց խնդիրները ներկայացնելուց. «Դժվար է [ԳՀԲ] քարտեզագրելը, շատ աշխատանք է պահանջվում, որպեսզի [փախստական կանայք] վստահեն, բացվեն, բայց մենք աշխատում ենք դրա վրա»,- նշեց Վայոց ձորում ծառայություն մատուցողը: Գենդերային բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագետների մեծամասնությունն այս բացը կամրջելու և բռնության ենթարկված անձանց հետ հարաբերություններ ստեղծելու համար խնդրի հիմնական լուծում է դիտարկում կանանց և աղջիկների անվտանգ տարածքների և նրանց համար համապարփակ ծառայությունների ապահովումը: Լոռիում ծառայություններ մատուցողներից մեկը պնդում էր, որ սկզբնական անվստահությունից հետո «[փախստական կանայք և աղջիկները] սկսում են գալ մեր կենտրոն, նրանք մտերմացել են մեզ հետ և ավելի շփվող են դարձել», իսկ Արարատում ծառայություն մատուցողը նշում է, որ վստահությունը հիմնականում կառուցվում է «[կազմակերպությունների կողմից] տարվող շարունակական աշխատանքի միջոցով, որը օգնում է կանանց հետ փոխվստահության մթնոլորտ ստեղծել և մենք էլ ամեն ինչ անում ենք, որ իրենք մեզ մոտ իրենց ապահով ու հարմարավետ զգան»:

Հետազոտության շրջանակում բացահայտված մեկ այլ խնդիր էլ՝ փախստականների շրջանում գենդերային բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունների վերաբերյալ գիտելիքների պակասն է: Այդ մասին էին վկայում թե փախստական կանայք, որոնք նշում էին, որ իրենք չգիտեն, թե կոնկրետ ինչ պետք է

անել, ում դիմել, եթե որոշել են հայտնել բռնության մասին, իսկ ծառայություններ մատուցողների մեծամասնությունը համաձայնել է, որ փախստական կանայք և աղջիկները տեղյակ չեն գոյություն ունեցող ծառայությունների մասին: Այս տեղեկատվական բացի մասին նշվեց նաև ֆոկուս խմբային քննարկումների ժամանակ, որտեղ որոշ կանայք և աղջիկներ պատմում էին ստացած տարբեր ծառայությունների մասին, որոնց մասին մյուս մասնակիցները տեղեկացված չէին: Արարատում ծառայություններ մատուցողներից մեկը նշեց, որ ընդհանուր առմամբ աջակցության համակարգերի վերաբերյալ անվստահության ու տեղեկացվածության բացի պատճառներից մեկն էլ փախստականների ծննդավայրում նման ծառայությունների բացակայությունը կարող է լինել.

> *Կան բազմաթիվ պատճառներ, թե ինչու կանայք չեն հայտնում գենդերային բռնության մասին: Նախ, Լեռնային Ղարաբաղում օրենք կամ ծառայություն չի եղել ընտանեկան բռնության վերաբերյալ: Հարցրեցինք արցախցի կանանց՝ Արցախում նման ծառայություններ կա՞ն, բոլորն ասացին՝ «ոչ»:*

Բարձրաձայնվել է նաև առհասարակ փախստականներին մատուցվող ծառայությունների ոչ պատշաճ համակարգման մասին: Կոտայքից փախստական մի կին հայտարարեց, որ մարդասիրական օգնությունն այդ մարզում

> *չհամակարգված է, օրինակ՝ մենք չգիտեինք, թե ինչ պետք է ստանանք քաղաքապետարանից, պարզապես ինչ-որ մեկից լսում ենք, որ ինչ որ բան են տալիս, հետո գնում ենք այնտեղ, հարցնում ենք դրա մասին. հետո մեզ ասացին, որ մենք պետք է գնանք գրանցվենք, և մենք կարող ենք երկու-երեք ամիս սպասել ծառայությունների ստանալու համար»:*

Ընդհանուր առմամբ, ծառայություններ մատուցողների շրջանում կար ընդհանուր ըմբռնում, որ կին փախստականների շրջանում իրազեկման ընդլայնման ավելի մեծ շեշտադրում է պետք անել՝ հասանելի ծառայությունների և գենդերային հիմքով բռնության՝ որպես բռնության տեսակի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ: Արագածոտնում ծառայություն մատուցողներից մեկը ներկայացրեց իրազեկման միջոցառումների և գենդերային բռնության մասին հաղորդում ներկայացնելու ուղիղ կապը:

> *Այն բանից հետո, երբ [կանայք] մասնակցում են իրազեկության բարձրացման հանդիպումների, նրանցից ոմանք սկսում են գիտակցել, որ այն, ինչ իրենց հետ կատարվում է, ընտանեկան բռնություն է, նրանք հաղորդում են դրա մասին, և մենք գործի վարում ենք իրականացնում»:*

Ծառայություն մատուցողները նշեցին նաև, որ իրենց կողմից տրամադրվող ծառայությունների վերաբերյալ իրազեկման աշխատանքները հաճախ խաթարվում են փախստական ընտանիքների կրկնակի տեղափոխության, այլ բնակավայր տեղափոխվելու պատճառով: «Արցախցի կանայք չեն բարձրաձայնում, ու դրա պատճառը կարող է նաև այն լինի, որ մշտական բնակություն վայր դեռևս չունենք», - նշեց Շիրակ տեղափոխված փախստական մի կին: «Շատերս դեռևս չունենք հիմնական ապրելու տեղ, կան մարդիկ, որ մտածում են այլ վայր, երկիր տեղափոխվելու մասին, դրա համար էլ շատ դեպքերում տեղյակ չենք, թե ինչ ծառայություններ կան»: Տեղահանված բնակչության նման տեղաշարժերը մեծապես անդրադառնում են նաև գենդերային բռնության արձագանքման ծառայության վրա: Մասնակիցներին ուղղված այն հարցին, թե ինչպես է ապահովվում գենդերային բռնության դեպքերի հաշվառումն ու շարունակական վարումը փախստական շահառուների վերաբերյալ, նրանց կողմից նշվեց, որ դեպքերի վարման համակարգված փոխանցման մասին տեղեկատվությունը բացակայում է: Ծառայություններ մատուցող կառույցը գործընկեր կառույցին՝ շահառուների մասին տվյալներ է փոխանցում կամայական, ոչ համակարգված ձևով ու միայն այն դեպքում, երբ կապ է պահպանել շահառուի հետ: Մյուս կողմից գրանցվել են նաև դեպքեր, երբ ծառայություն մատուցողը հավելյալ ջանք է գործադրել շահառուի հետ կապը պահելու համար՝ աշխատանքային պարտականություններից դուրս: Ինչպես հայտնում է Վայոց ձորում ծառայություն մատուցողը.

> *Վայքում փախստական կանանց հետ շատ կապեր ունեինք. նրանք այժմ այլ մարզերում են և զանգում են [մեզ]: Մենք փորձում ենք նրանց ուղղորդել աջակցության տարբեր կենտրոններ, այլ մարզերի գործընկերների հետ ենք ծանոթացնում»:*

Թեև գենդերային բռնության ենթարկված անձանց համար աջակցման կենտրոններ կան Հայաստանի բոլոր մարզերում, սակայն հասանելիության խնդիրների պատճառով շատ կանայք ու աղջիկներ չեն կարողանում հասնել կենտրոն ու ստանալ համապատասխան աջակցություն: Ենթակառուցվածքների անհավասար զարգացվածությունն էլ ավելի խոցելի է դարձնում փախստական կանանց ու աղջիկներին, որոնք բնակություն են հաստատել հեռավոր կամ գյուղական բնակավայրերում: Արագածոտնում ծառայություններ մատուցողներից մեկը, խոսելով մատչելիության խնդրի մասին, բերում է շահառուներից մեկի օրինակը. «Քսանմեկ տարեկան մի աղջիկ էր, ուսանող էր, Արցախից էին եկել: Հայրը արտագնա աշխատանքի էր, իսկ մայրը մահացել է: Երբ նա եկավ Հայաստան, ստիպված էր ապրել մեծ ընտանիքում՝ գյուղական վայրում: Նրա համար դժվար էր գյուղից հասնել մեզ մոտ՝ միջոցառումներին մասնակցելու համար. ճանապարհները վատ են: Միայն իր տատիկի հետ Թալին տեղափոխվելուց հետո նա սկսեց պարբերաբար գալ մեր կենտրոն, քանի որ ավտոբուս կա արդեն»:

Լոռիում բնակություն հաստատած մի դեռահաս աղջիկ կիսվել է նմանատիպ մարտահրավերով.

> *Ես կուզեի կոնկրետ հմտություններ ձեռք բերել, բայց այստեղ այդ հնարավորությունը չկա, պետք է գնամ Սպիտակ: [...] Տրանսպորտի խնդիր կա՝ հանգստյան օրերին տրանսպորտը կանոնավոր չի գործում, իսկ մյուս օրերին դպրոցի պատճառով չեմ կարող հաճախել»:*

Նույնիսկ երբ տրանսպորտը գործում է, շատ աղջիկներ խուսափում են օգտվել դրանից, ինչը անհնարին է դարձնում նրանց համար օգտվելու անհրաժեշտ ծառայություններից՝ հեռավորության պատճառով: Արագածոտնից մի դեռահաս աղջիկ, երբ պատմում էր ծառայություններից չօգտվելու պատճառների մասին, բացատրեց.

> *Խնդիրը ծնողներիս մեջ չէ, այլ տրանսպորտի: [...] Ես հարմարավետ չէի զգա ինքնուրույն ճանապարհ գնալ, և ծնողներս էլ թույլ չէին տա: Տղաների դեպքում դա նորմալ է, և ավելի սովորական կլիներ մենակ գնալը. եղբայրս տասնինը տարեկան է, և նա հասարակական տրանսպորտից ա օգտվում: Բայց ես ինձ ապահով չէի զգա: Եթե եղբայրս կամ ծնողներս ինձ ուղեկցեն, այդպես կլիներ, բայց մենակ գնալը՝ չէ»:*

Այս բացը հաղթահարելու համար, որոշ դեպքերում կազմակերպությունները մի շարք ծառայություններ են տրամադրում հեռավար եղանակով, ինչպես, օրինակ, իրավական և սոցիալ-հոգեբանական աջակցությունը: Բայց կան ծառայություններ, որոնք հնարավոր չէ տրամադրել առցանց՝ հեռավար ձևաչափով: Արագածոտնում ծառայություն մատուցողը նման դեպքերից մեկն է ներկայացրել.

> *Ընդհանուր առմամբ, գյուղական բնակավայրերի կանայք ցանկանում են մասնակցել տնտեսական հզորացման միջոցառումներին և դասընթացներին: Նրանք ցանկանում են սովորել, օրինակ. վարսահարդարում կամ մատնահարդարում և ստանալ անհրաժեշտ սարքավորումները, որպեսզի կարողանան աշխատել, բայց մենք չունենք բավարար ֆինանսավորում՝ նրանց աջակցելու համար: Գյուղերից Թալին գալու, իսկ հետո հետադարձ տրանսպորտային փոխադրման համար վճարելը խնդրահարույց է: [...] Որոշ միջոցառումների համար մենք ենք այցելում՝ հանդիպում այն գյուղական բնակավայրերի կանանց հետ, ովքեր չեն կարող հասնել այստեղ, բայց այս դասընթացների դեպքում, օրինակ, նման կերպ վարվել չենք կարող, որովհետև անհրաժեշտ սարքավորումներն այստեղ են՝ Թալինում»:*

Ծառայությունների մատուցման հարցում լուրջ խնդիրներ են արձանագրվել հեռավոր և գյուղական վայրերում գենդերային բռնության ենթարկված անձանց պատշաճ ծառայություններ մատուցելու ու ԳԲ

դեպքերի վարումն իրականացնելու համար: Գեղարքունիքում ծառայություններ մատուցողներից մեկն իր մտահոգությունն է հայտնել այս կապակցությամբ՝ հիմնվելով Հայաստանում իր փորձի վրա.

> *Եթե հեռավոր բնակավայրում գենդերային հիմքով բռնության դեպք է արձանագրվում, աջակցման ծառայություններից օգտվելու համար չափազանց շատ ժամանակ է պահանջվում: Այդ մարդիկ դժվար են մեզ հասնում: Երբեմն ուզում ենք տաքսի ծառայության համար վճարել, բայց վարորդները չեն ուզում գնալ այնտեղ, քանի որ այդ կանանց համայնքում չեն ընդունում: [...] Թեև կան որոշ շարժական թիմեր, բայց մենք դժվարանում ենք ծառայություն մատուցել մարզի բոլոր բնակավայրերում, քանի որ մարդկային և ֆինանսական ռեսուրսները չեն բավականացնում»:*

Հատկապես խոցելի խմբերի շարքում են հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, որոնք զրկված են գենդերային հիմքով բռնության դեպքում կենսական ծառայություններից օգտվելու հնարավորությունից: Ինչպես նշել են որոշ ծառայություններ մատուցողները, ճգնաժամի սկզբից էլ առանցքային խնդիրներից է եղել հաշմանդամություն ունեցող բոլոր փախստականների բացահայտումը և նրանց հարմարեցված ծառայությունների մատուցումը: Շիրակում ծառայություններ մատուցողներից մեկը կիսվել է բնակչության այդ խմբի հետ կապվելու՝ իր կազմակերպության դրսևորած ջանքերով.

> *Երբ մարդիկ տեղահանվեցին, հաշմանդամություն ունեցող անձանց հաշվառման փորձ արվեց, բայց դա ճիշտ չարվեց: [Ավելին] տվյալների գաղտնիության պատճառով մենք չենք կարող իմանալ, թե ովքեր են հաշմանդամություն ունեցող անձինք: Փորձում ենք գնալ համայնքներ՝ նրանց տեղերում կամ համայնքային ժողովների միջոցով բացահայտելու համար»:*

Այս խոչընդոտը հատկապես մտահոգիչ է՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց սահմանափակ հնարավորությունները՝ գենդերային հիմքով բռնության ծառայություններից ինքնուրույն օգտվելու համար: Առաջին խոչընդոտը, որին կհանդիպեն հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք ենթարկվել են գենդերային հիմքով բռնությանը, տրանսպորտն է: Երևանից ծառայություններ մատուցողն այսպես է ներկայացնում այս խնդիրը.

> *Ընդհանրապես Հայաստանում ենթակառուցվածքները ներառական չեն, հաշմանդամություն ունեցող անձինք չենք կարող օգտվել հասարակական տրանսպորտից, ուստի պետք է տաքսիից օգտվել, իսկ այն թանկ է: Արցախում այս առումով ավելի լավ էր միայն Ստեփանակերտում, որտեղ ավտոբուս կար, որը հավաքում*

էր բոլոր հաշմանդամ երեխաներին, տանում մասնագիտացված կենտրոն և վերադարձնում տուն: [...] Մեր սահմանափակ ռեսուրսները ապակենտրոնացած են, և մենք չենք կարող հոգալ տրանսպորտային ծախսերը: Օրինակ՝ Աբովյանից (Կոտայք) և Ջրվեժից (Կոտայք) երկու երեխաների՝ ամեն օր փոխադրելու տրանսպորտային ծախսերը նույնն են, ինչ վերականգնողական ծախսերը»:

Նույնիսկ երբ առանձին դեպքերում տեղափոխման հարցում աջակցությունը հասանելի է տուժած բնակչությանը, հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների մասին տեղեկանալու համար բազմաթիվ խոչընդոտներ են առաջանում. «նրանցից շատերը գաղտնի են պահում իրենց ինքնությունը, ուստի նրանց [կազմակերպությունները] չեն կարող ներգրավել»,– նշում է Ճիրակում ծառայություն մատուցողը:

Մեկ այլ կարևոր խոչընդոտ կա այն ծառայություններում, որոնք սովորաբար անհասանելի են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար: Այս մտահոգությունը վեր հանվեց Ճիրակում ծառայություն մատուցողի հետ զրույցում, երբ նա անդրադարձավ, թե ինչու հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները չեն հայտնում բռնության մասին.

Գենդերային հիմքով բռնության ծառայությունները հասանելի չեն հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար, դրանք տեղակայված չեն մատչելի շենքերում և հաշմանդամության առանձնահատկությունները հաշվի չեն առնում: Մենք պետք է վերապատրաստենք ծառայություն մատուցողներին՝ նրանց [հաշմանդամություն ունեցող անձանց] հետ հաղորդակցվելու հմտություններ փոխանցենք: Մեկ այլ խնդիր, օրինակ, մտավոր հաշմանդամություն ունեցող կանայք չեն կարող նույնականացնել սեռական բռնությունը. իսկ եթե լսողության խնդիրներ ունեցող կին է դիմում ոստիկանություն, ապա ժեստերի լեզվով թարգմանություն չկա. նրանց հասանելի չեն նաև թեժ գծերը: Հաշմանդամություն ունեցող կանայք տեղյակ չեն գենդերային հիմքով բռնության ծառայությունների մասին, և հաղորդում ներկայացնելու եղանակները հաշվի չեն առնում հաշմանդամությունը, հաշմանդամության նկատմամբ զգայուն, հարմարեցված ու ներառական չեն: Փախստականներին սպասարկող կազմակերպությունները մտածում են միայն առաջնային կարիքների, հագուստի, կացարանի մասին, բայց հաշմանդամություն ունեցող կանանց ուղղորդում կամ տեղեկատվություն չեն տրամադրում: [...] Ես կարծում եմ, որ դրամաշնորհատու կազմակերպությունները պետք է գումար հատկացնեն միայն այն կազմակերպություններին, որոնք ունեն բավարար զգայունություն և կրթություն հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատելու համար և անցել են պարտադիր դասընթացներ հաշմանդամություն ունեցող կանանց հետ աշխատելու վերաբերյալ, մասնավորապես՝ հաշմանդամություն և գենդեր, հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ խտրականություն, պատշաճ բառամթերքի օգտագործում և այլն»:

Միևնույն ծառայություն մատուցողը կարևորել է հաշվետվողականության և մասնակցային մոտեցումները գենդերային հիմքով բռնության ծրագրերի իրականացման հարցում, որոնք են հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների մասնակցությունը մշտադիտարկման համապատասխան ցուցանիշների մշակման աշխատանքներին և հաշմանդամություն ունեցող անձանց, ինչպես նաև թե կանանց, և թե կանանց հետ աշխատելու փորձ ունեցող կազմակերպությունների ներառումը այդ գործընթացներում:

Ծառայություններից օգտվելու խոչընդոտներից մեկը հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկներին ուղեկցողի բացակայությունն է: Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը մատնանշում է ուղեկցող ունենալու անհրաժեշտության մասին, երբ խոսքը վերաբերում է ծառայությունների ֆիզիկական անմատչելիությանը, քանի որ «նույնիսկ դպրոց պետք է գնալ նրանց [հաշմանդամություն ունեցող երեխաների] հետ, քանի որ կարող է անհրաժեշտ լինել նրանց ֆիզիկապես գրկել ու տանել, իսկ մայրերը պետք է ողջ օրն անցկացնեն նրանց հետ»: Արմավիրում մտավոր հաշմանդամություն ունեցող փախստական դեռահաս աղջկան խնամողը հաստատում է այս խնդիրը՝ իր դստեր մասին պատմելիս.

> *Նրան պետք է ամենուր ուղեկցեն, քանի որ նա չգիտի տվյալ վայրը, դեպի ծառայության վայր տանող ճանապարհները: Նա չի կարող ինքնուրույն շփվել, և անվտանգ չէ նրան մենակ հասարակական տրանսպորտ նստեցնելը: Բայց Արցախում նա որոշ միջոցառումների ինքնուրույն էր մասնակցում»:*

Խնամք տրամադրողների համար հաճախ դժվար է ժամանակ հատկացնել, որ իրենց երեխաներին տանեն ծառայություն ստանալու՝ պայմանավորված իրենց աշխատանքով կամ տնային այլ պարտականություններով: Ավելին, ինչպես նախկինում խոսվեց, սա ավելի շատ կանդրադառնա հաշմանդամություն ունեցող աղջիկների, քան տղաների վրա, քանի որ շատ դեպքերում ծնողներն ավելի ուշադիր են հաշմանդամություն ունեցող տղաների, քան դստերերի նկատմամբ:

Եվ իհարկե, հանրային ծառայություններից օգտվելու համար լրացուցիչ խոչընդոտ է հանդիսանում հաշմանդամություն ունեցող փախստականների անձնական փաստաթղթերի բացակայությունը: Ինչպես նշեց Երևանում ծառայություններ մատուցողներից մեկը, տարածված գործելաոճը հետևյալն է. «օգտագործել [մասնավոր հատվածի] ծառայություններ մատուցողներին՝ աջակցելու փախստականներին»: Ծառայությունների նման անհասանելիությունը ոչ միայն ազդում է բոլոր այն փախստականների վրա, որոնք չունեն անհրաժեշտ փաստաթղթեր, այլ նաև անհամաչափորեն ծանրաբեռնում է նրանց խնամողներին, որոնք, որպես կանոն, ընտանիքի կին անդամներն են, առավել հաճախ՝ մայրերը:

Թեև հարցվածների հիմնական մտահոգությունը վերաբերվում է ծառայությունների հասանելիությանը և մատուցմանը, բարձրաձայնվել են նաև տրամադրվող ծառայությունների տեսակներին առնչվող խնդիրներ: Սա կլինի հաջորդ բաժնի քննարկման առարկան:

ԳՀԲ ծառայությունները և առկա խնդիրները

Հարցված ԳՀԲ ծառայություններ մատուցողների ճնշող մեծամասնությունը հաստատել է, որ իրենց կազմակերպությունը (եթե ԳՀԲ ոլորտում մասնագիտացված է) առաջարկում է գենդերային հիմքով բռնության ծառայությունների նվազագույն փաթեթ՝ դեպքերի վարում կամ ուղղորդում, իրազեկման բարձրացում և կենտրոնացված ոչ մասնագիտացված հոգեկան առողջության և հոգեսոցիալական ծառայություններ (ՀԱՀԾ)՝ հիմնականում խմբային ձևաչափով, ինչպես նաև հոգեսոցիալական աջակցություն (ՀՍԱ): Դրան տարբեր կազմակերպություններ հավելում են իրավաբանական, մասնագիտացված ՀԱՀԾ և տնտեսական հզորացմանն ուղղված ծառայություններ, անհատական հիգիենայի փաթեթների բաշխում և այլն:

Գենդերային հիմքով բռնության դեպքերի վարման ծառայությունները մատուցվում են ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից պատվիրակված կազմակերպությունների կողմից, որոնք հասանելի են յուրաքանչյուր մարզում: Կանանց և աղջիկներին ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններ իրականացնում են միայն ուղղորդում, եթե առկա է գենդերային հիմքով բռնության հաղորդում: Ելնելով գենդերային հիմքով բռնության հաղորդումների առկա միտումներից՝ մի շարք դեպքերում արձանագրվել է բացառապես ընտանեկան բռնության արձագանքման վրա կենտրոնանալու պրակտիկա: Որոշ ծառայություններ մատուցողներ իրենց գլխավորապես պատասխանատու են համարում ընտանեկան բռնության դեպքերի համար (ներառյալ զուգընկերոջ կողմից բռնությունը), մինչդեռ ընտանիքից դուրս տեղի ունեցող գենդերային բռնությունն համարում են բռնության տեսակ, որն իրենց լիազորություններից կամ փորձառությունից դուրս է գտնվում: Այնուամենայնիվ, ծառայություններ մատուցողները կամավոր պատրաստակամություն հայտնեցին ընդլայնելու իրենց ծառայությունները գենդերային հիմքով բռնության բոլոր տեսակների համար, եթե նման դեպքեր ներկայացվեն: Հատկապես զուգընկերոջ կողմից իրականացված բռնության վերաբերյալ աշխատանքի ոչ հստակության մեծ մասը պայմանավորված էր ազգային իրավական դաշտի շրջանակից: Ծառայություններ մատուցողներից շատերը ծանոթ չէին, որ գործում են զուգընկերոջ կողմից բռնությանը կամ ընտանեկան բռնությանը վերաբերող օրենքներ և դա համարում էին որպես իրենց գործունեության մարտահրավերներից մեկը, չնայած այն հանգամանքին, որ Հայաստանի օրենսդրությունը հիմքեր է նախատեսում ընտանեկան բռնության ենթարկված անձանց պաշտպանության համար: Համապատասխան իրավական դաշտի իմացության դեպքերում բացահայտվել են որոշ հակասություններ օրենսդրության որոշ հատվածների և զոհակենտրոն մոտեցման սկզբունքների միջև՝ հիմնականում բռնարարների հետ աշխատանք տանելու վերաբերյալ, ինչն առաջարկվում է ազգային օրենսդրությամբ և կտրականապես մերժվում՝ գենդերային հիմքով բռնության արձագանքման

միջազգային ուղեցույցների կողմից:[34] Նկատի ունենալով վերոնշյալ մարտահրավերները՝ գնահատումը կարևորում է գենդերային հիմքով բռնությանը արձագանքողների կարողությունների հետագա ընդլայնման հնարավորությունը՝ այդ դեպքերի վարման տարբեր լավագույն փորձերի (զուգընկերոջ կողմից բռնության մասով և դրանից դուրս) որդեգրման և գենդերային հիմքով բռնության վերաբերյալ ազգային օրենսդրության իմացության ուղղությամբ: Ինչ վերաբերում է ՀԱՀԾ-ին, բացի դեպքի վարման շրջանակում տրամադրվող ծառայությունից, պահանջարկը մեծ է տուժած կանանց և աղջիկների շրջանում, ինչպես նաև կազմակերպություններն առաջարկում են բազմազան ծառայություններ այս ուղղությամբ: Մասնագիտացված ՀԱՀԾ աջակցության տրամադրման անհրաժեշտությունը տվյալների հավաքագրման գործընթացում ամենահաճախ քննարկվող թեմաներից էր: Լոռիում հաստատված փախստական մի կին բացատրել է, թե ինչու նման ծառայությունները կենսական նշանակություն ունեն տեղահանված կանանց և աղջիկների համար և նկարագրել նրանց ընդհանուր հոգեվիճակը. «Մեզ տանջում են հիշողությունները. բոլորը սթրեսի մեջ են, շատ են հոգեբանական խնդիրները և գլխացավերը»: Վայոց ձորում ծառայություններ մատուցողը կիսվում է հոգեկան առողջության և հոգեբանական խնդիրներով, որոնք տարածված են փախստական կանանց և աղջիկների շրջանում, նշելով, որ նրանցից շատերը «դրսևորում են հոգեսոմատիկ խնդիրներ, որոնք հետտրավմատիկ սթրեսային խանգարման նշաններ են, ներառյալ գլխացավերը, սնվելու խանգարումները և այլն»: Այնուամենայնիվ, թեև և՛ ծառայություններ մատուցողները, և՛ տուժած կանայք բարձրաձայնել են նման աջակցության պահանջարկի աճի մասին, Արարատում ծառայություններ մատուցողն ընդգծում է համայնքներում առկա մշակութային խոչընդոտների մասին, որոնք արգելք են հանդիսանում այդ ծառայություններից օգտվելու համար. «Ընդհանուր առմամբ, հոգեբանին այցելելու խնդիր, կարծրատիպեր կան. [համայնքում] կարծում են, որ նրանք նույնն են, ինչ հոգեբույժները»: Դիտարկված մեկ այլ մարտահրավեր կապված էր որոշ ծառայություններ մատուցող կազմակերպությունների ՀԱՀԾ անձնակազմի կարողությունների հետ: Թեև որոշ կազմակերպություններ ընդգծեցին հոգեբանների ահռելի դերը տուժած կանանց և աղջիկների հետ աշխատելու համար, մյուսները նշեցին «փախստական կանանց և աղջիկների հետ աշխատելու հարցում հոգեբանի իրազեկության բարձրացման» խիստ անհրաժեշտության մասին, ինչպես, օրինակ, նշեց Գեղարքունիքում ծառայություններ մատուցողը: Երբ խոսքը վերաբերում է կենտրոնացված ոչ մասնագիտացված խմբային հոգեսոցիալական աջակցությանը, հարցված ծառայություններ մատուցողների մեծ մասը հաստատել է, որ նման ծառայություններն իրականացվում են գենդերային հիմքով բռնության հաղթահարմանն

[34] Տե՛ս օրինակ Gender-based Violence Information Management System (GBVIMS) Steering Committee (2017), Interagency Gender-Based Violence Case Management Guidelines: Providing Care and Case Management Services to Gender-Based Violence Survivors in Humanitarian Settings, հասանելի՝ https://www.gbvims.com/wp/wp-content/uploads/Interagency-GBV-Case-Management-Guidelines_Final_2017.pdf,103-105

ուղղված ծրագրերի շրջանակներում: Բոլոր դեպքերում դրանք եղել են ոչ ֆորմալ խմբային ՀՍԱ միջոցառումներ՝ հիմնականում ստեղծագործական կամ ժամանցային գործունեության շրջանակում: Հարցված կանայք հայտնել են, որ, ընդհանուր առմամբ, բարձր են գնահատում կանանց և աղջիկների համար ապահով տարածքների (ԿԱԱՏ) ծառայությունները՝ գիտակցելով դրանց կարևորությունը «ուղղորդման, գործազրկության նվազեցման, տարբեր հանդիպումների մասնակցելու համար»,- ինչպես բացատրեց Լոռիում հաստատված մի փախստական կին: Մասնակիցները նշում են, որ ապահով, միայն կանանց համար նախատեսված տարածքների առկայությունն ինքնին բարենպաստ է անդրադառնում փախստական կանանց ինքնազգացողության վրա, ինչպես նկարագրում է Լոռիում ծառայություններ մատուցողը. «Կինը կարիք ունի խոսելու և կիսվելու այլ կանանց հետ, և երբեմն նրանք պարզապես գալիս են, նստում և արտասվում»:

Այնուամենայնիվ, դեռահաս աղջիկներին մատուցվող գենդերազգայուն ծառայությունների բաց կա, որտեղ նաև անհրաժեշտ է հաշվի առնել տարիքային առանձնահատկությունները: «Չկան միայն դեռահաս աղջիկների համար նախատեսված նախաձեռնություններ,- նշում է Վայոց ձորում բնակվող դեռահասը,- կան ձեռքի աշխատանքների դասընթացներ, որտեղ հաճախում են եղբայրս և քույրս, բայց դա տասներեք տարեկանից փոքր երեխաների համար է, իսկ ես արդեն մեծ եմ դրա համար»: Դեռահաս հարցվողների մեծամասնությունը համաձայնել է, որ իրենց ավելի հարմարավետ կզգային, եթե միայն աղջիկների համար տարածքներ և զբաղմունքներ լինեին: «Ես տեսնում եմ բազմաթիվ կանանց, ովքեր հաճախում են ՀՍԱ միջոցառումներին, և ես կցանկանայի մասնակցել նաև աղջիկների համար նախատեսված նման խմբային հանդիպումների»,- նշել է Արագածոտնում ապրող մի փախստական աղջիկ, իսկ Լոռիից մեկ այլ դեռահաս հարցվող ասել է. «Ինձ համար լավ կլիներ, որ տեղ լիներ, ուր մենք կարող ենք հանդիպել իրար՝ միայն արցախցի աղջիկներով»: Որոշ ծառայություն մատուցող կազմակերպություններ ևս կարևորել են միայն դեռահաս աղջիկների համար նախատեսված միջոցառումների առկայությունը: Ինչպես նշել է Շիրակի ծառայություն մատուցողը, «դեռահաս աղջիկները հիմնականում ՀՍԱ միջոցառումների կարիք ունեն, ինչպես նաև արտադասարանական միջոցառումների, որոնց հիմնական նպատակը սոցիալական ներառումը պետք է լինի»: Լոռիում ծառայություններ մատուցողը նշում է, որ իրենց ծրագրի շրջանակում դեռահաս աղջիկները մասնակցում են իրենց կողմից կազմակերպված նախաձեռնություններին, եթե դրանք տարիքային և սեռային առումներով տարանջատված են: «Մենք հատուկ վարսահարդարման դասընթաց կազմակերպեցինք [աղջիկների] համար. նրանք չէին ուզում կենտրոն հաճախել, ուզում էին իրենց համար հատուկ դասեր ունենայինք»: Այնուամենայնիվ, միայն աղջիկների համար կազմակերպված նման միջոցառումները Հայաստանում գործող ԳՀԲ ծրագրերում մեջ ավելի շուտ բացառություն են, քան ընդունված մոտեցում:

Հարցված փախստական կանանց և աղջիկների շրջանում ամենաքննարկված հարցերից մեկը կապված էր

կարողությունների զարգացման և տնտեսական հզորացման հնարավորությունների հետ, ինչը պայմանավորված է բազմաթիվ խոչընդոտներով, որոնց հանդիպում են կին փախստականներն աշխատաշուկա մուտք գործելիս, ինչպես նշվել է վերևում: Նման հնարավորությունները դիտվում էին որպես ընտանիքի բյուջեի բացերը ծածկելու կարևոր միջոց: Շատ կանայք և աղջիկներ առաջարկում էին տարբեր ոլորտներ, որտեղ կցանկանային ներգրավվել: Դրանցից էին վարսահարդարումը, մատնահարդարումը, կարուձևը, ծրագրավորումը, հաշվապահությունը, ինչպես նաև գյուղատնտեսական, բիզնես, խոհարարության դասընթացներ և «լեզվի ուսուցման դասեր՝ աշխատանքի ավելի լավ հնարավորություններ ձեռք բերելու համար», ինչպես նշում է Լոռիում հաստատված փախստական կինը: Չնայած մի շարք ծառայություններ մատուցող կազմակերպություններ առաջարկում են նման հնարավորություններ, դրանք փախստականներով բնակեցված ոչ բոլոր վայրերում են հասանելի: Դեռահաս փախստական աղջիկներից ոմանք ընդգծեցին իրենց համայնքներում կարողությունների զարգացման հնարավորությունների բացակայության մասին՝ միաժամանակ ընդգծելով նման միջոցառումների կարևորությունը այն աղջիկների համար, որոնք ավարտում են դպրոցը կամ չեն ցանկանում շարունակել իրենց ուսումը: «Այստեղ կրթության հետ կապված բաց կա՝ արհեստագործական հաստատություններ չկան,- ասաց Վայոց ձորում բնակվող փախստական մի աղջիկ,- և կան դպրոցական աղջիկներ, որոնք չեն ուզում համալսարան գնալ, բայց իրենց «միջանկյալ» բան է պետք. Ես արդեն ճանաչում եմ այդպիսի երկու աղջկա»: Բազմիցս ընդգծվում է նաև նման կրթության հավաստագրված լինելու կարևորության մասին: Լոռիում բնակվող մի դեռահաս աղջկա պատմությունը դրա օրինակ է. «Մեզ անհրաժեշտ է վարսահարդարման դասընթաց, որը վկայական է տալիս. պետք է լինի նաև անվճար, քանի որ մենք չենք կարող վճարել սովորելու համար, իսկ առանց վկայականի չենք կարող աշխատանք գտնել»: Գրանցվել են նաև բողոքներ տնտեսական հզորացմանն ուղղված ծրագրերի ոչ բավարար ներառական լինելու համար: «Տարեց կանանց համար դժվար է աշխատանք գտնելը, քանի որ նրանք պետք է ինչ-որ նոր բան սովորեն, և սովորաբար նրանք չեն ընդգրկվում կարողությունների զարգացման ծրագրերում»,- նկատեց Լոռիում բնակվող փախստական մի կին:

Մյուս կանայք նշեցին, որ արդեն տիրապետում են հմտությունների և արհեստագործական գիտելիքների, բայց չեն կարողանում իրենց արտադրանքը վաճառել շուկայում, և հենց այս հարցում են ակնկալում կազմակերպությունների աջակցությունը: Շիրակում փախստական մի կին ևս նույն բանն առաջարկեց.

> *Մայրիկս արհեստ (ասեղնագործություն) գիտի, բայց վաճառելու տեղ չունի: Վաճառելու համար պետք է վճարել հարկերը և դա չափազանց թանկ է, չենք կարող գումար վաստակել: Երևանում կան բազմաթիվ վայրեր, շուկաներ, որտեղ կանայք կարող են վաճառել իրենց արտադրանքը, իսկ այս*

տեղ՝ ոչ: Մեզ պետք է նաև մի վայր, որտեղ կանայք կարող են վաճառել ձեռագործ աշխատանքներ և օգտագործել իրենց հմտությունները՝ խոհարարության, կարուձևի և այլն»:

Մյուս կանայք նշեցին, որ ոչ նյութական աջակցությունը նույնպես շատ կարևոր կլինի, օրինակ սարքավորումների տրամադրում, որոնք կարող են օգտագործել իրենց կարուձևի, մատնահարդարման, խոհարարության և այլ հմտությունների կիրառման գործում: Չնայած ծառայություն մատուցող կազմակերպություններից շատերը շահագրգռված են սկսել կամ ընդլայնել կարողությունների զարգացմանն ուղղված ծրագրերը, այդ թվում դասընթացի տարբեր մասնակիցներին տրամադրելով նաև ոչ նյութական աջակցություն, սակայն նման ծրագրերի իրականացման հիմնական խոչընդոտը շարունակում է լինել ֆինանսավորման բացակայությունը:

Փախստական կանանց և աղջիկների կողմից հաճախակի շեշտվում էր հիմնական կենսական կարիքները բավարարող կոնկրետ ոչ պարենային ապրանքների (ՈՊԱ) բաշխման պահանջը: Թեև ծառայություններ մատուցող կազմակերպություններից շատերը հաստատել են, որ անձնական հիգիենայի փաթեթները հասանելի են՝ որպես իրենց ԳՀԲ ծրագրի բաղադրիչ, մի շարք փախստական հարցվողներ պնդում են, որ այդ փաթեթների և հատկապես դաշտանի համար նախատեսված հիգիենայի պարագաների լրացուցիչ կարիք կա: Հարցված կանանց զգալի մասը, և հատկապես կին գլխավորով ընտանիքները շեշտել են ձմեռման պարագաների անհրաժեշտության մասին, ինչը համառոտ կերպով արտացոլված է կենսամիջոցների հասանելիության բաժնում: Ճիրակում հաստատված փախստական մի կին, որը և ընտանիքի հիմնական կերակրողն է, բարձրաձայնեց այս մտահոգությունը.

«Մեզ անհանգստացնում է այստեղի ցուրտ ձմեռը. մենք ոչինչ չկարողացանք մեզ հետ բերել, իսկ մեր ընտանիքում կան երեխաներ, հղի կին: Մեզ անհրաժեշտ են անկողնային պարագաներ և ջեռուցում: Այն, ինչ ունենք, շատ ծախսատար է, և կարելի է օգտագործել միայն երեկոյան, այնպես որ փոքր տաքացուցիչները կարող են օգնել: Տաք հագուստի կարիք կա. մենք նորածին ունենք, նորածնի համար պետք է ապահովել հիգիենայի պարագաներ, ջեռուցում, հղի կնոջ համար՝ նաև տաք հագուստ»:

Թեև ԳՀԲ ծառայություն մատուցող կազմակերպությունները գուցե չկարողանան տրամադրել նշված բոլոր ՈՊԱ-ները, հարկ է բարելավել ճգնաժամին արձագանքող դերակատարների միջև համակարգումը, ինչպես նաև ապահովել, որ առավել խոցելի խմբերը, որոնք են օրինակ, կին գլխավորով ընտանիքները, ուղղորդվեն դեպի նման օգնություն տրամադրող կազմակերպություններ:

Եվ իհարկե, ծառայություն մատուցող բոլոր կազմակերպությունների կողմից արձանագրված բոլոր մարտահրավերների հիմքում ոչ բավարար ֆինանսական միջոցների առկայությունն է: Արդյունքում, գնալով ավելի է կարևորվում ԳՀԲ ծառայությունների շարունակականության ապահովումը ընթացիկ ծրագրերի ավարտից հետո, ինչպես նաև տրամադրվող ծառայությունների ընդլայնումը, որը կօգնի լրացնել առկա բացերը և կապահովի աջակցություն ամենախոցելի փախստական կանանց ու աղջիկների համար:

ԱՄՓՈՓՈՒՄ

Փախստական կանայք ու աղջիկները Հայաստանում բախվում են տարբեր խնդիրների ու մարտահրավերների: Թեև բոլոր փախստական կանայք գտնվում են գենդերային հիմքով բռնության անհամաչափ բարձր ռիսկի տակ, գնահատումը ցույց է տվել, որ նրանց որոշ խմբեր առանձնապես խոցելի են, ինչպիսիք են հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, դեռահաս աղջիկները, կին գլխավորով տնային տնտեսությունները, գյուղական և հեռավոր վայրերում ապրող կանայք և աղջիկները և այլն: Սոցիալական մեկուսացման, կրթություն կամ աշխատաշուկա մուտք գործելու հետ կապված մարտահրավերները և ոչ համարժեք կենսապայմանները միայն խորացնում են գենդերային հիմքով բռնության ռիսկերը, որոնք էլ վտանգում են փախստական կանանց և աղջիկներին: Մյուս կողմից, այս խմբի վրա ազդող գենդերային հիմքով բռնության տարբեր միտումների հիմքում ընկած են նրանց ծննդավայրերում և տեղահանումից հետո առաջացած փորձառությունները: Դրանք են հակամարտությունների ժամանակ տեղի ունեցած սեռական բռնության դեպքերը, զուգընկերոջ կողմից բռնության (ներառյալ հոգեբանական և ֆիզիկական բռնություն, ծառայություններից, հնարավորություններից և ռեսուրսներից զրկելը և այլն) դեպքերը և ընտանեկան համատեքստում գենդերային հիմքով բռնության այլ ձևերը, հասարակական վայրերում, իսկ երբեմն էլ՝ աշխատավայրում տեղի ունեցող ոտնձգությունները: Չնայած գենդերային հիմքով բռնության տարածվածությանը, թերհաղորդումը մնում է լուրջ մարտահրավեր, որը թույլ չի տալիս վերապրածներին օգտվել անհրաժեշտ ծառայություններից՝ ամոթի, խարանի, գենդերային հիմքով բռնության նորմալացման, բայց նաև տնտեսական կախվածության, մատչելի կամ հասանելի ծառայությունների բացակայության պատճառով՝ ի թիվս այլ պատճառների: Վերջապես, չնայած գենդերային հիմքով բռնության ծառայություններ մատուցողները տրամադրում են ԳՀԲ ծառայությունների նվազագույն փաթեթը, անհրաժեշտ է հետագայում ընդլայնել նրանց տեխնիկական կարողությունները, մատուցվող ծառայությունները և դրանց հասանելիությունը: Այնուամենայնիվ, ֆինանսավորման հիմնական բացերը հնարավորություն չեն տալիս ծառայություններ մատուցողին ծածկել արձանագրված բացերը և ապահովել կենսական նշանակության, գործող գենդերային հիմքով բռնության ծառայությունների շարունակականությունը:

Առաջարկություններ

Արձանագրված մարտահրավերները հաղթահարելու համար, այս գնահատման շրջանակներում մշակվել է առաջարկությունների ցանկ, որը դեռ համալրման կարիք ունի՝ ուղղված մի շարք շահագրգիռ կողմերին՝ հարցվածների կողմից բացահայտված խնդիրներն ու կարիքները լուծելու համար: Նրանցից շատերը երկրորդում են ծառայություններ մատուցողների, ինչպես նաև փախստական կանանց և աղջիկների առաջարկները: Մշակված առաջարկություններն ուղղված են ոչ

միայն գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց և դրա վտանգի տակ գտնվող փախստական կանանց ու աղջիկների կարիքների հրատապ արձագանքմանը, այլ նաև կարևոր են նրանց երկարաժամկետ բարեկեցության ապահովման և ինտեգրման համար, ինչպես նաև ներառում են առաջարկներ, որոնք կօգնեն ընդլայնել գործունեության շրջանակը՝ ներառելով նաև հյուրընկալող համայնքների առավել խոցելի կանանց և աղջիկներին:

Գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողներին՝

1. **Ավելացնել կանանց և աղջիկների համար անվտանգ տարածքների, ներառյալ դրանց շարժական տարբերակների թիվը.**

   Գենդերային հիմքով բռնության կանխարգելման և արձագանքման հիմնական ծառայությունների աշխարհագրական փոքր ծածկույթը, ինչպես նաև հեռավոր և գյուղական վայրերում ապրող փախստական կանանց և աղջիկների համար դրանց հասանելիության բացակայությունը պահանջում է ավելացնել կանանց և աղջիկների համար անվտանգ տարածքների և դրանց տարբեր տեսակների քանակը: Խորհուրդ է տրվում համատեղել կոնկրետ տարածքներում գործող և շարժական ծառայությունները՝ թե՛ պատշաճ հասանելիություն, և թե՛ ճկունություն ապահովելու համար, եթե տեղի ունենա բնակչության երկրորդական կամ երրորդական տեղաշարժ:

2. **Հզորացնել գենդերային հիմքով բռնության դեպքերի վարման համակարգերը և ծառայություն մատուցողների կարողությունները, ընդլայնել գենդերային բռնության ենթարկված անձանց համար նախատեսված ծառայությունները՝ չսահմանափակելով աջակցության տրամադրումը միայն զուգընկերոջ կողմից իրականացված կամ ընտանեկան բռնության տեսակներով.**

   Թեև գենդերային հիմքով բռնության դեպքեր վարող կազմակերպությունների զարգացած ցանց կա և ակտիվորեն արձագանքում է տեղահանված կանանց և աղջիկների կարիքներին, անհրաժեշտ է կարողությունների և համակարգի հետագա զարգացում ևս, որը կլինի համարժեք փախստականների զանգվածային ներհոսքին: Գենդերային հիմքով բռնության տարբեր տեսակներին ուշադրություն դարձնելը՝ ներառյալ ընտանեկան բռնության և զուգընկերոջ կողմից բռնության համատեքստերից դուրս դեպքերին, կարևոր է՝ հատկապես հաշվի առնելով, որ մի շարք փախստական կանայք կարող են ենթարկվել սեռական բռնության հակամարտությունների ժամանակ, և Հայաստանում աստիճանաբար գրանցվում են նման բռնության մասին հաղորդումներ: Բացի այդ, Հայաստանի ներսում փախստական բնակչության բնակության վայրի հաճախակի փոփոխության պատճառով անհրաժեշտ է

համակարգված մոտեցում ցուցաբերել գենդերային հիմքով բռնության դեպքերն, որպեսզի ապահովվի դրանց անվտանգ և էթիկապես ճիշտ փոխանցելու հարցերը՝ ներառյալ գենդերային հիմքով բռնության կանխարգելման և արձագանքման ծառայությունները՝ մարզից մարզ ուղղորդման դեպքում:

3. **Ապահովել դեռահաս աղջիկների համար պատշաճ ծառայություններ՝ հաշվի առնելով տարիքային և գենդերային առանձնահատկությունները.**

Մարզերում արձանագրվեց կարևոր բացթողում հատուկ դեռահաս աղջիկների համար նախատեսված ծառայությունների վերաբերյալ, ինչը հանգեցրեց նրանց խոցելիության ավելացմանը և սոցիալական մեկուսացման, և անհրաժեշտության դեպքում գենդերային հիմքով բռնության ծառայություններից օգտվելու առումով: Կանանց և աղջիկների համար գործող անվտանգ տարածքներում աղջիկներին ապահով տարածքներ տրամադրելը, միայն դեռահաս աղջիկների համար խմբային ՀՄԱ ծառայությունների տրամադրումը և գենդերային հիմքով բռնության դեպքերի վարումը, հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները ու ուղղորդումները պետք է առաջնահերթ լինեն ԳՀԲ ծառայություններ մատուցողների և այլ շահագրգիռ կողմերի համար, որոնք աշխատում են թիրախային այս խմբի հետ: Բացի այդ, գենդերային հիմքով բռնության դեպքերին արձագանքողները պետք է նաև քայլեր ձեռնարկեն դեռահաս աղջիկների ծնողների և խնամակալների հետ աշխատանքներ տանելու ուղղությամբ՝ նրանց զգայունությունն աղջիկների հատուկ կարիքների վերաբերյալ բարձրացնելու համար, ինչպես նաև նրանց վստահությունն ու հավանությունը ձեռքբերելու նպատակով, որպեսզի աղջիկների մասնակցությունն առաջարկվող գործողություններին առավել դյուրին լինի: Խորհուրդ է տրվում կիրառել համապատասխան սեռային և տարիքային առանձնահատկությունները հաշվի առնող մոնիթորինգի գործիքներ՝ դեռահաս աղջիկների հաճախելիությունը չափելու համար:

4. **Ապահովել, որպեսզի գենդերային բռնության ենթարկված անձանց մատուցվող ծառայությունները և համապատասխան հաստատությունները լինեն մատչելի ու հասանելի հաշմանդամություն ունեցող անձանց համար.**

Գնահատման արդյունքների համաձայն՝ հաշմանդամություն ունեցող կանայք և աղջիկները, գտնվելով առանձնահատուկ խոցելիության գոտում, միևնույն ժամանակ, բախվում են այն խնդրին, որ չեն կարողանում լիարժեք կերպով օգտվել գենդերային բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայություններից: ԳՀԲ ծառայություններ մատուցող կազմակերպությունները պետք է ապահովեն իրենց հաստատությունների ֆիզիկական հասանելիությունը, հարմարեցված հաղորդակցության և բռնության մասին հաղորդում տալու միջոցները, ինչպես նաև բարելավեն մատուցվող ծառայությունները՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց հատուկ կարիքները:

Ավելին, պետք է առաջնահերթություն դիտարկվի նաև հաշմանդամություն ունեցող անձանց խնամողներին՝ հիմնականում կանանց համար ծառայությունների մատչելիությունը: Այս անձինք նույնպես խիստ խոցելի են: Կառույցները պետք է իրականացնեն նաև հետևյալ քայլերը, որոնց արդյունքում կապահովվի համալիր մոտեցում այս խնդիրն՝ հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների ներառումը աշխատանքների գնահատման ու ծրագրի մշակման փուլերում, հնարավորության դեպքում նաև փորձագետների աշխատանքի ապահովումը հաշմանդամություն ունեցող անձանց հետ, գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի առաջնագծում գտնվող ողջ անձնակազմի կարողությունների զարգացումը և հաշմանդամություն ունեցող կանանց ու աղջիկների շահերից բխող ծրագրային նպատակների ուղենշումը:

5. **Իրականացնել տնտեսական իրավազորման ծրագրեր և տրամադրել ֆինանսական աջակցություն գենդերային բռնության ենթարկված անձանց և այն կանանց ու աղջիկներին, որոնք գտնվում են գենդերային բռնության ռիսկի ներքո.**

Քանի որ փախստական կանանց շրջանում եկամուտի բացակայությունը և՛ մեծացնում է նրանց գենդերային հիմքով բռնության ենթարկվելու ռիսկը, և՛ թույլ չի տալիս նրանց հեռանալ բռնարար միջավայրից, նրանց տնտեսական հզորացումը պետք է լինի գենդերային հիմքով բռնության ծառայություններ մատուցողների կողմից իրականացվող առաջնային միջամտություններից մեկը: Մեծապես խրախուսվում են փախստականներով բնակեցված բոլոր բնակավայրերում կարողությունների զարգացման հավաստագրվող միջոցառումների իրականացումը, վերապատրաստումների հնարավորությունները, միկրո վարկերը և ոչ նյութական աջակցությունը և այլ գործողություններ: Հնարավորության դեպքում պետք է տրամադրել դրամական և պարտատոմսային աջակցության՝ գենդերային հիմքով բռնության հանդեպ խոցելի և այն վերապրած կանանց ու աղջիկներին:

6. **Ընդլայնել գենդերային հիմքով բռնության իրազեկման և տեղեկատվական միջոցառումները.**

Փախստական բնակչության՝ վերջերս գրանցված հոսքի և նրա բարձր շարժունակության հետևանքով գենդերային հիմքով բռնության հասանելի ծառայությունների մասին տեղեկատվության տարածումը եղել է անբավարար, և դրա արդյունքում գենդերային հիմքով բռնության դեպքերը ոչ ամբողջ ծավալով հաղորդված: Անհրաժեշտ է նախաձեռնել գենդերային հիմքով բռնության գործող ծառայությունների վերաբերյալ իրազեկության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, որպեսզի կանայք և աղջիկները օգտվեն գենդերային հիմքով բռնությանն արձագանքման և կանխարգելման հնարավորություններից: Մեծապես խորհուրդ է տրվում օգտագործել տարբեր մեխանիզմներ տուժած բնակչության հետ կապ հաստատելու համար՝ տունայցեր, խմբային հանդիպումներ, տեղեկատվական, կրթական և իրազեկող

(ՏԿՀ) նյութերի տարածում, առցանց մեդիա հարթակները կամ համայնքի բնակիչների աջակցությունը՝ ապահովելու ծառայությունների մասին տեղեկատվության տարածումը: Մեծապես խորհուրդ է տրվում ներգրավել տարբեր խոցելի խմբերի ներկայացուցիչներին կանխարգելիչ աշխատանքների և նյութերի մշակման մեջ՝ ապահովելու դրանց զգայունությունը տարիքի, սեռի և հաշմանդամության առումով:

7. **Ապահովել ոչ մասնագիտացված, խմբային հոգեսոցիալական աջակցության միջոցառումների (ֆորմալ ու ոչ ֆորմալ) պարբերական իրականացում՝ դրանք դիտարկելով որպես գենդերային բռնության մասին հաղորդում ներկայացնելու կարևորագույն հնարավորություն.**

Խմբային ՀՍԱ գործողությունները կենսական նշանակություն ունեն տուժած կանանց և աղջիկների հետ հարաբերություններ հաստատելու համար՝ ծառայելով որպես հիմնական սկզբնակետեր՝ վերապրածներին գենդերային հիմքով բռնության անհրաժեշտ ծառայությունների մասին տեղեկատվությունը փոխանցելու համար: Փախստականների շրջանում գենդերային բռնության դեպքերի մասին հաղորդումների ներկայացման ծավալները բարելավելու համար խորհուրդ է տրվում ծառայություններ մատուցող կազմակերպություններին նախաձեռնել կանոնավոր խմբային ՀՍԱ գործողություններ՝ ինչպես մշակութային տարբեր պարունակող (արվեստ և արհեստ, ժամանց և այլն), այնպես էլ ինստիտուցիոնալ (դասընթացներ, վերապատրաստումներ): Նման գործողությունները զգալի դեր ունեն կանանց և աղջիկների աջակցության ցանցերի զարգացման գործում: Նախաձեռնություններին մասնակից անձանց կարողությունները լիարժեք օգտագործելու և նրանց հարմարավետությունն ապահովելու համար կարևոր է նախաձեռնել միջոցառումներ միայն իգական սեռի համար, նաև առանձնացնել ըստ տարիքի միջոցառումներ (առանձին խմբեր չափահաս կանանց և դեռահաս աղջիկների համար):

8. **Իրականացնել վարքագծային փոփոխություններ բերող ծրագրեր և համայնքային նախաձեռնություններ, որոնք ուղղված են գենդերային հիմքով բռնության հաղթահարմանը.**

Գնահատման մասնակիցների կարծիքով գենդերային անհավասարության հիմքում ընկած է պատրիարխալ մշակույթը՝ որպես գենդերային հիմքով բռնության հիմնական պատճառ և կանանց ու աղջիկների՝ բռնության մասին հաղորդում տալու և աջակցություն հայցելու հիմնական արգելք: Գենդերային հիմքով բռնության վնասաբեր վարքագծի և վերաբերմունքի դեմ պայքարելու համար գենդերային հիմքով բռնության ծառայություններ մատուցողները անհրաժեշտ է, որ իրականացնեն վարքագծի փոփոխության ծրագրեր՝ ուղղված գենդերային անհավասարության հաղթահարմանը և բռնության նորմալացման մշակույթի վերացմանը՝ միաժամանակ խթանելով կանանց իրավունքները համախոհների ներգրավման միջոցով: Նման նախաձեռնություններում անհրաժեշտ է ներգրավել տղամարդկանց ու տղաներին, որպես գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի համախոհներ, ինչպես նաև նախապատվություն

տալ համայնքներում իրականացվող միջոցառումներին:

9. **Աջակցել ու համակարգել փախստական աղջիկների և կանանց սոցիալական ինտեգրմանն ուղղված աշխատանքները.**

Փախստական բազմաթիվ կանայք և աղջիկներ բարձրաձայնել են սոցիալական մեկուսացման զգացման, ինչպես նաև փախստականների և հյուրընկալող համայնքների միջև հնարավոր լարվածության առաջացման մասին, ինչը կարող է նաև մեծացնել գենդերային հիմքով բռնության ռիսկը: Այս խնդիրը լուծելու համար գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցողներն անհրաժեշտ է, որ իրականացնեն միջոցառումներ՝ աջակցելու փախստական կանանց ու աղջիկների ինտեգրմանը և ընդհանուր սոցիալական համախմբմանը: Այս ուղղությամբ առաջարկվող միջամտություններից են՝ թիրախային քարոզարշավները, մշակութային և ներառական միջոցառումները, հյուրընկալող բնակչության շրջանում իրազեկվածության բարձրացումը, ինչպես նաև հյուրընկալող համայնքից խոցելի կանանց և աղջիկների ներառումը փախստականների արձագանքման ծրագրում:

10. **Համակարգել ինչպես ԳՀԲ, այնպես էլ ոչ այդ ոլորտում գործունեություն ծավալող կառույցների կողմից իրականացվող աշխատանքը, որպեսզի գենդերային բռնության ենթարկված անձանց և ԳՀԲ վտանգի տակ գտնվող կանանց ու աղջիկներին տրամադրվի համապարփակ աջակցություն.**

Ծառայությունների և ծառայությունների մատուցման աշխարհագրական ծածկույթի հայտնաբերված բացերը հասցեագրելու, ծառայությունների կրկնօրինակումից խուսափելու և ռեսուրսների պատշաճ հավաքագրում ապահովելու համար շատ կարևոր է, որ գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպություններն օգտագործեն հասանելի գործիքներն ու հարթակները՝ իրենց ԳՀԲ ծրագրերը համակարգելու համար: Ավելին, ԳՀԲ ոլորտից դուրս փախստականների համար ծառայություններ մատուցողների հետ գործողությունների կանոնավոր համակարգումը կարևոր է գենդերային բռնության ենթարկված անձանց և դրա վտանգի տակ գտնվող կանանց ու աղջիկներին համակողմանի աջակցություն ապահովելու համար: Ուղղորդման գործող մեխանիզմների ստեղծումը և դրանց անվտանգ իրականացումը կարևոր նշանակություն ունեն բոլոր այն շահագրգիռ կողմերի համար, որոնք ներգրավված են փախստական անձանց կարիքներին արձագանքմանն ուղղված գործողություններում:

ԳՀԲ ոլորտից դուրս փախստականների համար ծառայություններ մատուցողներին՝

1. **Իրականացնել Գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի և սեռական շահագործման ու չարաշահման բոլոր ձևերը կանխարգելող մեխանիզմների ուղղորդում առկա ծրագրերում և անձնակազմի կարողությունների զարգացման նախաձեռնություններում.**

   Գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի և սեռական շահագործման ու չարաշահման բոլոր ձևերը կանխարգելող մեխանիզմների ուղղորդման իրականացումը կարևոր է սկսած ՋՍՊ գործողություններից, որոնք կարող են մեղմել գենդերային հիմքով բռնությունը՝ ապահովելով անվտանգ և պատշաճ հարմարություններ, մինչև երեխաների պաշտպանության ծրագրերը, որոնք կարող են հետագայում առաջարկել ծառայությունները՝ կանխարգելելու և արձագանքելու դեռահաս աղջիկների դեմ ուղղված գենդերային հիմքով բռնությանը, նաև ապաստան և ՈՊԱ տրամադրող նախաձեռնություններ, որոնք կարող են աջակցել կացարանային պատշաճ լուծումների տրամադրմանը և ապահովել անվտանգ բաշխում: Այս գործողությունները կարևոր նշանակություն կունենան փախստական կանանց և աղջիկների անվտանգության և բարեկեցության ապահովման համար: Պետք է նախաձեռնել նաև անձնակազմի կարողությունների զարգացման գործողություններ, որպեսզի պատշաճ իրականացվի բռնության վերաբերյալ հաղորդումների անվտանգ ընդունման և գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց՝ կենսական նշանակության ծառայություններին ուղղորդելու գործընթացները: Սեռական շահագործումը և չարաշահումը կանխարգելող գործողությունները պետք է այս գործընթացի մի մասը հանդիսանան:

2. **Ապահովել զգայուն ու հասանելի ծառայություններ՝ հաշվի առնելով սեռով, տարիքով ու հաշմանդամությամբ պայմանավորված առանձնահատկությունները:**

   Ինչպես ցույց է տալիս գնահատումը, կին փախստականները, և նրանց թվում հատկապես դեռահաս աղջիկներն ու հաշմանդամություն ունեցող կանայք ու աղջիկները, բախվում են զգալի մարտահրավերների, երբ ցանկանում են օգտվել ծառայություններից և առկա ռեսուրսներից: Բոլոր ծառայություններ մատուցողները պետք է աջակցեն այս խոցելի խմբերին՝ օգտվելու իրենց ծառայություններից՝ հաշվի առնելով սեռով, տարիքով ու հաշմանդամությամբ պայմանավորված առանձնահատկություններն և կարիքները: Նման մոտեցումները պետք է հաշվի առնել ծրագրի նախագծման, իրականացման, անձնակազմի համալրման և այլն փուլերի ժամանակ՝ միաժամանակ ապահովելով, որ ծրագրի հաշվետվությունները, գնահատումները կամ հավաքագրված այլ տվյալները տարանջատված են՝ ըստ

սեռի, տարիքի ու հաշմանդամության ցուցիչներով:

3. **Աջակցել աղջիկների կրթության հասանելիությանը և բարձրացնել դպրոցի անձնակազմի իրազեկվածությունը գենդերային բռնության ռիսկերի և ուղղորդման կարգի վերաբերյալ:**

Որոշ փախստական աղջիկներ չեն հաճախում դպրոց, իսկ դպրոց հաճախողները հաճախ բարձրաձայնում են խնդիրների մասին: Ոլորտի պատասխանատուները պետք է ապահովեն դպրոցի (օրինակ, տրանսպորտ, դիպլոմների ճանաչում և այլն), ուսուցման և ինտեգրման հասանելիությունը՝ միևնույն ժամանակ իրազեկելով դպրոցի անձնակազմին՝ փախստական աղջիկների հատուկ կարիքների, գենդերային հիմքով բռնության ռիսկերի և անվտանգ ուղղորդումների մասին:

4. **Աջակցել կանանց և աղջիկների կենսական միջոցների և ֆինանսական կայունության ապահովմանը:**

Փախստական անձանց կարիքների արձագանքմանն ուղղված ծրագրեր իրականացնող բոլոր շահագրգիռ կողմերին խորհուրդ է տրվում աջակցելու կանանց և աղջիկներին՝ օգտվելու գոյություն ունեցող կենսապահովման ծրագրերից և դրամական ու պարտատոմսային օգնությունից՝ դրանով իսկ օգնելով նրանց հաղթահարելու տնտեսական մարտահրավերները և դրանց հետևանքով առաջացող գենդերային հիմքով բռնության ռիսկերը: Հարկ է նաև մշակել համապատասխան ցուցիչներ՝ նրանց մասնակցությունը մշտադիտարկելու համար:

5. **Ապահովել, որպեսզի ամենախոցելի խմբերին, օրինակ, կին գլխավորով տնային տնտեսություններին տրամադրվի ոչ ֆինանսական աջակցություն, և օգտագործել ոչ պարենային ապրանքների բաշխումը, նաև որպես միջոց՝ գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայությունների մասին տեղեկատվություն տարածելու համար:**

6. Հաշվի առնելով Հայաստանում փախստական կին գլխավորով տնային տնտեսություններին առնչվող առանձնահատուկ տնտեսական մարտահրավերները՝ ներառյալ կացարանի, սնունդի, վառելիքի, սանիտարական պայմանների և այլնի հետ կապված նրանց հիմնական կարիքները՝ ոչ պարենային ապրանքների բաշխմամբ զբաղվող շահագրգիռ կողմերը պետք է նրանց ընդգրկեն առավել խոցելի խմբերի շարքում, որոնք պետք է առաջնահերթություն ստանան նման աջակցության կամ ծրագրերի պարագայում: Շահագրգիռ կողմերը նաև պետք է համագործակցեն փախստական անձանց աջակցող աշխատանքների համակարգմամբ զբաղվող հասանելի հարթակների (օրինակ՝ Գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի, Երեխաների պաշտպանության աշխատանքային խմբերը և/կամ ընդհանուր պաշտպանության ոլորտը), ինչպես նաև համայնքների հետ՝ բացահայտելու կանանց ու աղջիկների այլ

խոցելի խմբեր, որոնց կարիքները պետք է հասցեագրվեն: **Օգտագործել ոչ պարենային ապրանքների բաշխումը, նաև որպես միջոց՝ գենդերային բռնության ենթարկված անձանց ծառայությունների մասին տեղեկատվություն տարածելու համար:** Ծառայություններ մատուցող կազմակերպություններին խրախուսվում է համագործակցել գենդերային հիմքով բռնության ենթարկված անձանց աջակցություն տրամադրող մասնագետների կամ ԳՀԲ աշխատանքային խմբի հետ՝ համապատասխան տեղեկատվական և իրազեկող նյութեր և ձևաթերթիկներ ձեռք բերելու համար:

Դրամաշնորհատու կազմակերպություններին՝

1. **Փախստականների կարիքների արձագանքմանն ուղղված միջոցառումների շրջանակներում միջոցներ հատկացնել գենդերային հիմքով բռնության այնպիսի ծրագրերի համար, որոնք տրամադրում են գենդերային բռնության ենթարկված անձանց կյանք փրկող ծառայություններ.**

   Աջակցել գենդերային հիմքով բռնության ծրագրերի շարունակականությանը և ընդլայնմանը, ներառյալ կանանց և աղջիկների անվտանգ տարածքներում (ինչպես ստատիկ, այնպես էլ շարժական եղանակներ) գենդերային հիմքով բռնության կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված կյանքեր փրկող ծառայությունների տրամադրելուն՝ ապահովելու փախստական կանանց և աղջիկների անվտանգությունն ու բարեկեցությունը:

2. **Աջակցել երկարաժամկետ այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք ուղղված են վարքագծի փոփոխությանը և գենդերային փոխակերպմանը.**

   Աջակցել գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք բերում են վարքագծի փոփոխություն, ստեղծել համախոհների համայնք՝ ներառելով նաև տղամարդկանց և տղաներին:

3. **Ֆինանսավորել փախստական կանանց և աղջիկների սոցիալական և տնտեսական ինտեգրմանն ուղղված երկարաժամկետ ծրագրեր:**

   Ներդրումներ կատարել՝ Հայաստանի քաղաքական, սոցիալական և տնտեսական կյանքում սոցիալական համախմբվածությունը խթանող ծրագրերում՝ խրախուսելով խոցելի կանանց և աղջիկների մասնակցությունը, ներառելով նաև փախստականների:

4. **Առաջնահերթություն տալ այն ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք ներառում են գենդերային հիմքով բռնության հաղթահարման և սեռական շահագործման ու չարաշահման կանխարգելման**

(ՍՇՉԿ) մեխանիզմներ:

Ներառել դրամաշնորհային պարտադիր չափորոշիչներ, որոնք կպարունակեն պահանջներ՝ գենդերային հիմքով բռնության դեմ պայքարի մեխանիզմների ուղղորդում՝ համապատասխան հիմնական միջազգային ուղենիշներին[35], ինչպես նաև ՍՇՉԿ քաղաքականության և հաշվետվողականության մեխանիզմների առկայության վերաբերյալ:

5. **Առաջնահերթություն տալ այն ծրագրերի ֆինանսավորմանը, որոնք հաշվի են առնում գենդերային, տարիքային և հաշմանդամության առանձնահատկությունները:**

Դրամաշնորհներում ներառել սեռի, տարիքի և հաշմանդամության հատկանիշով պարտադիր չափորոշիչներ, որոնք կարտացոլվեն ծրագրի մշակման, իրականացման, մշտադիտարկման աշխատանքներում՝ օրինակ, առկա ԳՏՀ (ինքնա)գնահատման գործիքներն օգտագործելու միջոցով[36]:

[35] Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, հասանելի՝ https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf

[36] Տե՛ս, օրինակ, the IASC Gender with Age Marker aiming to help users to design and implement inclusive programs that respond to gender, age, and disability-related differences, հասանելի՝ https://www.iascgenderwithagemarker.com/en/home

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Եզրաբանական բառարան

Արցախ – Ղարաբաղի տարածաշրջանի հայերեն անվանումը (Տե՛ս՝ «Ղարաբաղի տարածաշրջան»):

Բռնաբարություն՝ ֆիզիկական ուժով կամ այլ կերպ հարկադրված ներթափանցում՝ թեկուզ աննշան, դեպի հեշտոց, հետանցք կամ բերան առնանդամի կամ մարմնի այլ մասի միջոցով: Այն ներառում է նաև որևէ առարկայի միջոցով հեշտոց կամ հետանցք ներթափանցումը: Բռնաբարության մեջ մտնում է ամուսնական բռնաբարություն և անալ բռնաբարություն/սոդոմիա: Դրան ուղղված փորձը կոչվում է բռնաբարության փորձ:

Գաղտնիություն՝ գենդերային հիմքով բռնության ուղենիշային սկզբունք՝ կապված վերապրածակենտրոն ծառայությունների մատուցման հետ: Գաղտնիության պահպանումը պահանջում է, որ ծառայություններ մատուցողները պաշտպանեն այցելուների մասին հավաքագրված տեղեկատվությունը և համաձայնեն տրամադրել այցելուի գործի վերաբերյալ տեղեկատվությունը միայն նրանց աներկբա համաձայնությամբ: Ամբողջ գրավոր տեղեկատվությունը պահվում է կողպված ֆայլերում, և գործի նյութերում ներառվում է միայն ոչ նույնականացնող տեղեկատվությունը: Չարաշահումների վերաբերյալ գաղտնիության պահպանումը նշանակում է, որ ծառայություններ մատուցողները երբեք չեն քննարկում գործի մանրամասները ընտանիքի կամ ընկերների հետ կամ էլ այն գործընկերների հետ, որոնց իրազեկվածությունը չարաշահման մասին պարտադիր չէ: Գաղտնիության սահմանափակումներ են գործում երեխաների հետ աշխատելիս, պարտադիր հաղորդման համատեքստում, մարդասիրական կազմակերպությունների աշխատողների կողմից իրականացված սեռական շահագործման և չարաշահումների դեպքում կամ իրենց կամ մեկ ուրիշին վնասելու մտադրություն հայտնած այցելուների հետ:

Գենդերային հավասարություն՝ Եզրույթը վերաբերում է կանանց և տղամարդկանց, աղջիկների և տղաների հավասար իրավունքներին, պարտականություններին և հնարավորություններին: Հավասարությունը չի նշանակում, որ կանայք և տղամարդիկ կդառնան նույնը, բայց որ կանանց և տղամարդկանց իրավունքները, պարտականությունները և հնարավորությունները կախված չեն լինի այն փաստից, թե արդյոք նրանք տղամարդ են ծնվել, թե՝ կին: Գենդերային հավասարությունը ենթադրում է, որ հաշվի են առնվում ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց շահերը, կարիքները և առաջնահերթությունները՝ հաշվի առնելով կանանց և տղամարդկանց տարբեր խմբերի բազմազանությունը: Գենդերային հավասարությունը կանանց խնդիր չէ, այլ պետք է մտահոգի և ամբողջությամբ ներգրավի ինչպես տղամարդկանց, այնպես էլ կանանց:

Կանանց և տղամարդկանց միջև հավասարությունը դիտվում է և՛ որպես մարդու իրավունքների խնդիր, և՛ որպես կայուն մարդակենտրոն զարգացման նախապայման և ցուցիչ:

Գենդերային դերեր՝ Սոցիալական և վարքային ակնկալիքների կամ համոզմունքների մի շարք այն մասին, թե տվյալ մշակույթի անդամներն ինչպիսի վարք պետք է դրսևորեն՝ ելնելով իրենց կենսաբանական սեռից՝ տղամարդկանց, կանանց և այլ սեռերի հստակ դերերն ու պարտականությունները տվյալ մշակույթում: Գենդերային դերերը տարատեսակ են տարբեր հասարակությունների և մշակույթների, դասերի, տարիքի և պատմության տարբեր ժամանակաշրջանների համատեքստերում: Գենդերային դերերն ու պարտականությունները հաճախ պայմանավորված են տնային տնտեսությունների կառուցվածքով, ռեսուրսների հասանելիությամբ, համաշխարհային տնտեսության հատուկ ազդեցություններով և տեղական համապատասխան այլ գործոններով, ինչպիսիք են բնապահպանական պայմանները:

Գենդերային հիմքով բռնություն (ԳՀԲ)՝ հովանոց եզրույթ է, որը բնորոշում է ցանկացած վնասաբեր արարք, որն իրականացվում է անձի կամքին հակառակ և որը հիմնված է տղամարդկանց և կանանց միջև սոցիալապես վերագրվող (այսինքն՝ գենդերային) տարբերությունների վրա: «Գենդերային բռնություն» տերմինը հիմնականում օգտագործվում է՝ ընդգծելու այն փաստը, որ ամբողջ աշխարհում տղամարդկանց և կանանց միջև գենդերային իշխանության կառուցվածքային տարբերությունները կանանց կանգնեցնում են բռնության բազմաթիվ ձևերի վտանգի առջև: Ինչպես նշվում է Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագրում (1993 թ.), սա ներառում է ֆիզիկական, մտավոր կամ սեռական վնաս կամ տառապանք պատճառող գործողություններ, նման գործողությունների սպառնալիքներ, հարկադրանք և ազատությունից զրկելու այլ ձևեր՝ լինի դա հանրային կամ անձնական կյանքում: Տերմինը նաև օգտագործվում է որոշ դերակատարների կողմից տղամարդկանց նկատմամբ սեռական բռնության որոշ ձևեր և/կամ տարբեր սեռականություն ունեցող անհատների կամ խմբերի նկատմամբ նպատակաուղղված բռնություն նկարագրելու համար. այս դեպքերում հղում է արվում առնականության գենդերային անհավասար նորմերին և/կամ գենդերային ինքնության նորմերին առնչվող բռնությանը:

Էմոցիոնալ կամ հոգեբանական բռնություն՝ հոգեկան կամ հուզական ցավի կամ տառապանքի պատճառում: Օրինակներից են ֆիզիկական կամ սեռական բռնության սպառնալիքները, ահաբեկումը, նվաստացումը, հարկադիր մեկուսացումը, սոցիալական մեկուսացումը, հետապնդումը, վերբալ ոտնձգությունը, անցանկալի ուշադրությունը, դիտողությունները, սեռական և/կամ սպառնալից բնույթի ժեստերը կամ գրավոր խոսքը, նվիրական իրերի ոչնչացումը և այլն:

Ընտանեկան բռնություն (ԸԲ)՝ ընտանեկան բռնությունը վերաբերում է ընտանիքում կատարվող գենդերային հիմքով բռնությանը և կարող է ներառել բռնություն ընտանիքի ոչ փոխկապակցված անդամների միջև:

Ընտանիքում բռնություն՝ ընտանիքում բռնության հասկացությունը դիտարկում է ընտանեկան հարաբերությունները բռնություն գործադրողների և վերապրածների միջև, նույնիսկ երբ նրանք միասին չեն բնակվում:

Ինտերսեկցիոնալություն՝ եզրույթ, որն օգտագործվում է նկարագրելու այն պատկերացումը, որ սոցիալական հարաբերություններում կարող են ներառվել խտրականության մի քանի հատվող ձևեր: Գենդերային հավասարության նկատմամբ ինտերսեկցիոնալ մոտեցումը հենվում է այն փաստի վրա, որ կանայք և աղջիկները կարող են միաժամանակ ենթարկվել խտրականության մի քանի դրսևորումների՝ հիմնված իրենց ինքնության տարբեր կողմերի վրա՝ ներառյալ ռասան, սոցիալական դասակարգը, էթնիկ պատկանելությունը, սեռական կողմնորոշումը, կրոնը, տարիքը, ինչպես նաև ինքնության այլ ձևեր:

Զուգընկերոջ կողմից բռնություն (ԶԲ)՝ գենդերային հիմքով բռնության տեսակ, որը արմատավորված է գենդերային անհավասարության և զուգընկերների միջև ուժի և իշխանության անհավասարակշռության մեջ: Այն նկարագրում է ներկա զուգընկերոջ կամ նախկին զուգընկերոջ վարքագծի տեսակ, որը պատճառում է ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս՝ ներառյալ ֆիզիկական ագրեսիան, սեռական հարկադրանքը, հոգեբանական բռնությունը և վերահսկող վարքագիծը: Բռնության այս տեսակը կարող է ներառել նաև ռեսուրսների, հնարավորությունների կամ ծառայությունների մերժումը: Այս չարաշահումը սովորաբար դրսևորվում է որպես զուգընկերոջ (նախկին կամ ներկա) նկատմամբ բռնարար վարքագծի օրինակ, որտեղ բռնարարը իշխանություն և վերահսկողություն է գործադրում զոհի վրա: ԶԲ-ն նկարագրելիս՝ երբեմն օգտագործվում է «Ընտանեկան բռնություն» եզրույթը, թեև երկու տերմինների միջև կան կարևոր տարբերություններ: Տես «Ընտանիքում բռնություն» և «Ընտանեկան բռնություն (ԸԲ)»:

Լաչինի միջանցքի շրջափակում՝ հաճախ կոչվելով պարզապես «Շրջափակում»՝ եզրույթը նկարագրում է Լաչինի միջանցքի՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին և արտաքին աշխարհին կապող մարդասիրական միջանցքի շրջափակումը: Շրջափակումը տևեց ինը ամիս (2022թ. դեկտեմբեր – 2023թ. սեպտեմբեր)՝ արգելելով առաջին անհրաժեշտության ապրանքների ներմուծումը (էլեկտրաէներգիա, վառելիք, ջուր, դեղամիջոցներ և այլն) և մարդասիրական շարասյունների մուտքը: Սա հանգեցրեց հումանիտար ճգնաժամի, որից տուժեցին Լեռնային Ղարաբաղի 120 հազար բնակիչները:

Լեռնային Ղարաբաղ՝ Ղարաբաղի տարածաշրջանի անվանումը մինչև 2023 թվականի էսկալացիան (տես «Ղարաբաղի տարածաշրջան»):

Կանանց և աղջիկների համար ապահով տարածքներ (ԿԱԱՏ)՝ որոշակի կառուցվածք ունեցող վայր, որտեղ հարգվում է կանանց և աղջիկների ֆիզիկական և էմոցիոնալ անվտանգությունը, և որտեղ կանայք և

աղջիկները աջակցություն են ստանում իրենց զորեղացնող գործողությունների միջոցով՝ փնտրելու, կիսվելու և ստանալու տեղեկատվություն, օգտվելու ծառայություններից, ինքնարտահայտվելու, իրենց հոգեսոցիալական բարեկեցությունը բարելավելու և իրենց իրավունքներն ավելի լիարժեք իրացնելու համար:

Կին գլխավորով տնային տնտեսություններ՝ ընտանիք, որտեղ չափահաս կինն է միակ կամ հիմնական որոշում կայացնողը, որը պատասխանատու է ընտանիքի ֆինանսական ապահովման և բարեկեցության համար: Կին գլխավորով տնային տնտեսություններն այն ընտանիքներն են, որտեղ կամ չկա չափահաս տղամարդ՝ ամուսնալուծության, բաժանության, արտագաղթի, ոչ ամուսնական հարաբերությունների կամ այրիության պատճառով, կամ երբ տղամարդիկ, թեև ներկա են, բայց չեն մասնակցում ընտանիքի եկամտի ստեղծմանը՝ հիվանդության կամ հաշմանդամության, ծերության, ալկոհոլիզմի կամ անաշխատունակության նմանօրինակ ձևերի արդյունքում (բայց ոչ գործազրկության պատճառով):

Համաձայնություն (տեղեկացված)՝ վերաբերում է հաստատմանը կամ համաձայնությանը, որը տրամադրվում է մասնավորապես և հատկապես բազմակողմանի քննարկումից հետո: Ազատ և տեղեկացված համաձայնությունը տրվում է՝ հիմնվելով գործողությանն առնչվող փաստերի, հետևանքների, օգուտների, ռիսկերի և ապագա հետևանքների հստակ գնահատման և ըմբռնման վրա: Տեղեկացված համաձայնություն տալու համար շահագրգիռ անձը պետք է համաձայնությունը ստանալու պահին տիրապետի բոլոր համապատասխան փաստերին և կարողանա գնահատել և հասկանալ գործողության հետևանքները: Անձը նաև պետք է տեղյակ լինի և իրավունք ունենա իրացնելու իր իրավունքը՝ հրաժարվելու որևէ գործողության մեջ ներգրավվելուց և/կամ դրան հարկադրվելուց (այսինքն՝ ստիպողաբար համոզվելու՝ ուժի կամ սպառնալիքների հիման վրա): Սովորաբար համարվում է, որ երեխաներն ի վիճակի չեն տեղեկացված համաձայնություն տրամադրել, քանի որ նրանք չունեն գործողությունների հետևանքները կանխատեսելու ունակություն և/կամ փորձ, և նրանք կարող են չհասկանալ կամ լիազորված չլինեն օգտվելու՝ մերժելու իրենց իրավունքից: Կան նաև դեպքեր, երբ համաձայնությունը կարող է հնարավոր չլինել մտավոր/հոգեկան խանգարումների և/կամ ֆիզիկական, զգայական կամ մտավոր հաշմանդամության պատճառով:

Հաշմանդամություն՝ հաշմանդամություն ունեցող անձանց թվում են նրանք, որոնք ունեն ֆիզիկական, հոգեկան, մտավոր կամ զգայական երկարատև խնդիրներ, որոնք տարբեր խոչընդոտների հետ փոխազդեցության դեպքում կարող են խոչընդոտել նրանց լիարժեք և արդյունավետ, այլոց հետ հավասար մասնակցությանը հասարակության մեջ:

Հոգեսոցիալական աջակցության ծառայություններ՝ ցանկացած տեսակի ներքին կամ արտաքին աջակցություն, որը նպատակ ունի պաշտպանել կամ խթանել հոգեսոցիալական բարեկեցությունը և/կամ կանխարգելել կամ բուժել հոգեկան խանգարումը և/կամ օգնել բուժել հոգեբանական տրավման արտակարգ

իրավիճակներից կամ ճգնաժամային իրադարձություններից հետո: Կարող են լինել հատուկ մասնագիտացված հոգեսոցիալական աջակցության ծառայություններ գենդերային հիմքով բռնություն վերապրածների համար, ինչպես օրինակ՝ կենտրոնացված անհատական խորհրդատվությունը կամ խմբային խորհրդատվությունը, որն ուղղված է գենդերային հիմքով բռնության հուզական, հոգեբանական և սոցիալական վնասաբեր հետևանքների լուծմանը:

Ղարաբաղի տարածաշրջան՝ աշխարհագրական տարածաշրջան, որը տարածվում է Փոքր Կովկասի լեռնաշխարհից մինչև Կուր և Արաքս գետերի միջև ընկած ցածրադիր գոտիները, պատմականորեն վիճելի տարածք Հայաստանի և Ադրբեջանի միջև: Տասնամյակներ տևած հակամարտությունը գագաթնակետին հասավ 2023 թվականի սեպտեմբերին, երբ ավելի քան 100,000 էթնիկ հայեր տեղահանվեցին Ղարաբաղից Հայաստան:

Մարզ՝ Հայաստանում (գավառ կամ շրջան) առաջին աստիճանի վարչատարածքային միավորը նկարագրող եզրույթ: Հայաստանը բաղկացած է տասը մարզից (Շիրակ, Լոռի, Տավուշ, Արագածոտն, Կոտայք, Գեղարքունիք, Արմավիր, Արարատ, Վայոց ձոր և Սյունիք) և Երևանից, որն ունի երկրի մայրաքաղաքի վարչական կարգավիճակ:

Որդու նախապատվություն՝ արժեքների և վերաբերմունքների միջակայք, որն արական սեռի երեխայի կարգավիճակը բարձր է դասում իգական երեխայից: Այսպիսով, իգական սեռի երեխան հայտնվում է անբարենպաստ պայմաններում ծնողական խնամքի որակի և ծավալի և իր զարգացման մեջ արվող ներդրումների առումներով: Դա կարող է հանգեցնել սուր խտրականության, հատկապես այն իրավիճակներում, որտեղ ռեսուրսները սահմանափակ են: Թեև առավել տարածված է աղջիկ երեխաներին անտեսելը, որոշ դեպքերում որդու նախապատվությունը կարող է հանգեցնել սեռով պայմանավորված հղիության ընդհատման կամ իգական սեռի մանկասպանության:

Ռեսուրսների, հնարավորությունների և ծառայությունների մերժում՝ տնտեսական ռեսուրսների/ակտիվների կամ կենսապահովման հնարավորությունների, կրթության, առողջապահության կամ այլ սոցիալական ծառայությունների օրինական հասանելիության մերժում: Դրա օրինակներից են այրուն զրկելը ժառանգություն ստանալուց, զուգընկերոջ կամ ընտանիքի անդամի կողմից բռնությամբ վերցրած եկամուտը, կնոջը հակաբեղմնավորիչ միջոցներ օգտագործելն արգելելը, աղջկան դպրոց հաճախելն արգելելը և այլն: Դրա մեջ չեն մտնում աղքատության մասին հաղորդումները: Տնտեսական չարաշահումները ներառված են այս կատեգորիայի մեջ: Կալանքի որոշ ասպեկտներ ևս կարող են դիտարկվել այս հասկացության տակ:

Սեռական բռնություն հակամարտությունների ժամանակ (ՍԲՀ)՝ հակամարտության ժամանակ սեռական բռնությունը վերաբերում է բռնաբարությանը, սեռական ստրկությանը, հարկադիր մարմնավաճառությանը, հարկադիր հղիությանը, հղիության հարկադիր ընդհատմանը, հարկադիր ստերջացմանը, հարկադիր ամուսնությանը և կանանց, տղամարդկանց, աղջիկների կամ տղաների նկատմամբ իրականացվող նույնական ծանրության սեռական բռնության ցանկացած այլ ձևի, որն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված է հակամարտության հետ: Այս կապը կարող է ակնհայտորեն դրսևորվել հանցագործի բնութագրում, որը հաճախ կապված է որևէ պետության կամ ոչ պետական զինված խմբավորման հետ, ներառյալ՝ ՄԱԿ-ի կողմից որպես ահաբեկչական խմբավորումներ ճանաչվածները. զոհի բնութագրում, որը հաճախ հանդիսանում է հալածվող քաղաքական, էթնիկ կամ կրոնական փոքրամասնության իրական կամ ենթադրյալ անդամ, կամ թիրախավորված է իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման կամ սեռի հիման վրա:

Սեռական շահագործման և չարաշահման կանխարգելում (ՍՇՉ)՝ ինչպես ընդգծվում է ՄԱԿ–ի Գլխավոր քարտուղարի «Սեռական շահագործումից և սեռական չարաշահումից պաշտպանության հատուկ միջոցների մասին» տեղեկագրում (ST/SGB/2003/13), ՍՇՉԿ-ն հատկապես վերաբերում է մարդասիրական օգնության, զարգացման և խաղաղապահ ոլորտների, ինչպես նաև տուժած բնակչությանն օգնություն տրամադրելու մեջ ներգրավված դերակատարներին՝ կանխելու ՄԱԿ-ի, ՀԿ-ների և միջկառավարական (ՄԿԿ) կազմակերպությունների աշխատակիցների կողմից իրականացվող սեռական շահագործման և չարաշահման դեպքերը, նման դեպքերի հաղորդման գաղտնի մեխանիզմների ստեղծմանը, իսկ միջադեպեր տեղի ունենալու պարագայում՝ անվտանգ և էթիկական գործողությունների՝ հնարավորինս արագ գործարկմանը:

Սեռական ոտնձգություն՝ առանց համաձայնության սեռական շփման ցանկացած ձև, որը չի հանգեցնում ներթափանցման կամ չի ներառում այն: Դրա օրինակներից են բռնաբարության փորձը, ինչպես նաև անցանկալի համբույրը, շոյելը կամ սեռական օրգաններին և հետույքին դիպչելը: Այն չի ներառում բռնաբարությունը, այսինքն՝ այն դեպքը, երբ ներթափանցում է տեղի ունեցել:

Սեռական շահագործում և չարաշահում՝ «Սեռական շահագործում» եզրույթը նշանակում է խոցելի իրավիճակի, անհավասար ուժի և իշխանության կամ վստահության ցանկացած փաստացի չարաշահում կամ չարաշահման փորձ՝ արված սեռական նպատակներով՝ ներառելով սեռական շահագործումից դրամական, սոցիալական կամ քաղաքական շահույթ ստանալը, բայց չսահմանափակվելով դրանցով: Այս հասկացության տակ կարող են նաև դիտարկվել հարկադիր և/կամ պարտադրված մարմնավաճառության որոշ տեսակներ:

«Սեռական բռնություն» տերմինը նշանակում է սեռական բնույթի փաստացի ֆիզիկական հարձակում կամ դրա սպառնալիք՝ լինի դա ուժի միջոցով, թե անհավասարության կամ պարտադրանքի պայմաններում:

Սեռական ոտնձգություն՝ անցանկալի սեռական սիրահետումներ, սեռական բնույթի ծառայությունների խնդրանքներ և սեռական բնույթ ունեցող այլ վերբալ կամ ֆիզիկական վարք:

Սեռական բռնություն՝ ցանկացած սեռական գործողություն, սեռական գործողության փորձ, անցանկալի սեռական մեկնաբանություն կամ սիրահետում, կամ անձի սեքսուալությունը թիրախավորող գործողություններ՝ բռնության, վնասելու սպառնալիքի կամ ֆիզիկական ուժի կիրառմամբ, որ նախաձեռնվում է ցանկացած անձի կողմից՝ անկախ տուժողի հետ ունեցած հարաբերություններից և ցանկացած միջավայրում՝ ներառյալ տանը կամ աշխատավայրում, բայց չսահմանափակվելով այդ վայրերով: Սեռական բռնությունը տարբեր դրսևորումներ ունի, այդ թվում՝ բռնաբարություն, սեռական ստրկություն և/կամ թրաֆիքինգ, հարկադիր հղիություն, սեռական ոտնձգություն, սեռական շահագործում և/կամ չարաշահում և հղիության հարկադիր ընդհատում:

Վարքագծային փոփոխությանը միտված ծրագրեր՝ վարքագծային փոփոխությանը միտված գենդերային հիմքով բռնության ծրագիրը հիմնված է այն ըմբռնման վրա, որ գենդերային հիմքով բռնությունը հայտ է գալիս ավանդական վնասակար գենդերային նորմերի և գենդերային ինքնության ընկալումների պատճառով: Այն նպատակ ունի լուծել գենդերային հիմքով բռնության խորքային պատճառները համայնքներում վարքագծի փոփոխությանը միտված գործընթացների կազմակերպման միջոցով, որոնք ուղղված են գենդերային հիմքով բռնությանը հանգեցնող վերաբերմունքի, գիտելիքների, համոզմունքների և գործելակերպի վերափոխմանը: Թեև նման միջամտությունները նպատակ ունեն փոխակերպել վնասակար նորմերը և վարքագծերը, դրանք նաև նպաստում են առողջ, անվտանգ և արդարացի նորմերի ու վարքագծերի տարածմանը:

Վերապրողակենտրոն մոտեցում՝ մոտեցում, որի նպատակն է ստեղծել աջակցող միջավայր, որտեղ կհարգվեն յուրաքանչյուր բռնություն վերապրածի իրավունքները, և որտեղ անձին արժանապատվորեն և հարգանքով կվերաբերվեն: Նման մոտեցումը վերապրածի կամ գենդերային հիմքով բռնության վտանգին ենթակա կանանց և աղջիկների իրավունքները, ցանկությունները, կարիքները, անվտանգությունը, արժանապատվությունը և բարեկեցությունը դիտարկում է ծրագրերի ձևավորման, մշակման և իրականացման հիմքում: Մոտեցումն օգնում է նպաստել վերապրածների վերականգնմանը և ամրապնդել նրանց կարիքներն ու ցանկությունները բացահայտելու և արտահայտելու կարողությունը. այն նաև ուժեղացնում է հնարավոր գործողություններ ձեռնարկելու վերաբերյալ որոշումներ կայացնելու՝ անձի կարողությունը:

Տեղահանում՝ եզրույթն ընդհանուր առմամբ նկարագրում է մարդկանց հարկադիր կամ ոչ կամավոր տեղաշարժը կամ բռնի միգրացիան մի վայրից մյուսը: Այն բնորոշում է այն անձանց տեղաշարժը, որոնք հարկադրված կամ պարտավորված են եղել փախչել կամ լքել իրենց տները կամ բնակության ավանդական վայրերը, մասնավորապես զինված բախումների, բռնության ընդհանուր դրսևորումներ պարունակող իրավիճակների, մարդու իրավունքների խախտումների հետևանքով, բնական կամ մարդածին աղետներից կամ դրանց հետևանքներից խուսափելու նպատակով:

Տնտեսական բռնություն՝ չարաշահման դրսևորում, երբ չարաշահողները վերահսկում են անձանց ֆինանսները՝ թույլ չտալով նրանց ունենալ ռեսուրսային հասանելիություն, աշխատել կամ պահպանել վերահսկողությունն իրենց եկամուտների նկատմամբ, հասնել ինքնաբավության և ձեռք բերել ֆինանսական անկախություն:

Փախստական՝ անձ, ում կարգավիճակը համապատասխանում է փախստականի սահմանման ներքո նշված չափանիշներին՝ որպես մարդ, ով չի կարող կամ չի ցանկանում վերադառնալ իր ծագման երկիր՝ ռասայական, կրոնական, ազգային պատկանելության, որոշակի սոցիալական խմբի անդամության, կամ քաղաքական կարծիք հայտնելու հետևանքով հետապնդվելու հիմնավոր վախի պատճառով: Անձ, ով գտնվում է [իր] ազգության երկրից դուրս և ի վիճակի չէ կամ, նշված վախերի հետևանքով, չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից:

Ֆիզիկական բռնություն՝ ֆիզիկական բռնության դրսևորում, որը սեռական բնույթ չի կրում: Օրինակներից են հարվածելը, ապտակելը, խեղդելը, կտրելը, հրելը, այրելը, կրակելը կամ ցանկացած զենք օգտագործելը, հարձակումները կամ ցանկացած այլ գործողություն, որը պատճառում է ցավ, անհարմարություն կամ վնասվածք:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Bryman, Alan (2012), Social Research Methods, Fourth edition, Oxford University Press

Columbia University and International Rescue Committee (2017), A toolkit for Integrating Menstrual Hygiene Management (MHM) into Humanitarian Response: Full Guide, available at https://www.publichealth.columbia.edu/file/2477/download?token=lRG16zzR

Crenshaw, Kimberle (1991), “Mapping the margins: Intersectionality, identity politics, and the violence against women of Color”, Stanford Law Review, 43, 1241-1299.

GBV AoR Helpdesk (2019), “Research, Evidence and Learning Digest – Intimate Partner Violence (IPV) in Emergencies”, available at https://gbvaor.net/node/546

GBV Sub Sector Armenia (2023), GBV Sub-Sector Strategy and Work Plan (October 2023 – March 2024), available at https://drive.google.com/file/d/1ZmWtk33vXXx7BH8xqY7RBncL56FIDTXj/view?usp=sharing

Gender-based Violence Information Management System (GBVIMS) Steering Committee (2017), Interagency Gender-Based Violence Case Management Guidelines: Providing Care and Case Management Services to Gender-Based Violence Survivors in Humanitarian Settings, available at https://www.gbvims.com/wp/wp-content/uploads/Interagency-GBV-Case-Management-Guidelines_Final_2017.pdf

Holliday, Adrian (2007), Doing and Writing Qualitative Research, Second Edition, Sage Publications

Human Rights Defender of Republic of Armenia (2023), “Preliminary ad hoc Report on Results of the Fact-Finding Mission from Sept 24 to Sept 2023”, available at https://www.ombuds.am/images/files/a35f939de3e1ce0aebb9a4248f7a5868.pdf

Imkaan, UN Women and European Union (2019), “The Value of Intersectionality in understanding Violence Against Women and Girls”, available at https://eca.unwomen.org/sites/default/files/Field%20Office%20ECA/Attachments/Publications/2019/10/The%20value%20of%20intersectionality%20in%20understanding%20violence%20against%20women%20and%20girls.pdf

Inter-Agency Network for Education in Emergencies (2021), “Mind the Gap: The state of Girl’s education in Crisis and Conflict”, available at https://inee.org/sites/default/files/resources/INEE%20Mind%20the%20Gap%20Report%20v2.0%20LowRes.pdf

Inter-Agency Standing Committee (IASC) (2015), Guidelines for Integrating Gender-Based Violence Interventions in Humanitarian Action: Reducing Risk, Promoting Resilience and Aiding Recovery, available at

https://www.ungei.org/sites/default/files/IASC-Gender-based-Violence-Guidelines-2015-eng.pdf

International Rescue Committee (2015), "Private Violence, Public Concern: Intimate Partner Violence In Humanitarian Settings", available at https://www.rescue.org/sites/default/files/document/564/ircpvpcfinalen.pdfThe Office of the Special Representative of the Secretary General on Sexual Violence in Conflict (2023), "Conflict Related Sexual Violence: Report of the United Nation Secretary-General", https://www.un.org/sexualviolenceinconflict/wp-content/uploads/2023/07/SG-REPORT-2023SPREAD-1.pdf

UN Women (2020), "Sexual Harassment in the Informal Economy: Farmworkers and Domestic Workers", available at https://www.unwomen.org/sites/default/files/Headquarters/Attachments/Sections/Library/Publications/2020/Discussion-paper-Sexual-harassment-in-the-informal-economy-en.pdf

UN Women and UNFPA (2022), "Baseline Study on Stereotypes in the Countries of the Eastern Partnership", available at https://eeca.unfpa.org/sites/default/files/pub-pdf/eu4ge_baseline_study_0.pdf

UNHCR (2023), "Armenia Rapid Needs Assessment Report", available at https://reliefweb.int/attachments/683d0181-e283-4f07-8ae8-5e65a276b62e/Rapid%20Needs%20Assessment%203%20November%202023.pdf

UNHCR (2023), Armenia Refugee Response Plan October 2023 – March 2024, available at https://data.unhcr.org/en/documents/details/103868?_gl=1*4uybl6*_rup_ga*NzgxNzAwNTAwLjE3MDMyNDA0ODk.*_rup_ga_EVDQTJ4LMY*MTcwMzI0MDUyNy4xLjEuMTcwMzI0MTM2NS4wLjAuMA

UNICEF (2023), "Two-thirds of refugee children in Armenia enrolled in school, efforts must now focus on expanding access to education for all children", available at https://www.unicef.org/press-releases/two-thirds-refugee-children-armenia-enrolled-school-efforts-must-now-focus-expanding

Vermishyan, Harutyun, Smbatyan, Hayk, Arakelyan, Mariam, Sahakyan, Julya, and Bagiyan, Armine (2023), "Policy Brief: Urban Integration Experiences of the Displaced from Nagorno-Karabakh". At https://rwi.lu.se/wp-content/uploads/2023/04/UrbanIntergrationWeb.pdf

Westendorf, Jasmine-Kim and Louise Searle (2017), "Sexual exploitation and abuse in peace operations: trends, policy responses and future directions", International Affairs, vol. 93, no. 2, 365-387, available at https://doi.org/10.1093/ia/iix001

WFP (2023), "Context analysis and the possible implications of the refugee influx to Armenia in September 2023", available at https://reliefweb.int/attachments/e67bb31e-aade-4a5f-b802-6fe5cd8cb20f/Context%20Analysis%20and%20the%20Implications%20of%20the%20influx%20of%20refugees

%20to%20Armenia.pdf,

WHO (2007) “WHO ethical and safety recommendations for researching, documenting and monitoring sexual violence in emergencies”, available at https://iris.who.int/bitstream/handle/10665/43709/9789241595681_eng.pdf?sequence=1

World Bank Gender Global Team (2023), “Gendered Impacts form Climate Change: Evidence from Weather Shocks”, available at https://documents1.worldbank.org/curated/en/099342305102324997/pdf/IDU0ba259bd2039ca04fa20b87a0893bb487e014.pdf

Wuest, Judy (1995), “Feminist Grounded Theory: An exploration of congruency and tensions between two traditions in knowledge discovery”, in Qualitative Health Research, 5(1): 125-137.

Լուսանկարները՝ Ասպրամ Մանուկյան, ՄԱԲՀ

2024